ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 25-Ն «30» ապրիլի 2021

## 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ (1-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով հաստատել «Կերպարվեստ» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը (1-12-րդ դասարաններ)՝ համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/

30.04.2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2021 թվականի ապրիլի -ի N հրամանի

«ԱՐՎԵՍՏ-ԱՐՀԵՍՏ»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻ

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

(1-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

**«ԱՐՎԵՍՏ-ԱՐՀԵՍՏ»**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

«Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառի առարկայախմբի բովանդակային տիրույթն ապահովում է գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության միջոցով անձի մտավոր և ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանն ուղղված շարունակական գործընթաց, որն իրականացվում է միջառարկայական կապերի ակտիվ ներգրավմամբ, արվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելու, ինքնուրույն գեղարվեստական-ստեղծագործական գործունեություն ծավալելու միջոցով:

Դասընթացի նպատակն է ժամանակակից 12-ամյա միջնակարգ կրթության շրջանակներում և այլընտրանքային հայեցակարգերով գործող դպրոցների առկայության պայմաններում ապահովել արվեստի հավասարապես հասանելի, ներառական և որակյալ ուսուցում, Հանրակրթության պետական չափորոշիչով (ՀՊՉ) սահմանված կարողունակություններին համապատասխան՝ ուսումնական միատեսակ վերջնական արդյունք՝ սովորողների՝ ստեղծագործական գաղափարների մշակման, ստեղծագործական գործունեության, դրա մատուցման, արվեստի ստեղծագործություններին գրագետ արձագանքելու և դրանք իմաստավորելու միջոցով:

***Հանրակրթական դպրոցում արվեստի ուսումնական նպատակները.***

- Զարգացնել երևակայությունը, քննական, ստեղծագործական, պատկերավոր մտածողությունը, դիտողականությունը, ուշադրությունը, նպատակասլացությունը, աշխատասիրությունը, դյուրազգացությունը, հանդուրժողականությունը:
- Ձևավորել դատողություններ, վերլուծություններ և որոշումներ կայացնելու, անհրաժեշտության դեպքում նաև հակազդելու կարողություններ:
- Ձևավորել գեղեցիկը և ներդաշնակը տեսնելու, զգալու, գնահատելու, պահպանելու և արարելու ցանկություն և կարողություն:
- Ձևավորել ակտիվ ունկնդիր, համերգասրահներ, թանգարաններ, պատկերասրահներ այցելելու ցանկություն և պահանջ:
- Սովորեցնել գործնականում կիրառել գեղարվեստական գործունեության ընթացքում ձեռք բերված գիտելիքները և կարողությունները:
- Ձևավորել ազգային, համամարդկային, սոցիալական, խմբային, անհատական և անձնական խնդիրները ստեղծագործաբար լուծելու կարողություններ:

- Ձևավորել մշակութային արժեքների պահպանման, բազմացման, փոխանցման գործում սեփական մասնակցությունն ունենալու պահանջմունք:
- Ստեղծել մշակույթի և արվեստի ոլորտում մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմաններ:
- Պահպանել և զարգացնել մշակույթի և արվեստի բնագավառներում Հայաստանում ձևավոր-ված գեղարվեստական կրթության ավանդույթները, համապատասխանեցնել նոր տնտե-սական հարաբերություններին, ժամանակակից պահանջներին և միջազգային կրթական չա-փորոշիչներին:

***Դասընթացի խնդիրները***

- Ընդլայնել երեխաների աշխարհայացքը:
- Զարգացնել գեղագիտական և գեղարվեստական ընկալունակությունը:
- Հաղորդակից դարձնել ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժո-ղովրդական արվեստի նմուշներին:
- Սովորեցնել աշխատել նյութերով:

***Հիմնական սկզբունքները***

- Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության անհրաժեշտություն բոլոր սովորողների համար:
- Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության լավագույն ավան-դույթների պահպանում և արդիականացում:
- Յուրաքանչյուր աշակերտի համար մատչելիության և հասանելիության ապահովում:
- Սովորողների ակտիվ և ազատ ստեղծագործական գործունեության խրախուսում:
- Դասընթացի ուսումնասիրման ընթացքում «գիտելիքի ձեռքբերում-գործնական կիրառում-արժեքային համակարգի և վերաբերմունքի ձևավորում» շղթայի անքակտելիության ապա-հովում:

Հանրակրթական դպրոցում «Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառը ներկայացնող ծրագրերը կառուցվում են հիմնական գաղափարների հենքի վրա, պարուրաձև սկզբունքով: Առարկայական (ինտեգրված) ծրագրերն ապահովում են արդյունավետ ներառարկայական և միջառարկայական կապեր՝ նպաստելով սովորողների ընդհանրական աշխարհայացքի ձևա-վորմանը:

***Ուսումնական գործունեության ձևերը***

- Արվեստի տարբեր գործերի ուսումնասիրում, երաժշտության ունկնդրում, կերպարվեստի ստեղծագործությունների դիտում: Հանդիպումներ արվեստագետների հետ:
- Բանավեճեր, քննարկումներ, ինքնավերլուծություն, զրույցներ:
- Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր, մրցույթներ, հանդեսներ, ցուցադրություններ և ներկայացումներ:
- Նյութերի, միջոցների և տարբեր մոտեցումների փորձարկումներ:
- Հետազոտություններ, տարբեր լրատվամիջոցների և տեղեկատվության աղբյուրների ուսումնասիրում:
- Անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքներ և նախագծեր:
- Ներկայացումներ և մոդելավորումներ, գծապատկերների և սխեմաների ստեղծում, ուսուցողական և գեղարվեստական ֆիլմերի դիտումներ, քննարկում:
- Մասնագիտական եզրույթների, արվեստագիտական բառապաշարի և լեզվի գործածում, գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում:
- Տեղեկույթ ու փաստարկներ որոնելու նպատակով մեդիագրագիտության հմտությունների կիրառում, համապատասխան տեղեկատվության և ուսումնասիրման նյութի տեղեկացված ընտրություն:
- Աշխատանքային թերթիկներ և ռուբրիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով, թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ:

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արվեստը հոգևոր գործունեության առանցքային տարրն է, աշխարհի զգացական-գործնական յուրացման յուրահատուկ տեսակ, որի առաջացումը կապված է մարդկային հասարակության զարգացման հնագույն շրջանների հետ: Արվեստը նաև իրականության գեղագիտական-գեղարվեստական վերարտադրություն է՝ իր բազմաթիվ տեսակներով ու դրսևորումներով: Այն մարդկային կյանքի մշտական ուղեկիցն է, գործունեության արժեքավոր դրսևորումներից մեկը:

Արվեստի միջոցով կարելի է ճանաչել և հասկանալ մարդկության անցած ճանապարհը՝ սկսած նախապատմական ժամանակներից: Զարդանախշի, կենցաղային իրերի, երգվող մեղեդիների, ծիսական պարերի, դրամատիկ պատմությունների տեսքով ձևավորված արվեստը

հասել է մինչև մեր օրեր: Դրանք հսկայական տեղեկատվություն են պարունակում, շատ դեպքերում՝ նաև դեռևս չվերծանված:

Դժվար է պատկերացնել ժամանակակից աշխարհն առանց երաժշտության, նորաձևության, թատրոնի, կինոյի, գրաֆիկական դիզայնի, կերպարվեստի, պարի և այլն: Արվեստի տարբեր տեսակների դրսևումներն այնքան ներկա են մեր կյանքում, որ դրանց ուսումնասիրությունը կրթության կարևոր բաղադրիչ է հանդիսանում:

Արվեստի դասավանդումն իրականացվում է հայ ազգային մշակույթի հիմքի վրա: Այն նպաստում է սովորողի ինքնաճանաչմանը և ինքնարտահայտմանը, նրա մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, քննական, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, վարպետության, ստեղծարարության, կատարողական առանձնահատկություններին միտված ուսումնական գործունեության, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը և կյանքի, շրջապատող աշխարհի, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը:

Հանրակրթական դպրոցում «Արվեստ-արհեստ» ուսումնական բնագավառը ներկայացված է երաժշտություն, կերպարվեստ, պար, թատրոն և դեկորատիվ-կիրառական արվեստ (ԴԿԱ) ուսումնական առարկաներով տարրական, միջին և ավագ դպրոցներում, առանձին կամ ինտեգրված դասընթացով:

Չնայած արվեստի այս տեսակները փոխկապակցված են և շատ հաճախ ներկայանում են ինտեգրված, դրանցից յուրաքանչյուրը դրսևորվում է ստեղծագործական գործունեության իրեն հատուկ մոտեցումներով և կարող է ուսումնասիրվել առանձին: Յուրաքանչյուր առարկա ունի մասնագիտական իր եզրույթները, ուսումնասիրման իր շրջանակը, ձևերը և մեթոդները, որոնք ձևավորում են գիտելիքներ և հմտություններ, յուրահատուկ աշխարհընկալում:

**ՊԱՐ** - Սովորողներն ուսումնասիրում են մարմնի շարժումը՝ որպես գաղափարի փոխանցման և հաղորդակցության միջոց: Պարային գործունեությունն ընդգրկում է (և չի սահմանափակվում) ազգային, ժողովրդական, պարահանդեսային, ժամանակակից պարեր, խորեոգրաֆիա, կատարում, պարային տարրեր, իմպրովիզացիա, պարային նոտագրություն, պարային բեմադրություն, պարարվեստի պատմություն և արձագանք:

**ԹԱՏՐՈՆ** - Սովորողներն ուսումնասիրում և ներկայացնում են մարմնի լեզուն, շարժումն ու տարածությունը, բեմական խոսքը, ասմունքը, իրական և մտացածին աշխարհը՝ կատարումներին իմաստ հաղորդելով: Հանդես են գալիս որպես կատարող և որպես հանդիսատես: Ստեղծում են դրամա, փորձում, կատարում, ցուցադրում և արձագանքում են:

**ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ** - Սովորողներն ուսումնասիրում և կատարում են տարբեր տարբեր ժանրերի, ոճերի երաժշտություն: Նրանք կատարում, ստեղծում, ներկայացնում, քննում և վերլուծում են ձայնը ժամանակի և տարածության մեջ: Երաժշտական գործունեությունն իրականացվում է երեխայի ակտիվ գեղարվեստական գործունեության միջոցով՝ ունկնդրելու, երաժշտության, երաժիշտների և երաժշտության պատմության վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու միջոցով:

**ԿԵՐՊԱՐՎԵՍՏ** - Սովորողներն ուսումնասիրում են տարբեր մշակույթների, ոճերի և ուղղությունների առանձնահատկությունները, արվեստագետներին, նրանց ստեղծագործական մոտեցումներն ու սկզբունքները: Զբաղվում են կերպարվեստային գործունեությամբ, արվեստի, արհեստների և դիզայնի ուսումնասիրմամբ՝ ձևավորելով գործնական հմտություններ և քննական արձագանք արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ:

**ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ** - Սովորողներն ուսումնասիրում են դեկորատիվ արվեստի և ժողովրդական ստեղծագործության նյութական ու հոգևոր ժառանգությունը: Նրանք ստեղծում, ձևավորում և ներկայացնում են, քննում և վերլուծում են դեկորատիվ-կիրառական արվեստը՝ ըստ գործնական նշանակության, ըստ նյութի (գործվածք, մետաղ, փայտ, խեցի), ըստ կատարման տեխնիկայի (փորագրում, ասեղնագործում, ձուլում, դաջում, դրվագում): Զբաղվում են կենցաղային իրերի (կահույք, սպասք, գործվածք, զգեստ, զարդ) գեղարվեստական ձևավորմամբ և պատրաստմամբ:

«Արվեստ-արհեստ» բնագավառի ինտեգրված դասընթացները հնարավորություն են տալիս հաղորդակցվելու արվեստին ազգային, ավանդական, ժամանակակից և ձևավորվող նոր ուղղությունների տեսանկյունից՝ արդեն ծանոթ միջոցները, նյութերն ու մոտեցումները կիրառելով ուսումնասիրությունների մեջ: Ժամանակակից մարտահրավերները նոր խնդիրներ են առաջադրում ուսումնական բոլոր բնագավառների համար: Արվեստի առարկայախմբի ուսումնական ծրագրերը կառուցված են «ստեղծագործության» շուրջ գիտելիքների, կարողությունների և հմտությունների, վերաբերմունքի, արժեքների ձևավորման, զարգացման և կատարելագործման սկզբունքով, երբ սովորողը հանդես է գալիս որպես ստեղծագործող, հանդիսատես և արվեստաբան:

«Արվեստ-արհեստ» բնագավառի պար, թատրոն, երաժշտություն, կերպարվեստ և ԴԿԱ առարկաների և «Արվեստ» ինտեգրված դասընթացների չափորոշիչով սահմանվել են հիմնական գաղափարներ և ենթագաղափարներ, որոնց համապատասխան՝ յուրաքանչյուր

տարիքային խմբի համար նախատեսվել են չափորոշիչային պահանջներ կամ վերջնարդյունքներ:

Սահմանված են հետևյալ հիմնական գաղափարներն ու ենթագաղափարները (հասկացությունները).

**ՍՏԵՂԾՈՒՄ** - Նոր գեղարվեստական գաղափարների և ստեղծագործությունների ձևակերպում, զարգացում և ավարտ: Իրականացվում է՝

- նյութերի, միջոցների և մոտեցումների, գաղափարների ուսումնասիրման, փորձարկման և հետազոտման,
- մասնագիտական բառապաշարի ձևավորման,
- անվտանգ և ապահով գործունեության,
- արվեստի տվյալ տեսակին բնորոշ տարրերի և սկզբունքների ուսումնասիրման,
- նորարարության և երևակայության վրա հիմնված ստեղծագործական գործունեության միջոցով:

**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ** - Գեղարվեստական ստեղծագործությունների մեկնաբանություն և ներկայացում: Ընտրվում, կատարվում, խմբավորվում, վերանայվում և ցուցադրվում կամ ներկայացվում են աշխատանքները: Դիտվում, վերլուծվում և մեկնաբանվում են արվեստի ստեղծագործությունները:

**ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ (ԸՆԿԱԼՈՒՄ)** - Արվեստի միջոցով իմաստի արտահայտման/հաղորդման գիտակցում, ընկալում և արժևորում: Լինել ակտիվ հանդիսատես, ընկալել, արձագանքել և գնահատել (գրավոր և բանավոր) իր և մյուսների ստեղծագործությունները:

**ԿԱՊԱԿՑՈՒՄ** - Գեղարվեստական գաղափարների և աշխատանքների համադրումը անհատական/մասնավոր իմաստի և արտաքին համատեքստի հետ: Արվեստի ստեղծագործությունների և ստեղծագործական գործունեության համադրումը պատմության տարբեր շրջանների, տեխնոլոգիական տարբեր միջոցների և մոտեցումների, սեփական կենսափորձի և շրջապատող իրականության տեսանկյունից:

<table>
<tr><td colspan="4" align="center">ԱՐՎԵՍՏ-ԱՐՀԵՍՏ ԲՆԱԳԱՎԱՌ<br>ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ԿԵՐՊԱՐՎԵՍՏ, ՊԱՐ, ԹԱՏՐՈՆ, ԴԿԱ</td></tr>
<tr><td>ՍՏԵՂԾՈՒՄ</td><td>ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ</td><td>ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ</td><td>ԿԱՊԱԿՑՈՒՄ</td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| Նոր գեղարվեստականգաղափարների և ստեղծագործությունների ձևակերպում, զարգացում և ավարտ: | Գեղարվեստական ստեղծագործությունների մեկնաբանություն և ներկայացում: | Արվեստի միջոցով իմաստի արտահայտման/հաղորդման ընկալում, գիտակցում և գնահատում: | Գեղարվեստական գաղափարների և աշխատանքների համադրում անհատական/մասնավոր իմաստի և արտաքին համատեքստի հետ: |
| **Նյութ, միջոց, մոտեցումներ** | **Վերանայում և ցուցադրում** | **Քննադատական արձագանք** | **Արվեստ, տեխնոլոգիաներ, գյուտեր** |
| **Տարրեր և սկզբունքներ** | **Մեկնաբանում** | **Գնահատում և ինքնագնահատում** | **Արվեստի պատմություն** |
| **Նորարարություն, երևակայություն** | | | **Արվեստի դերը և նշանակությունը** |

Յուրաքանչյուր գաղափարի համապատասխան վերջնարդյունքները ձևավորում են սովորողի գնահատման չափանիշը:

## ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

*Ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է ուսումնառության և դասավանդման գործընթացների արդյունավետությունը պարզելու և դրանց վրա ներազդելու նպատակով և նպատակաուղղված է չափորոշիչով սահմանված կարողունակությունների ձևավորմանը և զարգացմանը:*

*Առաջադիմության գնահատականն արձանագրում է սովորողի կարողունակության զարգացման աստիճանը՝ ըստ «Արվեստ-արհեստ» բնագավառի պար, թատրոն, երաժշտություն, կերպարվեստ և ԴԿԱ առարկաների և «Արվեստ» ինտեգրված դասընթացների չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերված գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների մակարդակի:*

Գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ) և հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին (ամփոփիչ ատեստավորում):

«Արվեստ-արհեստ» բնագավառի առարկաների և «Արվեստ» ինտեգրված դասընթացների ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով:

Ձևավորող գնահատման դեպքում օգտագործվում են սովորողի առաջընթացը բնութագրող որակումներ, վերլուծություններ և մեկնաբանություններ, որոնք համեմատվում են ՀՊՉ տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրի վերջնարդյունքների հետ:

Գնահատման այս ձևում կարևորվում է հետադարձ կապի առկայությունը, որն իր հերթին ապահովում է կրթական գործընթացի շարունակականությունը:

Առաջադրանքները բնույթով կարող են տարբեր լինել: Հաշվի են առնվում աշակերտների՝ արվեստի հայտնի գործիչների ստեղծագործություններին առնչվող փաստերի իմացությունը, գիտելիքների կիրառումը, տրամաբանական եզրահանգումները, վերլուծությունները, համեմատությունները, ինքնուրույն ստեղծագործական և գեղարվեստական գործունեությունը:

«Արվեստ-արհեստ» բնագավառի դասերի ընթացքում ձևավորող գնահատման նպատակով երաշխավորվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝

- թեմայի բովանդակության ընկալման և ստեղծագործական գործունեության վերաբերյալ բանավոր և գրավոր հարցումներ,
- ինքնուրույն գործնական աշխատանքում նյութերի, միջոցների և մոտեցումների կիրառում, բովանդակության վերլուծություններ, քննարկումներ, զրույցներ,
- ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,
- ուսուցման խմբային աշխատանքի կազմակերպում,
- ցուցահանդեսներ, միջոցառումներ, համերգներ, ելույթներ, ստուգատեսներ և այլն:

1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի կատարվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ որպես տարեկան ամփոփիչ գնահատական՝ կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի: Առաջարկվում է որպես կիսամյակի ամփոփիչ միջոց կիրառել ցուցահանդեսների, միջոցառումների, ստուգատեսների կամ բաց դասերի ձևաչափերը:

Միավորային գնահատումն իրականացվում է որոշակի ժամանակահատվածում ուսումնական նյութի որոշակի ծավալի շրջանակներում սովորողների ձեռքբերումները պարզելու և պաշտոնապես գրանցելու նպատակով: Միավորային գնահատումը սովորաբար իրականացվում է առանձին թեմատիկ միավորի ուսուցման, քառորդի կամ կիսամյակի վերջում:

Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից՝ գնահատման համար սահմանելով 10 միավորային սանդղակ:

10 միավորային սանդղակում որևէ թիվ չի համարվում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ուսումնական հաջողությունները և սկսվում 1 միավորից:

Սովորողների նախագծային աշխատանքները գնահատվում են կիսամյակի ավարտին կամ տարեվերջին: 7-12-րդ դասարաններում սովորողների միավորային գնահատականները ձևավորվում են անհատական կամ խմբային ուսումնական նախագծերի հիման վրա: Արվեստի դպրոցներում կամ ստեղծագործական խմբակներում սովորողների ուսումնառությունը հավելյալ նիշ է բերում միավորային սանդղակին՝ ապահովելով հաջողության ավելի բարձր մակարդակ:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ (Կ) ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐ

| | | | |
|---|---|---|---|
| Նոր գեղարվեստական գաղափարների և ստեղծագործությունների ձևակերպում, զարգացում և ավարտ | **ՍՏԵՂԾՈՒՄ (Ս)** | **Նյութեր, միջոցներ և մոտեցումներ (ՆՄ)** | *1. Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար /2D, 3D:* |
| | | | *2. Ձևավորել համապատասխան բառապաշար:* |
| | | | *3. Հոգ տանել նյութերի և գործիքների մասին, պահպանել անվտանգության կանոնները:* |
| | | **Դիզայնի տարրեր և սկզբունքներ (ԴՏ)** | *1. Ցուցադրել գիտելիքներ կերպարվեստի և դիզայնի տարրերի վերաբերյալ* |
| | | | *2. Կիրառել դիզայնի սկզբունքները գործնական աշխատանքներում:* |
| | | **Նորարարություն, երևակայություն (ՆԵ)** | *1. Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:* |
| | | | *2. Ստեղծել 2D և 3D վերացական արվեստի աշխատանքներ:* |
| | | | *3. 2D և 3D երևակայական աշխատանքներ:* |

| | | | |
|---|---|---|---|
| Գեղարվեստական ստեղծագործությունների մեկնաբանություն և ներկայացում | **ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ (Ն)** | **Վերանայում և ցուցադրում (ՎՑ)** | *1. Ընտրել և խմբավորել աշխատանքները, ստեղծել պորտֆոլիո:* |
| | | | *2. Խմբով աշխատել ցուցադրություններ կազմակերպելու նպատակով:* |
| | | | *3. Պատրաստել նախագծեր և առավել արդյունավետ ցուցադրել դրանք:* |
| | | **Մեկնաբանում** | *1. Ընտրել և քննարկել աշխատանքները ցուցադրության համար:* |

| | | | |
|---|---|---|---|
| | | (Մ) | 2. Նշել այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել են ցուցադրություն կազմակերպելիս: |

| | | | |
|---|---|---|---|
| Արվեստի միջոցով իմաստի արտահայտման /փոխանցման ընկալում, գիտակցում և գնահատում | **ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ (ԸՆԿԱԼՈՒՄ) (Ա)** | **Քննադատական արձագանք (ՔԱ)** | 1. Քննարկել արվեստի ստեղծագործությունը: |
| | | | 2. Դասակարգել կերպարվեստի տեսակները, ժանրերը, ոճերը: |
| | | | 3. Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: |
| | | **Գնահատում և ինքնագնահատում (Գ)** | 1. Ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ: |
| | | | 2. Ցույց տալ աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը: |

| | | | |
|---|---|---|---|
| Գեղարվեստական գաղափարների և աշխատանքների համադրումն անհատա-կան/մասնավոր իմաստի և արտա-քին համատեքստի հետ | **ԿԱՊԱԿՑՈՒՄ (Կ)** | **Արվեստ, տեխնոլոգիաներ և գյուտեր (ԱՏ)** | 1. Սեփական աշխատանքները ներկայացնել տեխնոլոգիական նոր մոտեցումներով: |
| | | | 2. Վերլուծել, թե ինչ նյութեր և միջոցներ են օգտագործում նկարիչները: |
| | | **Արվեստի պատմություն (ԱՊ)** | 1. Ներկայացնել գիտելիքներ արվեստի պատմությունից և տեսությունից: |
| | | | 2. Ներկայացնել հայկական կերպարվեստի հիմնական ուղղությունները: |
| | | **Արվեստի դերը և** | 1. Ներկայացնել արվեստի ստեղծագործությունների |

| | | | |
|---|---|---|---|
| | | **նշանակությունը**<br><br>**(ԱԴ)** | *ազդեցությունը:* |
| | | | *2. Իմանալ մշակութային հասպապրությունների նշանակությունը:* |
| | | | *3. Ներկայացնել արվեստի դերը առօրյայում:* |

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻ

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ

(1-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Իր յուրահատկության, բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ կերպարվեստը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը:

Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում են՝

- իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը,
- վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը,
- ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը,
- գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը,
- ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասընթացն իրականացվում է երկու հիմնական բաժիններով՝ ստեղծագործական գործունեություն և արվեստի միջոցով իրականության ընկալում:

**Գեղարվեստական գործունեություն** - Գծանկար, գունանկար, ծեփ, հորինվածք, տպագրություն/դաջվածք, դեկորատիվ գործունեություն, ավարտուն աշխատանքներ և ցուցադրություններ:

Գաղափարների հավաքագրում, ստեղծագործական աշխատանքների կատարման պայմանների, մոտեցումների և միջոցների ուսումնասիրություն, անհրաժեշտ նյութեր և գործիքներ:

Կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների ուսումնասիրություն, բնօրինակից, հիշողությամբ կամ երևակայությամբ տարբեր առարկաների պատկերում: Թեմատիկ պատկերում. իրականության, բնության որոշ երևույթների, կենցաղային թեմաներով սովորողների տպավորությունների իրատեսական, վերացական, երևակայական (2D, 3D) հաղորդում: Ստեղծագործական աշխատանքների վերանայում, ավարտ և ցուցադրություն:

**Արվեստի միջոցով իրականության ընկալում** - Ստեղծագործական աշխատանքների մեկնաբանություն, վերլուծություն, քննարկում, գնահատում և արժևորում: Արվեստի ստեղծագործությունների նշանակության, նպատակների, իմաստի ուսումնասիրություն:

Արվեստագետների  դերը հասարակության մեջ: Տարբեր ժամանակաշրջանների արվեստի տեսակների, ժանրերի, ձևերի, ոճերի և ուղղությունների ուսումնասիրություն: Տեխնոլոգիական նորարարությունների դերն արվեստի բնագավառում: Արվեստագիտական տարբեր մասնագիտություններ: Արվեստի ուսումնասիրումը և մյուս առարկայական բնագավառները: Արվեստի կապը գիտության մյուս ճյուղերի հետ:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կերպարվեստի ուսումնական գործունեությունն իրականացվում է խառը ուսուցման ձևաչափով՝ ելնելով թեմայի բովանդակությունից, առաջարկվող գործունեության ձևերի բնույթից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, ուսումնասիրվող նյութի, քննարկվող հիմնախնդրի  առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից: Առաջարկվում է կիրառել դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները համադասարանական, անհատական, զույգերով և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսուցումն իրականացվելու է համապատասխան նկարակալներով, դազգահներով, նվագարաններով, տեխնիկապես հագեցած արվեստի սենյակներում կամ դպրոցական արվեստանոցներում: Ուսումնական գործընթացում կարող են ընտրվել ուսումնական գործունեության այլընտրանքային տեսակներ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրերում առարկայի բովանդակային գծերը տարածվում են միասնաբար և փոխկապակցված, ամբողջական թեմատիկ միավորների միջոցով, պահպանելով բովանդակության պարուրաձև սկզբունքը:

Ուսումնասիրվող յուրաքանչյուր միավորի համար նշված են՝

- համապատասխանությունն առարկայական վերջնարդյունքին (նաև ինտեգրված),
- տվյալ թեմայի ուսումնասիրության արդյունքում ակնկալվող վերջնարդյունքները,
- նպատակը, ուղղորդող հարցադրումները,
- թեմայի բովանդակային բաղադրիչը, դրա հետ առնչվող գործունեության ձևերը,
- խաչվող ընդհանրական հասկացությունները, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքներն աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում,
- առաջարկվող թեմատիկան, որի շուրջ կազմակերպվում են ստեղծագործական գործընթացները,
- միջառարկայական կապերը, որոնք ապահովելու են տվյալ միավորի ուսումնասիրության ամբողջականությունը,
- համապատասխանությունը հանրակրթության պետական չափորոշչին:
- Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ:

## ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Յուրաքանչյուր տարիքային խմբի համար նախատեսված ստեղծագործական գործընթացները ձևավորված են չափորոշչով սահմանված և կարողունակություններին միտված՝ սովորողներին ներկայացվող ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հիման վրա: Մյուս վերջնարդյունքներին կերպարվեստի դասընթացն առնչվում է անուղղակիորեն:

Հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական, ինչպես նաև կոգնիտիվ և ստեղծագործական մտածողության անհատական առանձնահատկությունները՝ առաջարկում ենք առարկայական ծրագրերը կառուցել ոչ թե տարեկան, այլ երկամյա դասընթացների

ուսումնառության վերջնարդյունքների հիմքով: Այս ձևաչափը հնարավորություն է տալիս ուսումնասիրվող բովանդակությունը յուրացնել առավել ամբողջական՝ սովորողներին չկաշկանդելով ստեղծագործական գործունեության պարտադրանքով:

Այսպիսով, կերպարվեստ առարկայի շրջանակներում իրականացվող ստեղծագործական գործունեության համար մշակված վերջնարդյունքները ներկայացված են հանրակրթական դպրոցի երեք աստիճաններում՝ տարրական, հիմնական (միջին) և միջնակարգ (ավագ), և ընդհանրական են 1-2-րդ, 3-4-րդ, 5-6-րդ, 7-8-րդ և 10-12-րդ դասարաններում: 9-րդ դասարանը՝ որպես հիմնական (միջին) դպրոցի ավարտական փուլ, ներկայացված է առանձին վերջնարդյունքներովև ծրագրով:

**Առարկայի ուսուցման չափորոշչային ընդհանրական վերջնարդյունքների ծածկագրումը**




**Խաչվող հասկացություններ**

Աշխարհի ճանաչողության միասնական մեթոդաբանական հիմքերի ապահովման նպատակով առարկայի բովանդակությունը կառուցվում է նաև մի շարք ընդհանրական խաչվող

հասկացությունների հենքի վրա: Դրանք առանցքային հասկացություններ են, որոնք օգնելու են սովորողներին միավորելու, փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:

- Օրինաչափություններ:
- Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում
- Մասշտաբ, համամասնություն և քանակ
- Համակարգեր և մոդելներ
- Կառուցվածք և գործառույթ
- Կայունություն և փոփոխություն
- Փոփոխություններ և զարգացում
- Գիտատեխնիկական նորարարություն
- Անհատներ և հարաբերություններ
- Ժամանակ և տարածություն
- Անհատական և մշակութային արժեհամակարգ

**Համապատասխանությունը հանրակրթության պետական չափորոշչին**

Առարկայական ծրագրերի բոլոր բաժիններում կարողունակությունների ձևավորման ակնկալվող վերջնարդյունքները նշված են ծածկագրերով՝ հանրակրթական տարրական (Տ), հիմնական (Հ) և միջնակարգ (Մ) ծրագրի և շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հաջորդական թվին համապատասխան:

## ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

| **ԿԵՐՊԱՐՎԵՍՏ**<br>**Սովորողները հետազոտում, ստեղծում, ներկայացնում, վերլուծում, քննարկում և կապակցում են կերպարվեստային գաղափարներ և ստեղծագործություններ** | | | | |
|---|---|---|---|---|
| | | **Տարրական դպրոց** | **Հիմնական (միջին) դպրոց** | **Միջնակարգ (ավագ) դպրոց** |
| **ՍՏԵՂԾՈՒՄ**<br><br>Նոր գեղարվեստա-կանգաղա-փարների և ստեղծագոր-ծությունների ձևակերպում, զարգացում և ավարտ | **Նյութեր, միջոցներ և մոտեցումներ** | *Փորձարկել պարբեր նյութեր հեպաքրքիր աշխապանքներ սպանալու նպապակով:*<br>*Սպեղծել պապկերներ, կոլաժներ, ծավալային աշխապանքներ, նաև՝ թափոններից:*<br>*Փորձարկել պարբեր միջոցներ, գպնել սպեղծագործական աշխապանքներ սպանալու հեպաքրքիր մոպեցումներ (2D, 3D):** | *Օգպագործել պարբեր նյութեր, մոպեցումներ սպեղծագործական աշխապանքներ սպանալու համար (2D, 3D):*<br>*Տարբեր նյութեր և մոպեցումներ կիրառել սպեղծագործական աշխապանքներն ավելի արպահայպիչ դարձնելու համար (2D, 3D)՝ կախված թեմայից և առաջադրանքի բնույթից:*<br>*Սպեղծել պապկերներ, կոլաժներ, ծավալային աշխապանքներ՝ փորձարկելով անծանոթ նյութեր:*<br>*Հեպազոպել նոր նյութեր և միջոցներ սպեղծագործություններին իմասպ հաղորդելու նպապակով:* | *Հեպազոպել պարբեր նյութեր, միջոցներ, գպնել սպեղծագոր-ծական աշխապանքներ սպանալու  նոր մոպեցումներ (2D, 3D 4D), որոնք կարող են ունենալ հասարակական ներգործություն:* |
| | | *Սպեղծել աշխապանքներ՝ ըսպ* | *Պապրասպել արվեսպի եզրույթների* | *Ձևակերպումներում կիրառել* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության:<br>Ձևավորել համապատասխան բառապաշար: | բառարաններ և պատասխաններ կերպարվեստի և դիզայնի տարրերի և սկզբունքների վերաբերյալ:<br>Հետազոտական աշխատանքներում կամ զրույցներում կիրառել համապատասխան բառապաշար: | մասնագիտական բառապաշար և եզրույթներ: |
| | | Կարգավորել և պահպանել աշխատանքային տարածքը:<br>Հոգ տանել նյութերի և գործիքների մասին, պահպանել անվտանգության կանոնները: | Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին, հոգ տանել նյութերի և գործիքների մասին, պահպանել անվտանգության կանոնները:<br>Մեկնաբանել ավանդական և ոչ ավանդական աշխատանքային գործիքների և միջոցների ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա: | Բացատրել ավանդական և ոչ ավանդական աշխատանքային գործիքների և միջոցների ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա, ցուցադրել նյութերի, գործիքների և միջոցների անվտանգ կիրառման հմտություններ: |
| | **Դիզայնի, կերպարվեստի տարրեր և սկզբունքներ** | Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը՝ գիծ, գույն, ձև, համաչափություն, ծավալ, տոն, տարածություն, ռիթմ, միասնականություն, մակերես: | Կատարել աշխատանքներ՝ գծանկար, գեղանկարչություն, քանդակ, կոլաժ, մեդիա, լուսանկար և այլն՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը (հորիզոնի գիծ, լույս ու | Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը (գծանկար, գեղանկարչություն, քանդակ, կոլաժ, մեդիա, լուսանկար, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | *սպվեր, համաչափություն, հավասարակշռություն, հակադրություն, շարժում, ազդեցություն, նյութ, կրկնություն):* | *տպագրություն, դաջվածք և այլն):* |
| | | *Նշել արվեստի ստեղծագործություններում և շրջակա միջավայրում առկա պատկերներ, ձևեր, գույներ:*<br>*Կիրառել կերպարվեստի տարրերը բնօրինակից պատկերելու և թեմատիկ աշխատանքների միջոցով:* | *Կիրառել դիզայնի սկզբունքները գեղարվեստական գործունեության ձևերում (արդյունաբերական գրաֆիկա, նորաձևություն, ինտերիեր, էքստերիեր):*<br>*Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով դիզայնի սկզբունքները (2D, 3D, գովազդ, տարածքի ձևավորում, պաստառ, կենցաղային իրերի ձևավորում, մեդիա և այլն):* | *Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով դիզայնի սկզբունքները*<br>*(2D, 3D, գովազդ, տարածքի ձևավորում, պաստառ, կենցաղային իրերի ձևավորում, նորաձևություն, մեդիա և այլն):* |
| | **Նորարարություն, երևակայություն** | *Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով այլ մեկնաբանություններով (գունային երանգներ, միայն գիծ, միայն տոն):*<br>*Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:* | *Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:*<br>*Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ ներկայացնելով կերպարվեստի տարբեր ոճեր և ժանրեր (նատյուրմորտ, բնանկար, դիմանկար, քանդակ):* | *Ստեղծել 2D, 3D, 4D աշխատանքներ՝ ներկայացնելով կերպարվեստի տարբեր ոճեր և ժանրեր (նատյուրմորտ, բնանկար, դիմանկար, քանդակ, մանրակերտ):* |
| | | *Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝* | *Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝* | *Ստեղծել 2D և 3D վերացա-* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | *բնօրինակը ներկայացնելով վերացական արվեստի տեսանկյունից:* | *բնօրինակը ներկայացնելով վերացական արվեստի տեսանկյունից (օպ-արտ, պոպ-արտ, պուանտելիզմ, էքսպրեսիոնիզմ և այլն):* | *կան արվեստի աշխատանք-ներ (կուբիզմ, ֆուտուրիզմ, սյուրռեալիզմ և այլն):* |
| | | *Ստեղծել 2D և 3D երևակայական աշխատանքներ:* | *Ստեղծել 2D և 3D երևակայական թեմատիկ աշխատանքներ (հորինվածքներ):* | *Ստեղծել 2D, 3D և 4D երևակայական թեմատիկ աշխատանքներ (հորինվածքներ):* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**<br><br>Գեղարվեստակա ն ստեղծագործու-թյունների մեկնա-բանություն և ներկայացում | **Վերանայում և ցուցադրում** | *Ընտրել և խմբավորել աշխատանքները, ստեղծել պորտֆոլիո:*<br>*Ընտրել տարվա ընթացքում կատարված աշխատանքներից ցուցադրման համար:* | *Ընտրել ստեղծագործություններ ցուցադրման համար և աշխատել խմբով ցուցահանդես կազմակերպելու նպատա-կով: Առաջարկել խմբային և անհատական ցուցադրության թեմաներ կամ սկզբունքներ:*<br>*Ընտրել և ներկայացնել թեմատիկ նախագծեր որոշակի հանդիսատեսի համար:* | *Մենակ կամ խմբով ներկայացնել ամբողջական, ավարտուն թեմատիկ նախագծեր լայն լսարանի համար:* |
| | | *Խմբով մասնակցել ցուցադրությունների:* | *Առաջարկել խմբային և անհատական ցուցադրությունների հետաքրքիր* | *Ներկայացնել հասարակական նշանա-* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Խմբով աշխատել ցուցադրություններ կազմակերպելու նպատակով: | փարբերակներ:<br>Ներկայացնել արվեստի մի քանի բնագավառ ընդգրկող խմբային կամ անհատական նախագծեր: | կություն կամ ազդեցություն ունեցող արվեստագիտական նախագծեր՝ խմբով կամ մենակ: |
| | | Առաջարկել ցուցադրության արդյունավետ փարբերակներ:<br>Ընտրել ցուցադրության համար ոչ ավանդական փարբերակ: | Առաջարկել նախագծեր առավել արդյունավետ ցուցադրելու նպատակով:<br>Պատրաստել նախագծեր և առավել արդյունավետ ցուցադրել դրանք:<br>Առաջարկել հանդիսատեսի համոզմունքների, գաղափարների, տեսակետների վրա ազդեցություն թողնող ցուցադրության արդյունավետ տարբերակներ: | Մենակ կամ խմբով վերլուծել և ներկայացնել հասարակական, սոցիալական, մշակութային կամ քաղաքական համոզմունքներ ներկայացնող թեմատիկ նախագծեր: |
| | **Մեկնաբանում** | Բացատրել, թե ինչու են ընտրվել տվյալ աշխատանքները:<br>Ընտրել ստեղծագործություններ և քննարկել դրանք ծնողի, դասընկերոջ կամ ուսուցչի հետ, բացատրել, թե ինչպես է կատարվել աշխատանքը: | Ընտրել և ներկայացնել աշխատանքները՝ ցուցադրության համար:<br>Խմբի հետ ընտրել և քննարկել աշխատանքները ցուցադրության համար:<br>Ձևավորել ստեղծագործական նախագծերի գեղագիտական չափանիշներ: | Վերլուծել և ձևավորել ստեղծագործական նախագծերի թեմատիկ, տեխնիկական, գեղարվեստական և նորարարական սկզբունքներ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Մեկնաբանել սեփական աշխատանքները: Բացատրել, թե ինչպես են ընտրվել նկարները ցուցադրություն կազմակերպելիս: | Նշել այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել է ցուցադրություն կազմակերպելիս: Ձևավորել սկզբունքներ ցուցադրություն կազմակերպելիս: Ձևավորել ստեղծագործական նախագծերի տեխնիկական չափանիշներ: | |
| **ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ (ԸՆԿԱԼՈՒՄ)** Արվեստի միջոցով իմաստի արտահայտման /փոխանցման ընկալում, գիտակցում և գնահատում | **Քննադատական արձագանք** | Բացատրել, թե ինչպես են գույները, գծերը և պատկերները դարձել նկար: Ճանաչել կերպարվեստի հիմնական տարրերը: | Քննարկել արվեստի ստեղծագործությունը: Կատարել արվեստագիտական հետազոտություններ և վերլուծություններ: | Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ ձևավորել մասնագիտական քննադատական կարծիքներ: |
| | | Դասակարգել աշխատանքներն՝ ըստ տեսակների: Դասակարգել կերպարվեստի տեսակները: | Դասակարգել կերպարվեստի տեսակները, ժանրերը, ոճերը: Կատարել համեմատություններ և դասակարգել ստեղծագործությունները: | Կատարել հետազոտություններ և վերլուծել ստեղծագործական նախագծերը: |
| | | Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: | Վերլուծել իր և ընկերների աշխատանքները բոլոր մանրամասներով: Մեկնաբանել և վերլուծել արվեստի ստեղծագործությունները: | Քննարկել և վերլուծել տարբեր ժամանակներում ստեղծված նախագծերը, դրանց թողած հասարակա- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Վերլուծել հանդիսատեսի համոզմունքների, գաղափարների, տեսակետների վրա ցուցադրությունների թողած ազդեցությունը: | կան ազդեցությունը: |
| | **Գնահատում և ինքնագնա-հատում** | Գնահատել իր և ընկերների աշխատանքները: Բացարել, թե ինչու է հավա-նում նկարը: Գնահատել ստեղծագործական կարողությունները: | Գնահատել ստեղծագործությունները՝ ըստ չափանիշների: Ձևավորել ստեղծագործությունների գնահատման չափանիշներ: | Վերլուծել տարբեր արվես-տագիտական գնահատա-կաններ արդիականության, մշակութային արժևորման տեսանկյունից: |
| | | | Ցույց տալ աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը: Ցույց տալ աշխատանքներում օգտագործված տարբեր լուծումները: Գնահատել նախագծերը՝ վերլուծելով դրական և բացասական կարծիքները: | Գնահատել նախագծերը՝ հաշվի առնելով հասարակության տարբեր խավերի գեղագիտական նախընտրությունները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ԿԱՊԱԿՑՈՒՄ**<br><br>Գեղարվեստական գաղափարների և | **Արվեստ, տեխնոլոգիաներ և գյուտեր** | Նույն թեմայով աշխատանքը ներկայացնել տարբեր նյութերով: Սեփական աշխատանքերը | Պատրաստել իր աշխատանքների թվայնացված պորտֆոլիո: Արվեստի վերաբերյալ պատրաստել տեսաշարեր: Համեմատել նույն թեման ներկայացնող | Ներկայացնել որևէ արվեստագետի կամ ստեղծագործություն՝ մատուցման ձևը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| աշխատանքի համադրումը անհատական/ մասնավոր իմաստի և արտաքին համատեքստի հետ | | ներկայացնել տեխնոլոգիական նոր մոտեցումներով: | ստեղծագործական նախագծերը (ֆիլմ, կտավ, հուշարձան, մեդիա և այլն), ներկայացնել նմանություններն ու տարբերությունները: | համապատասխանեցնելով վերջինիս ոճին, ժամանակաշրջանին և այլն: |
| | | Վերլուծել, թե ինչ նյութեր և միջոցներ են օգտագործում նկարիչները, քանդակագործներն ու ճարտարապետները: | Ներկայացնել նկարչական նյութերը և տեխնոլոգիաները՝ ըստ կիրառման անհրաժեշտության: Ուսումնասիրել և ներկայացնել տարբեր ժամանակների տեխնոլոգիական և գիտական նորարարությունների ազդեցությունը արվեստի վրա: | Ներկայացնել տեխնոլոգիական նոր մոտեցումների ազդեցությունը ժամանակակից արվեստի վրա: |
| | **Արվեստի պատմություն** | Հայտնել կարծիք արվեստի տեսակների մասին: Ներկայացնել գիտելիքներ արվեստի պատմությունից: | Ներկայացնել գիտելիքներ արվեստի պատմությունից և տեսությունից: Ներկայացնել գիտելիքներ ժամանակակից արվեստի մասին: Ցուցադրել ստեղծագործությունը ներկայացնելու կարողություններ՝ արվեստագետի, նկարչի, արվեստի քննադատի, պատկերասրահի տնօրենի, պատմաբանի, հոգեբանի տեսանկյունից: | Ձևակերպել և ներկայացնել կերպարվեստի բնագավառում առկա հիմնական միտումները: Քննարկել, թե ինչպես են ժամանակը, տեղը և մշակույթը արտացոլվում առանձին ստեղծագործություններում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Կարծիք հայտնել հայազգի արվեստագետների ստեղծագործությունների մասին: Ներկայացնել հայկական կերպարվեստի սիրած արվեստագետներին: | Ներկայացնել հայկական կերպարվեստի հիմնական ուղղությունները: Համեմատել հայկական և համաշխարհային կերպարվեստի հիմնական առանձնահատկությունները: Հետազոտել և ներկայացնել ժամանակակից հայկական արվեստի առանձնահատկությունները: | Ներկայացնել հայկական և համաշխարհային արվեստի առանձնահատկությունները (ընդհանուր միտումները, նմանություններն ու տարբերությունները): |
| | **Արվեստի դերը և նշանակությունը** | Ներկայացնել, թե ինչով է արվեստի ստեղագործությունը նման կամ տարբեր իրականությունից: Ներկայացնել արվեստի ստեղծագործություններում պատկերված միևնույն թեմայի տարբեր արտահայտությունները: | Ներկայացնել արվեստի ստեղծագործությունների նշանակությունը պատմության տեսանկյունից: Ներկայացնել արվեստի ստեղծագործությունների ազդեցությունը՝ ըստ ներկայացման ձևերի: Ներկայացնել, թե որքանով է մշակույթի, պատմության, ավանդությունների և սովորույթների իմացությունը ազդում ստեղծագործական գործընթացի վրա: | Ներկայացնել, թե որքանով է մշակույթի, պատմության, ավանդությունների և սովորույթների իմացությունը օգնում լիարժեք ընկալելու ստեղծագործությունը: |
| | | Ներկայացնել մշակութային հաստատությունները՝ ըստ նշանակության: | Ներկայացնել մշակութային հաստատություններում ընդունված վարքականոնները տարբեր ժամանակներում: Պահպանել | Լուսաբանել միևնույն մշակութային իրադարձությունը տարբեր մե- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Հայտնել կարծիք մշակութային հասպապությունների նշանակության վերաբերյալ: | մշակութային հասպապություններում ընդունված վարքականոնները: Համեմապել և վերլուծել միևնույն մշակութային իրադարձության լուսաբանումը պարբեր մեդիաների միջոցով (հեռուսպապեսություն, պպագիր մամուլ, համացանց և այլն): | դիաների համար (հեռուսպապեսություն, պպագիր մամուլ, համացանց և այլն): |
| | | Աշխապանքները կապել սեփական կյանքի փորձի հետ: Ներկայացնել արվեստի դերն իր շրջապապում: | Ներկայացնել արվեստի դերն առօրյայում: Ներկայացնել ժամանակակից արվեստի դրական կամ բացասական ազդեցությունը առօրյա կյանքում: Կիրառել ստեղծագործական կարողությունները ու մոտեցումները ուսումնական մյուս բնագավառներում: | Ստեղծագործաբար մոտենալ առօրեական խնդիրների լուծմանը: |

* <u>Ծանոթագրություն</u>

*2D - Հարթության վրա գեղանկարչական, գծանկարչական, գրաֆիկական աշխապանքներ (մապիտ, գրիչ, ջրաներկ, ակրիլ, յուղաներկ, թանաք և այլն): Կոլաժ, մոնպաժ, ֆրոնպաժ, պպագրություն, փորագրություն, դաջվածք թղթի, ստվարաթղթի, գործվածքի, փայտի վրա: Բատիկ, լուսանկար, նաև՝ թվայնացված:*

*3D  - Կավով աշխատանքներ (ծեփ, փորագրություն), կաղապար, հարթաքանդակ, բարձրաքանդակ, կլոր քանդակ, ծավալային աշխատանքներ: Ինստալյացիա: Տեքստիլ: Առակաների, պատկերների, տարածքների (ինտերիեր, էքստերիեր) ձևավորում: Ոսկերչական, արծաթագործական  իրերի և առարկաների, մարմնի վրա կրելու զարդերի ձևավորում:*

*4D -Ներկայացումներ: Ցուցադրության ենթակա աշխատանքներ, որոնք դիտելու համար ժամանակ է պահանջվում: Տեսագրություններ, թվային անիմացիոն աշխատանքներ և այլն:*

*2D, 3D, 4D ձևաչափերը կարող են իրականացվել հաղորդակցական և թվային տեխնոլոգիաների լայն կիրառմամբ:*

## «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԱՌԱՐԿԱՅԻ
## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

## ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
## (1-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

***Օգնել սովորողներին՝***

- ճանաչել և պատկերել որոշ երկրաչափական պատկերներ, ունենալ պարզ տարածական պատկերացում,
- կառուցել ֆիզիկական պարզ մոդելներ,
- բերել պարզ հիմնավորումներ, կատարել ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ,
- դրսևորել տրամաբանական և ստեղծագործական մտածողության պարզ հմտություններ և կարողանալ անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին,
- հասկանալ իր առջև դրված խնդիրները, մշակել և կատարել քայլեր դրանք լուծելու համար,
- ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնել դիտողականությունը՝ ձևավորելով ստեղծագործական և տրամաբանական մտածողություն,
- կիրառել տարբեր եղանակներ նյութը պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար,
- ճանաչել և հարգել ՀՀ պետական խորհրդանիշները և իմանալ պետական տոների հիմնական բովանդակությունը,
- արդյունավետ համագործակցել և հաղորդակցվել տարբեր ձևաչափերով, լսելով և հասկանալով այլոց կարծիքը, արտահայտելով սեփական տեսակետը:

***Ձևավորել՝***

- տրամաբանական, ստեղծագործական և քննական մտածողության պարզ հմտություններ,
- սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքներին անդրադառնալու և արձագանքելու կարողություններ,
- իր առջև դրված խնդիրը մշակելու և այն լուծելու համար քայլեր կատարելու կարողություն,
- շրջակա աշխարհի օբյեկտների, երևույթների և դրանց փոխադարձ կապերի մասին գիտելիքներ և դրանք նկարագրելու կարողություններ,

- պարզ ուսումնասիրություններ, առաջադրանքներ, եզրակացություններ կատարելու հմտություններ,
- նյութը պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար ստեղծագործական տարբեր եղանակներ կիրառելու կարողություն,
- տարբեր ձևաչափերով արդյունավետ համագործակցելու և հաղորդակցվելու, այլոց կարծիքը լսելու և արձագանքելու կարողություններ,
- ընտանեկան, խմբային, ազգային և քաղաքացիական պատկանելության վերաբերյալ պարզ մեկնաբանություններ կատարելու կարողություններ,
- զգայարաններով ստացած տեղեկությունների՝ որպես աշխարհաճանաչողության միջոցի ընկալում,
- սեփական զգացմունքների ճանաչման, սեփական մտքերի, զգացմունքների, կարիքների և ցանկությունների արտահայտման կարողություններ և յուրահատուկ լինելու գիտակցություն,
- պարզ հիմնավորումներ, ընդհանրացումներ և դասակարգումներ կատարելու հմտություններ,
- նախնական գիտելիքներ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի, ազգային արժեքների մասին,
- այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք,
- անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու հմտություններ,
- փորձարկելու, հետազոտելու, երևակայելու, ձևավորելու, սեփական գաղափարներն ու զգացմունքներն արվեստի միջոցով արտահայտելու հմտություններ:

## ՀԻՄՆԱԿԱՆ (ՄԻՋԻՆ) ԴՊՐՈՑ
## (5-9-ՐԴ  ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

***Օգնել սովորողին՝***

- ճանաչել ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտել իր գաղափարները,
- ճանաչել տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրել դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ,
- ճանաչել և արժևորել իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ,
- մեկնաբանել  և վերլուծել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկությունները և հակումները,
- կերպարվեստ ուսումնասիրելիս կիրառել երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքները,
- նկարագրել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների փոխկապակցվածությունը,
- վերլուծել, գնահատել և առաջարկել դասակարգման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից,
- կիրառել բնագիտական առարկաներից ստացած հիմնարար գիտելիքները բնության և տիեզերքի օբյեկտների նկարագրության, երևույթների և դրանց փոխադարձ կապերի բացատրության, ֆիզիկական մոդելավորման համար,
- ներկայացնել գիտության և տեխնոլոգիական նվաճումների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա,
- դրսևորել պատասխանատու վարքագիծ բնական ռեսուրսները ռացիոնալ օգտագործելու և շրջակա միջավայրը պահպանելու գործում,
- կիրառել տեքստային և գրաֆիկական խմբագրիչներ, կարողանալ  մշակել տվյալներ՝ օգտագործելով անհրաժեշտ թվային գործիքներ և ծրագրեր,
- ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակել և իրականացնել նախագծեր,

- գտնել և օգտագործել տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշել և բնութագրել աղբյուրի արժանահավատությունը և դրանք օգտագործելիս կատարել հղումներ,
- արտահայտել, հիմնավորել և պաշտպանել սեփական տեսակետը և դիրքորոշումը:

***Ձևավորել՝***

- տարբեր ձևաչափերով արդյունավետ համագործակցելու և հաղորդակցվելու, լսելու, այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին հարգանքով վերաբերվելու կարողություններ, մշակութային ընկալման և արժևորման, արվեստի որոշ տեսակների ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ դրսևորելու կարողություններ:

## ՄԻՋՆԱԿԱՐԳ (ԱՎԱԳ) ԴՊՐՈՑ
## 10-12- ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

***Օգնել սովորողին՝***

- ճանաչել ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտել իր գաղափարները,
- ճանաչել տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարական խմբերի արժեքները, բացատրել դրանց ազդեցությունն ու արտացոլումը ազգային և համաշխարհային մշակույթի մեջ,
- ճանաչել և արժևորել իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ,
- բացահայտել և զարգացնել իր անհատական առանձնահատկությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները,
- հավասարակշռել և ներդաշնակեցնել իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկությունները և հակումները,
- տարբերակել և համեմատել աշխարհաճանաչողության ձևերը և դրանց առանձնահատկությունները.

- նկարագրել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների, հայոց և համաշխարհային պատմության իրադարձությունների փոխկապակցվածությունը,
- որոշել խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնել խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցումներ և համեմատել դրանք,
- դրսևորել հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակել և իրականացնել նախագծեր,
- ճանաչել իր ուժեղ ու թույլ կողմերը և դրսևորել ինքնազարգացմանը միտված վարքագիծ:

***Ձևավորել՝***

- արվեստի միջոցով ստեղծագործաբար մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ,
- տեքստային և գրաֆիկական խմբագրիչներ կիրառելու, անհրաժեշտ թվային գործիքներ և ծրագրեր օգտագործելով՝ տվյալներ մշակելու հմտություններ,
- սեփական տեսակետը և դիրքորոշումը արտահայտելու, հիմնավորելու և պաշտպանելու կարողություններ,
- թվային տարածքում ապահով գտնվելու կանոններին տիրապետելու, օնլայն հաղորդակցության էթիկան պահպանելու, անձնական տվյալների գաղտնիության կանոններին տեղյակ լինելու և դրանք կիրառելու, յուրաքանչյուրի անձնական տարածք (ֆիզիկական և հոգեբանական) ունենալու իրավունքն ու անհրաժեշտությունը մեկնաբանելու հմտություններ,
- համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները ներկայացնելու և քննարկելու կարողություններ,
- իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները գնահատելու, պատճառահետևանքային կապերը վերլուծելու և որոշումներ կայացնելու հմտություններ,
- անհրաժեշտ տվյալներ ստանալու, վարկածներ առաջարկելու, վերլուծելու, գնահատելու և ներկայացնելու կարողություններ,

- մասնագիտական կրթության հնարավորությունների վրա հիմնված նախնական ինքնորոշում կատարելու կարողություն:

**1-2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ**

**Առաջարկվում է (տարեկան 60 ժամ)**

<table>
<tr><th colspan="2">ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</th></tr>
<tr><th colspan="2">ՆՅՈՒԹԵՐ, ՄԻՋՈՑՆԵՐ (5 ժամ)</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td>Ձևավորել նյութեր, մեթոդներ և միջոցներ փորձարկելու կարողություններ:<br>Զարգացնել համեմատելու, հակադրելու և դասակարգելու կարողություններ:</td><td rowspan="3">1-2.Կ.Ս.ՆՄ.1. Փորձարկել տարբեր նյութեր հետաքրքիր աշխատանքներ ստանալու նպատակով: Ստեղծել պատկերներ, կոլաժներ, ծավալային աշխատանքներ, նաև՝ թափոններից:<br>1-2.Կ.Ս.ՆՄ.2. Ստեղծել աշխատանքներ՝ ըստ թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության:<br>1-2.Կ.Ս.ՆՄ.3. Կարգավորել և պահպանել աշխատանքային տարածքը:<br>1-2.Կ.Ս.ՆԵ.1. Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով ուրիշ գունային երանգներով, միայն գծով, միայն տոնով:<br>1-2.Կ.Ս.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով վերացական արվեստի տեսանկյունից:<br>1-2.Կ.Ս.ՆԵ.3. Ստեղծել 2D և 3D երևակայական աշխատանքներ:<br>1-2.Կ.Ա.ՔԱ.3. Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները:</td></tr>
<tr><th>Ուղղորդող հարցադրում</th></tr>
<tr><td>Ինչպե՞ս են արվեստագետները նախապատրաստվում, ի՞նչ գործիքներ և միջոցներ են օգտագործում:<br>Ի՞նչ են պատկերում արվեստագետները:<br>Պահպանո՞ւմ են արդյոք արվեստագետները որոշակի կանոններ:<br>Կարո՞ղ է դասարանը վերածվել արվեստանոցի:</td></tr>
<tr><th colspan="2">Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</th></tr>
<tr><td colspan="2"><ul><li>Ստանալ ծավալային պատկերներ:</li></ul></td></tr>
</table>

- Փորձարկել  նյութերը և գործիքները:
- Միավորել և առանձնացնել նյութերը:
- Հավաքել, տեսակավորել, ընտրել  նյութերը և գործիքները:
- Նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը:
- Անվանել նյութերն ու գործիքները:
- Պատմել  իր և ընկերների աշխատանքների մասին:
- Անվանել գույները:
- Նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար:
- Արտահայտել մտքերն ու գաղափարները՝ կատարելով  2D և 3D աշխատանքներ՝ եզրագծերով, տոներով և գունային երանգներով:
- Ստեղծել պարզ նախշեր:
- Բնօրինակից ստանալ վերացական պատկերներ:
- Ազատորեն ստեղծագործել մատներով, ձեռքերով, գրաֆիկական գործիքներով (կավճամատիտ, գրիչ, մատիտ, վրձին և այլն):
- Ստեղծել երևակայական հարթ և ծավալային պատկերներ:
- Մեկնաբանել և վերլուծել՝ ինչն է հավանում, ինչը՝ ոչ:
- Ներկայացնել կարծիք:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Ստեղծագործական աշխատանքի համար կիրառվող գործիքները և նյութերը: Նյութերի և գործիքների անվանումները:<br>Ստեղծագործական աշխատանքներն արտահայտիչ | Վարժություններ տարբեր որակների և գույների թղթերի վրա:<br>Նկարչական միջոցների փորձարկում. մատիտներ, յուղամատիտներ, մարկերներ, | **Պատճառ և հետևանք**<br>Նյութի և արդյունքի կապը. Ներկանյութի որակը և խտությունը թղթի վրա տարբեր արդյունքներ |

<table>
<tr>
<tr><td colspan="2"><ul><li>ստանալ ծավալային և հարթ պատկերներ,</li><li>ստեղծել կրկնօրինակներ,</li><li>փորձարկել նյութերը և գործիքները,</li><li>հավաքել, տեսակավորել, ընտրել նյութերը և գործիքները,</li><li>նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը,</li><li>կառուցել որևէ ճարտարապետական կոթողի մանրակերտ՝ պահպանելով ոճը,</li><li>նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար, աշխատանքն ավարտելուց հետո կարգի բերել տարածքը,</li></ul></td></tr>
</table>

- արտահայտել  իր հետաքրքրությունների շրջանակը,
- կատարել ճեպանկարներ, նախագծել  և պատրաստել  տիկնիկներ (մարիոնետներ) ներկայացման համար,
- ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես կրած հուզական վերաբերմունք,
- ստեղծել  2D և 3D երևակայական աշխատանքներ,
- բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն):

| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|---|
| Գրական ստեղծագործության ձևավորում կամ պատկերազարդում:<br>Պատկերում բնօրինակից:<br>Դիմանկար, ինքնանկար:<br>Բնանկար:<br>Նատյուրմորտ:<br>Իրականության, բնության որոշ երևույթների, կենցաղային թեմաներ:<br>Թեմատիկ հորինվածք: | Համաչափության,  գծերի ընդհանուր դասավորության, կոմպոզիցիոն համաչափության, ուսումնասիրության և համեմատության վրա հիմնված վարժություններ և ստեղծագործական աշխատանքներ:<br>Դիմագծերի ընդհանրացման  և նմանության կարողությունների ձևավորում:<br>Ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում:<br>Թեմատիկ նկարչությունը պետք է իրականացվի դիտման, պատկերացման, հիշողության և հեքիաթների ձևավորման միջոցով:<br>Առարկաների պատկերում (ավարտված) ճեպանկար, բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան | **Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում**<br>Նյութի և արդյունքի կապը. ներկանյութի որակը և խտությունը թղթի վրա տարբեր արդյունքներ են տալիս:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: |

| | | |
|---|---|---|
| | հնարավոր չէ զննել:<br>Ծառերի, թռչունների, կենդանիների ուրվապատկերի ստեղծում (նկարչական նյութը՝ ջրաներկ, գուաշ, գունամատիտ, մոմակավիճ, սպիտակ կամ երանգավոր թղթի վրա)՝ առանց նախօրոք մատիտով արված նկարի:<br>Կենդանիների, թռչունների և մարդու մարմնի պատկերում:<br>Նատյուրմորտների, աշնանային և գարնանային ծաղիկների պատկերում:<br>Աշնանային և գարնանային բնության էտյուդային պատկերում (պլեներ) կամ պատկերում հիշողությամբ:<br>Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ կենցաղային տարբեր իրերի՝ մրգերի, բանջարեղենի, ծաղիկների պատկերում (ներառյալ ճեպանկարում): | **Գիտատեխնիկական նորարարություն**<br>Գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, մարդկային գործունեության վրա, շրջակա միջավայրի ազդեցությունը մարդկային գործունեության վրա, շրջակա միջավայրի հարմարեցումը մարդու կարիքներին: |
| **Առաջարկվող թեմատիկա** | | |
| ***Տարերք: Երաժշտություն: Հեքիաթի կամ պատմվածքի ձևավորում:Մայրամուտ: Թավուտ անտառում: Բերքահավաք: Իմ ծնողների դիմանկարները:***<br>***Ձմեռային ձնակույտեր: Հեքիաթային անտառում: Խապուտիկները դաշտում:Անտառի բացատ: Երեկոյան քաղաքը: Հեքիաթ տաք և սառը գույների մասին: Երկու առարկայից կազմված պարզ նատյուրմորտներ:*** | | |
| **Միջառարկայական կապ** | | |
| ***Մայրենի*** - Սիրելի զբաղմունքի, մարդկանց, խաղալիքների մասին զրույցներ, գովազդվող առարկայի բնութագրումներ, հրավիրատոմս, բացիկ: | | |

| |
|---|
| ***Մաթեմատիկա*** - Երկրաչափական պատկերների և մարմինների օգտագործմամբ ձևավորման աշխատանքների իրականացում, մարմինների, տարբեր առարկաների պատկերում, համեմատում և նկարագրում, դեկորացիաներ պատրաստելիս չափումների կատարում, դետալների գծագրում:<br>***Երաժշտություն*** - Ստեղծագործության բովանդակության, տպավորությունների ու զգացողությունների արտահայտում, ստեղծագործության տեսակը, բնույթը, տեմպը, դինամիկան ճանաչելու կարողություններ:<br>***Թատրոն*** - Թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների, նրանց զգեստների պատկերում: Թատերական ներկայացման ձևավորումների, հրավիրատոմսերի, ազդագրերի պատրաստում:<br>***Տեխնոլոգիա*** - Նոր մտքի ձևակերպումներ, նորարարության հիմնավորում և կարևորում:<br>***Ես և շրջակա աշխարհը*** - Հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմեր և կողմնորոշում դրանցով: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| S4, S5, S7, S8, S9, S10, S16, S17, S18, S19, 26, S31, S32 |

| **ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ (4 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ցուցադրություններ կազմակերպելու հմտությունների ձևավորում:<br>Ստեղծագործությունները ներկայացնելու հմտությունների ձևավորում: | **3-4.Կ.Ս.ՆՄ.2.** Ձևավորել համապատասխան բառապաշար:<br>**3-4.Կ.Ս.ՆՄ.3.** Հոգ տանել նյութերի և գործիքների մասին, պահպանել անվտանգության կանոնները:<br>**3-4.Կ.Ա.ՎՑ. 1.** Ընտրել տարվա ընթացքում կատարված աշխատանքները ցուցադրման համար: |
| **Ուղղորդող հարցադրում** | |

<table>
<tr><td>Ինչպե՞ս են պահվում ստեղծագործությունները:<br>Ովքե՞ր են դրանք հավաքում, պահում և ի՞նչ նպատակով:<br>Ի՞նչ չափանիշներով են ընտրվում ստեղծագործությունները:<br>Հարկավո՞ր է արդյոք ցուցադրել աշխատանքները:<br>Ի՞նչ է նշանակում արվեստի ստեղծագործության ցուցադրություն:</td><td>3-4.Կ.Ա.ՎՑ. 2. Խմբով աշխատել ցուցադրություններ կազմակերպելու նպատակով:<br>3-4.Կ.Ա.ՎՑ.3. Ընտրել ցուցադրության համար ոչ ավանդական տարբերակ:<br>3-4.Կ.Ա.ՎՄ. 1. Ընտրել ստեղծագործություններ և քննարկել դրանք ծնողի, դասընկերոջ կամ ուսուցչի հետ, բացատրել, թե ինչպես է կատարվել աշխատանքը:<br>3-4.Կ.Ա.ՎՄ. 2. Բացատրել, թե ինչպես է ընտրել նկարները ցուցադրություն կազմակերպելիս:<br>3-4.Կ.Ա.ՔԱ.1. Ճանաչել կերպարվեստի հիմնական տարրերը:<br>3-4.Կ.Ա.ՔԱ.3. Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները:<br>3-4.Կ.Կ.ԱԴ.3. Ներկայացնել արվեստի դերն իր շրջապատում:</td></tr>
<tr><td colspan="2">Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</td></tr>
<tr><td colspan="2">• անվանել նյութերն ու գործիքները,<br>• ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,<br>• համեմատել նյութերը,<br>• նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար, աշխատանքն ավարտելուց հետո կարգի բերել տարածքը,<br>• ընտրել, ցուցադրել և նկարագրել պորտֆոլիոյի համար ընտրված աշխատանքները,<br>• տեսակավորել և խմբավորել աշխատանքներ՝ըստ առաջարկված չափանիշների,<br>• ցուցադրել տիկնիկային ներկայացում,<br>• առաջարկել և նախաձեռնել աշխատանքների ցուցադրության հետաքրիր տարբերակներ,<br>• ձևակերպել հարցերը և պատասխանները, թե ինչու և ինչպես պետք է պատրաստվեն աշխատանքները ցուցադրության համար,</td></tr>
</table>

- ձևակերպել հարցերը, թե ինչի շուրջ է քննարկում ծավալելու,
- մանրամասն ներկայացնել ինքնուրույն, զույգով կամ խմբով կատարված աշխատանքները, թվարկել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,
- դասակարգել աշխատանքները՝ հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները,
- աշխատանքներում ցուցադրել մյուս ուսումնական առարկաներից ստացած գիտելիքները:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Աշխատանքների ընտրություն. չափանիշները և պայմանները:<br>Ավանդական և ոչ ավանդական մոտեցումներ:<br>Նախագիծ. խմբային, դասարանային կամ դպրոցական միջոցառումների ստեղծագործական նախագծեր և ներկայացում:<br>Ցուցադրություն:<br>Արդյունավետ ցուցադրություններ կազմակերպելու չափանիշները: | Ստեղծել աշխատանքային տետր կամ պորտֆոլիո:<br>Մենակ կամ խմբով առանձնացնել աշխատանքները՝ ըստ առաջարկված չափանիշների:<br>Ձևակերպել հարցերը և պատասխանները, թե որտեղ, երբ, ինչու և ինչպես պետք է պատրաստվեն աշխատանքները ցուցադրության համար:<br>Մեկնաբանել, ստեղծագործություններից ստացած տպավորությունները:<br>Բացատրել, թե ինչու են ընտրվել տվյալ աշխատանքները:<br>Նշել և մեկաբանել ցուցադրության կազմակերպման նպատակները, հիմնական սկզբունքները:<br>Մեկնաբանել սեփական աշխատանքները:<br>Աշխատել խմբով:<br>Սովորողների կողմից կատարված աշխատանքների կամ | **Պատճառ և հետևանք, մեխա-նիզմ և կանխատեսում**<br>Պատկեր և ազդեցություն կապը. ցուցադրության ձևը տարբեր ընկալումներ է առաջացնում:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բա-ցահայտել պատկերվող առարկա-ների նմանություններն ու տարբե-րությունները: Գտնել ներդաշ-նակություն:<br><br>**Անհատական և մշակութային արտահայտում** |

| | | |
|---|---|---|
| | թեմատիկ առանձին ուղղվածություն բովանդակող ստեղծագործությունների և առարկաների ցուցադրություն: Դասընթացների այս ձևը կարող է կազմակերպվել որևէ առարկայի հետ ինտեգրված: | Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով արտահայտված գաղափարները և համոզմունքները կարող են բերել նոր արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորել գեղագիտությունը և ստեղծարարությունը: |

**Առաջարկվող թեմաներ**

***Թեմատիկ, տարեկան, կիսամյակային աշխատանքների ցուցադրություն, ինտեգրված դասընթացի արդյունքների ամփոփում, տիկնիկային կամ թատերական ներկայացում, ծիսական խաղիկների, երգերի և պարերի բեմականացում (ինտեգրված):***

**Միջառարկայական կապ**

***Մայրենի*** - Կազմել երկխոսության հարցեր, վարել երկխոսություն տարբեր մարդկանց հետ, կատարել նշումներ և ամբողջացնել դրանք մի քանի նախադասություններով:

***Մաթեմատիկա*** - Կատարել ճշմարիտ և ոչ ճշմարիտ դատողություններ:

***Երաժշտություն*** - Արտահայտել ստեղծագործության բովանդակությունը, տպավորությունները ու զգացողությունները, բացահայտել ստեղծագործության տեսակը, բնույթը, տեմպը, ճանաչել դինամիկան, կազմակերպել դերային խաղեր, կատարել բեմադրությունների երաժշտական ձևավորում:

***Ֆիզկուլտուրա*** - Տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, նպատակասլացություն և որոշումներ կայացնելու ունակություն:

***Թատրոն*** - Թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների պատկերում:

***Ես և շրջակա աշխարհը*** - Դիտարկել և մեկնաբանել, թե ինչպես կարող են իր նախասիրությունները, հետաքրքրություններն ու

| |
|---|
| սովորությունները պայմանավորել իր նպատակները: <br> ***Օտար լեզուներ*** - Իր և իր շրջապատի մասին զրույցներ՝ գործածելով շատ պարզ բառեր ու նախադասություններ: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| S4, S5, S7, S8, S9, S10, S14, S16, S17, S18, S19, S22, S25, S27, S26, S31, S32 |

| **ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ** | |
|---|---|
| **ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ (6 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ստեղծագործական աշխատանքը մեկնաբանելու, քննարկելու, գնահատելու հմտությունների ձևավորում: | **3-4.Կ.Ս.ՆՄ.2.** Ձևավորել համապատասխան բառապաշար: <br> **3-4.Կ.Ա.ՔԱ.1.** Ճանաչել կերպարվեստի հիմնական տարրերը: <br> **3-4.Կ.Ա.ՔԱ.2.** Դասակարգել կերպարվեստի տեսակները: <br> **3-4.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: <br> **3-4.Կ.Ա.Գ.1.** Բացատրել, թե ինչու է հավանում նկարը: <br> **3-4.Կ.Ա.Գ.2.** Գնահատել ստեղծագործական կարողությունները: <br> **3-4.Կ.Կ.ԱԴ.1.** Ներկայացնել արվեստի ստեղծագործություններում պատկերված միևնույն երևույթի տարբեր արտահայտությունները: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ի՞նչ է պատկերը: <br> Ստեղծագործությունից ի՞նչն է ավելի շատ տպավորվում, ազդում մարդկանց վրա: <br> Ինչպե՞ս գնահատել ստեղծագործությունները: | |
| **Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝** | |
| • անվանել նյութերն ու գործիքները, <br> • ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար, <br> • համեմատել նյութերը, <br> • վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ: | |

- մանրամասն ներկայացնել ինքնուրույն, զույգով կամ խմբով կատարված աշխատանքները, թվարկել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,
- բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն),
- ընտրել շրջապատող իրականությունն արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ,
- հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով,
- հասկանալ, որ արվեստը բոլոր ժամանակների և մշակույթների հաղորդակցման անփոխարինելի լեզու է:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Քննարկումներ ստեղծագործական աշխատանքներում կերպարվեստի տարրերի և սկզբունքների շուրջ:<br>Ստեղծագործության զգայական անդրադարձ արտահայտչամիջոցների կիրառման վերաբերյալ:<br>Ստեղծագործության քննական անդրադարձ թեմայի մեկնաբանման վերաբերյալ:<br>Գնահատման չափանիշներ: | Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ կարծիքների արտահայտում հարց ու պատասխանի, ռուբրիկների միջոցով: Համեմատել՝<br>- *միևնույն ստեղծագործողի տարբեր աշխատանքները,*<br>- *նույն թեմայով տարբեր ստեղծագործողների կատարած աշխատանքները,*<br>- *միևնույն ժանրի ստեղծագործությունները:*<br>Արվեստի ստեղծագործությունների քննարկում, վերլուծություն, դասակարգում և գնահատում:<br>Նկարագրել ստեղծագործության թողած ազդեցությունը և կապը իրականության հետ:<br>Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները: | **Պատճառ և հետևանք, մեխա-նիզմ և կանխատեսում**<br>Պատկեր և ազդեցություն կապը. ցուցադրության ձևը տարբեր ըն-կալումներ է առաջացնում:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բա-ցահայտել պատկերվող առարկա-ների նմանություններն ու տարբե-րությունները:<br><br>**Անհատական և մշակութային** |

| | | |
|---|---|---|
| | Առաջարկել և ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ:<br>**Նկարագրել** - Ի՞նչ է պատկերված:<br>**Ներկայացնել** - Արվեստի ո՞ր տեսակին է պատկանում աշխատանքը:<br>**Վերլուծել** - Ի՞նչ պատկերներ են կիրառված, ի՞նչ նպատակով են օգտագործված հենց այդ պատկերները:<br>**Մեկնաբանել** - Ինչի՞ մասին է պատմում ստեղծագործությունը:<br>**Քննարկել** - Աշխատանքը հաջողվա՞ծ է, թե ոչ: Այս աշխատանքներից ո՞րը կարելի է ձեռք բերել: Ինչո՞ւ այո և ինչո՞ւ ոչ:<br>Կատարել ստեղծագործությունների չորս փուլային վերլուծություն: | **արտահայտում**<br>Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով արտահայտված գաղափարները և համոզմունքները, կարող են բերել նոր արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորել գեղագիտությունը և ստեղծարարությունը: |

**Միջառարկայական կապ**

***Մայրենի*** - Կազմել երկխոսության հարցերը, վարել երկխոսություն տարբեր մարդկանց հետ, կատարել նշումներ և ամբողջացնել դրանք մի քանի նախադասություններով: Հասկանալ նկարը, արտահայտել մտքեր պատկերվածի վերաբերյալ:

***Մաթեմատիկա*** - Ճշմարիտ և ոչ ճշմարիտ դատողություններ:

***Երաժշտություն*** - Քննարկվող թեմաների, տառերի մասին երգերի ունկնդրում, սովորում և կատարում, դերային խաղերի, բեմադրությունների երաժշտական ձևավորում:

***Ֆիզկուլտուրա*** - Տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, նպատակասլացություն և որոշումներ կայացնելու ունակություն:

***Թատրոն*** - Թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած,

| |
|---|
| ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների մեկնաբանություններ: <br>***Ես և շրջակա աշխարհը*** - Շրջապատի մարդկանց հետ փոխհարաբերությունները: <br>***Օտար լեզուներ*** - Սեփական կարծիք, վերաբերմունք, զգացմունք հայտնելու հմտությունների ձևավորում: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| S4, S5, S7, S8, S9, S10, S14, S16, S17, S18, S19, S22, S25, S27, S26, S31, S32 |

| ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ | |
|---|---|
| **ԱՐՎԵՍՏ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԳՅՈՒՏԵՐ (4 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ներկայացնել, թե որ արվեստի ստեղծագործություններն ունեն տարիք և կարելի է որոշել, թե ինչպես են դրանք ստեղծվել: <br>Ստեղծագործությունների միջոցով տարբեր ժամանակներում ապրած մարդկանց կենցաղն ուսումնասիրելու հմտությունների ձևավորում: | **3-4.Կ.Ս.ՆՄ.1.** Փորձարկել տարբեր նյութեր, միջոցներ, գտնել ստեղծագործական աշխատանքներ ստանալու հետաքրքիր մոտեցումներ (2D, 3D): <br>**3-4.Կ.Ս.ՆՄ.2.** Ձևավորել համապատասխան բառապաշար: <br>**3-4.Կ.Ա.ՔԱ.1.** Ճանաչել կերպարվեստի հիմնական տարրերը: <br>**3-4.Կ.Ա.ՔԱ.2.** Դասակարգել կերպարվեստի տեսակները: <br><br>**3-4.Կ.Ս.ԱՏ.1.** Սեփական աշխատանքները ներկայացնել տեխնոլոգիական նոր մոտեցումներով: <br>**3-4.Կ.Ս.ԱՏ.2.** Վերլուծել, թե ինչ նյութեր և միջոցներ են օգտագործում նկարիչները, քանդակագործներն ու ճարտարապետները: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ինչպե՞ս է արվեստը օգնում հասկանալու մարդկանց, նրանց շրջապատը և կենցաղը: <br>Ինչպե՞ս է արվեստը ներկայացնում իրականությունը: Կա՞ արդյոք արվեստ մեր շրջապատում: | |
| **Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝** | |

| | | |
|---|---|---|
| • ստեղծել կրկնօրինակներ,<br>• փորձարկել նյութերը և գործիքները,<br>• հավաքել, տեսակավորել, ընտրել նյութերը և գործիքները,<br>• նկարագրել և բացատրել աշխատանքի ընթացքը,<br>• անվանել նյութերն ու գործիքները,<br>• նկարագրել արվեստի ստեղծագործությունները,<br>• մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը:<br>• ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,<br>• համեմատել նյութերը,<br>• վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ,<br>• մանրամասն ներկայացնել ինքնուրույն, զույգով կամ խմբով կատարված աշխատանքները,<br>• թվարկել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,<br>• ճանաչել և քննարկել որոշակի ժամանակաշրջանում, որոշակի մշակույթի պատկանող արվեստի ստեղծագործությունը,<br>• նշել հիմնական նյութերը, գործիքները և տեխնոլոգիաները, որոնք ապահովել են ստեղծագործության որակը,<br>• քննել և վերլուծել անցյալում և ներկայում արված ստեղծագործությունները՝ ըստ օգտագործված նյութերի և միջոցների: | | |
| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| Նորարարությունները, տեխնոլոգիաները և արվեստը:<br>Արվեստի ստեղծագործությունում ներկայացված գաղափարը: | Ուսումնասիրել արվեստի աշխատանքներում օգտագործված նյութերը:<br>Հետազոտել տարբեր ժամանակներում արվեստագետների աշխատելու միջոցները և | **Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում**<br>Պատկեր և ազդեցություն կապը. ցուցադրության որակը տարբեր ըն- |

| | | |
|---|---|---|
| Ինչի՞ մասին են պատմում թանգարանի ցուցանմուշները:<br>Ի՞նչ է պատկերված:<br>Ի՞նչ է պատկերել արվեստագետը:<br>Ո՞րն է ստեղծագործության արտահայտած իմաստը:<br>Ինչո՞ւ է արվեստագետն ընտրել տվյալ թեման:<br>Ի՞նչ նյութեր են օգտագործված: | հնարավորությունները:<br>Համեմատել տարբեր ստեղծագործություններ:<br>Գտնել նմանություններ և տարբերություններ օգտագործված նյութերի կամ աշխատանքի միջոցների մեջ:<br>Քննարկել տարբեր արվեստագետների աշխատանքները, ի՞նչ են պատմում դրանք իրենց ժամանակների մասին:<br>Քննարկել, թե ինչպես, ինչով և ինչու են ստեղծագործում արվեստագետները:<br>Գեղարվեստական ժառանգության ուսումնասիրություն ժողովրդական արվեստի կամ տեղական երկրագիտական թանգարաններում: | կալումներ է առաջացնում:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները:<br><br>**Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով արտահայտված գաղափարները և համոզմունքները կարող են բերել նոր արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ:<br>Արժևորել գեղագիտությունը և ստեղծարարությունը: |

| Առաջարկվող թեմատիկա |
|---|
| ***Կենցաղային ժանր, դիմանկարի ժանր, խեցեգործության, գորգերի և կարպետների նմուշներ, հայկական մանրանկարչություն:***<br>***Կացուշիկա Հոկուսաի, «Ֆրանցիսկ I-ի ձիով դիմանկարը», Ֆրանսուա Կլուե:*** |
| **Միջառարկայական կապ** |
| ***Մայրենի*** - Կազմել երկխոսության հարցերը, վարել երկխոսություն տարբեր մարդկանց հետ, կատարել նշումներ և ամբողջացնել դրանք մի քանի նախադասություններով: Հասկանալ նկարը, արտահայտել մտքեր պատկերվածի վերաբերյալ:<br>***Մաթեմատիկա*** - Ճշմարիտ և ոչ ճշմարիտ դատողություններ:<br>***Երաժշտություն*** - Քննարկվող թեմաների, տարբեր երգերի ունկնդրում, դերային խաղերի, բեմադրությունների երաժշտական ձևավորում:<br>***Ֆիզկուլտուրա*** - Տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, նպատակասլացության և որոշումներ կայացնելու ունակություն:<br>***Թատրոն*** - Թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների մեկնաբանություններ:<br>***Ես և շրջակա աշխարհը*** - Շրջապատի մարդկանց հետ փոխհարաբերությունները:<br>***Օտար լեզուներ*** - Սեփական կարծիք, վերաբերմունք, զգացմունք հայտնելու հմտությունների ձևավորում: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| S4, S5, S7, S11, S12, S14, S15, S16, S17, S18, S19, S22, S25, S27, S26, S31, S32 |

| ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ | |
|---|---|
| **ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (10 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Նկարն իբրև թեմատիկ-իմաստային միասնություն ընկալելու կարողությունների ձևավորում: | **3-4.Կ.Ս.ՆՄ.2.** Ձևավորել համապատասխան բառապաշար:<br>**3-4.Կ.Ա.ՔԱ.1.** Ճանաչել կերպարվեստի հիմնական տարրերը: |

| | |
|---|---|
| Ինքն իրեն լսելու և միտքը ճիշտ կառուցելու կարողությունների զարգացում: | **3-4.Կ.Ա.ՔԱ.2.** Դասակարգել կերպարվեստի տեսակները:<br>**3-4.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները:<br>**3-4.Կ.Ա.ԱՊ.1.** Ներկայացնել գիտելիքներ արվեստի պատմությունից:<br>**3-4.Կ.Ա.ԱՊ.2.** Ներկայացնել հայկական կերպարվեստի գերադասած արվեստագետներին:<br>**3-4.Կ.Կ.ԱԴ.3.** Ներկայացնել արվեստի դերը շրջապատում: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ինչպե՞ս է արվեստն օգնում հասկանալու տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում ապրած մարդկանց կյանքը:<br>Ո՞ր ժամանակներից են մարդիկ սկսել ստեղծագործել: | |

**Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝**

- անվանել նյութերն ու գործիքները,
- նկարագրել արվեստի ստեղծագործությունները,
- վերլուծել արվեստի ստեղծագործությունները՝ ըստ տեսածի և զգացածի,
- մեկնաբանել, թե ինչպես են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը,
- ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,
- համեմատել նյութերը,
- վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ,
- մանրամասն ներկայացնել ինքնուրույն, զույգով կամ խմբով կատարված աշխատանքները,
- թվարկել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,
- քննել և վերլուծել անցյալում և ներկայում արված ստեղծագործություններն ըստ՝

  - *ժամանակաշրջանների,*
  - *արվեստագետների,*
  - *մշակույթների,*
  - *պատմական ժամանակաշրջանի,*

- *ավանդույթների և այլն,*

- խոսել արվեստի և ստեղծագործելու մասին,
- տարբերել անցյալում և ներկայում ստեղծված աշխատանքները,
- ճանաչել, տարբերել և գնահատել արվեստի աշխատանքները,
- ընտրել շրջապատող իրականությունն արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ,
- հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով,
- հասկանալ, որ արվեստը բոլոր ժամանակների և մշակույթների հաղորդակցման անփոխարինելի լեզու է:

| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|---|
| Աշխարհին հայտնի ստեղծագործությունները:<br>Արվեստի գործերի գեղագիտական արժեքը:<br>Կերպարվեստի տեսակները, ժանրերը:<br>Հայկական կերպարվեստ:<br>Հայ և համաշխարհային կերպարվեստ:<br>Հայ արվեստագետների առանձին ստեղծագործություններ: | Դասակարգել ստեղծագործություններում հադիպող կերպարվեստի տարրերը և սկզբունքները (գույն, գիծ, ձև, պատկեր, մակերես):<br>Համեմատել տարբեր երկրների արվեստագետների աշխատանքներում պատկերված ազգային ինքնություն արտահայտող առարկաները:<br>Ուսումնասիրել ստեղծագործությունները՝ ըստ ոճական առանձնահատկությունների, Որոշել՝ երբ են ստեղծվել դրանք:<br>Դիտել ստեղծագործությունները, ներկայացնել հիմնական գաղափարը:<br>Հայաստանը ներկայացնող բնանկարների, հայ նշանավոր արվեստագետների աշխատանքների վերատպությունների ուսումնասիրում: | **Պատճառ և հետևանք**<br>Պատկեր և ազդեցություն կապը. ցուցադրության նպատակը կարող է տարբեր ընկալումներ առաջացնել:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: |

| | | |
|---|---|---|
| | Տարբեր պատմական իրադարձություններ ներկայացնող ստեղծագործությունների դիտում, երկիրը, սովորույթները ներկայացնող աշխատանքներում առանձնացնել բնորոշ տարրերը:<br>**Նկարագրել** - Ի՞նչ է պատկերված:<br>**Վերլուծել** - Կերպարվեստի ո՞ր տարրերն են կիրառված, ի՞նչ դեր են խաղում այդ տարրերը:<br>**Մեկնաբանել** - Ի՞նչ է պատմում նկարիչը: Եթե ձայները փոխանցելու հնարավորություն լիներ, ի՞նչ ձայներ կլսվեին:<br>**Քննարկել** - Ի՞նչ է պակասում նկարում: Եթե այո, ապա ինչո՞ւ:<br>Կատարել ստեղծագործությունների չորս փուլային վերլուծություն: | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով արտահայտված գա-ղափարները և համոզմունքները կարող են բերել նոր արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորել գեղագիտությունը և ստեղծա-րարությունը: |
| Առաջարկվող թեմատիկա | | |
| ***Լեոնարդո դա Վինչի, Վան Գոգ, Վ. Սուրենյանց, Գ. Բաշինջաղյան, Հովնաթանյաններ, հայկական խեցեգործություն, հայկական գորգ, հայկական զարդարվեստ*** | | |
| Միջառարկայական կապ | | |
| ***Մայրենի*** - Ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերի ու մտքերի արտահայտում խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, ուրիշների հույզերի նկատմամբ համապատասխան վերաբերմունքի դրսևորում: Հասկանալ նկարը, արտահայտել մտքեր պատկերվածի վերաբերյալ:<br>***Մաթեմատիկա*** - Ճշմարիտ և ոչ ճշմարիտ դատողություններ:<br>***Երաժշտություն*** - Քննարկվող թեմաների շուրջ ռիթմական պատկերների և մեղեդիների ստեղծում:<br>***Ֆիզկուլտուրա*** - Տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, նպատակասլացության և որոշումներ կայացնելու ունակություն:<br>***Թատրոն*** - Թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, | | |

| |
|---|
| ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների մեկնաբանություններ: <br><br> ***Ես և շրջակա աշխարհը*** - Շրջապատի մարդկանց հետ փոխհարաբերություններ: <br><br> ***Օտար լեզուներ*** - Սեփական կարծիք, վերաբերմունք, զգացմունք հայտնելու հմտությունների ձևավորում: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| S4, S5, S7, S11, S12, S14, S15, S16, S17, S18, S19, S22, S25, S27, S26, S31, S32 |

<table>
<tr><th colspan="2">ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ</th></tr>
<tr><th colspan="2">ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (8 ժամ)</th></tr>
<tr><td>Նպատակը</td><td>Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td>Հասկանալ, որ արվեստն արտահայտում է իրականությունը:<br>Ուսումնասիրել պատմական, մշակութային, հիշարժան իրադարձությունների արտահայտումը արվեստի միջոցով:<br>Գիտակցել, որ արվեստը կարող է ազդեցություն ունենալ մեր իրականության վրա:</td><td rowspan="3">3-4.Կ.Ս.ՆՄ.2. Ձևավորել համապատասխան բառապաշար:<br>3-4.Կ.Ա.ՔԱ.1. Ճանաչել կերպարվեստի հիմնական տարրերը:<br>3-4.Կ.Կ.ԱԴ.1. Ներկայացնել արվեստի ստեղծագործություններում պատկերված միևնույն երևույթի տարբեր արտահայտությունները:<br>3-4.Կ.Կ.ԱԴ.2. Հայտնել կարծիք մշակութային հաստատությունների նշանակության վերաբերյալ:<br>3-4.Կ.Կ.ԱԴ.3. Ներկայացնել արվեստի դերն իր շրջապատում:</td></tr>
<tr><td>Ուղղորդող հարցադրում</td></tr>
<tr><td>- Ի՞նչ է արտահայտում արվեստը:<br>-Ինչպե՞ս են ստեղծագործում արվեստագետները: Ինչո՞ւ է դա կարևոր:</td></tr>
<tr><td colspan="2">Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</td></tr>
<tr><td colspan="2">• անվանել նյութերն ու գործիքները,<br>• ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,</td></tr>
</table>

- համեմատել նյութերը,
- վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ,
- ընտրել շրջապատող իրականությունն արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ,
- հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով,
- հասկանալ, որ արվեստը բոլոր ժամանակների և մշակույթների հաղորդակցման անփոխարինելի լեզու է,
- քննարկել և ներկայացնել մշակութային իրադարձություն,
- աշխատանքներում ցուցադրել մյուս ուսումնական առարկաներից ստացած գիտելիքները:

| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|---|
| Արվեստի ստեղծագործություններում պատկերված միևնույն երևույթի տարբեր արտահայտությունները:<br>Արվեստ և իրականություն:<br>Արվեստը մեր շրջապատում:<br>Արվեստագիտական մասնագիտություններ: | Հետազոտել մեր իրականության մեջ արվեստի ներկայությունը:<br>Քննարկել արվեստի դերը:<br>Ուսումնասիրել արվեստագետների դերը: Որոշել նրանց գործունեության առանձնահատկությունները և դրանց կարևորությունը:<br>Ուսումնասիրել որևէ իրադարձություն ընտանիքում, համայնքում, երկրում, աշխարհում, որին անդրադարձել է արվեստը:<br>Նկարագրել ՀՀ պետական խորհրդանիշները, դրանց խորհրդաբանությունը: | **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Ուսումնասիրել տարբեր մարդկանց պատմությունները, ստեղծագործությունները, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:<br><br>**Օրինաչափություններ** |

| | | |
|---|---|---|
| | Արվեստագիտական որևէ մասնագիտության վերաբերյալ պատրաստել կարճ զեկույցներ:<br>Արդյոք պարտավորություններ ունե՞ն արվեստագետներն իրենց երկրի քաղաքացիների և հայրենիքի հանդեպ:<br>Ներկայացնել որևէ մշակութային իրադարձության կամ արվեստի հետ առնչության սեփական օրինակ: | Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները:<br><br>**Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ուսումնասիրել այն ուղիները, որոնցով արտահայտված գաղափարները և համոզմունքները կարող են բերել նոր արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորել գեղագիտությունը և ստեղծարարությունը: |

| Առաջարկվող թեմատիկա |
| --- |
| ***Տիրամոր կերպարն արվեստում, փարվա եղանակներ, փարբեր ժողովուրդների ազգային փոներ:*** |
| **Միջառարկայական կապ** |
| ***Մայրենի*** - Ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերի ու մտքերի արտահայտում խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, ուրիշների հույզերի նկատմամբ համապատասխան վերաբերմունքի դրսևորում: Հասկանալ նկարը, արտահայտել մտքեր պատկերվածի վերաբերյալ:<br>***Մաթեմափիկա*** - Ճշմարիտ և ոչ ճշմարիտ դատողություններ:<br>***Երաժշփություն*** - Քննարկվող թեմաների շուրջ ռիթմական պատկերի և մեղեդու ստեղծում:<br>***Ֆիզկուլփուրա*** - Տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, նպատակասլացության և որոշումներ կայացնելու ունակություն:<br>***Թափրոն*** - Թատրոնի տարբեր տեսակների (ստվերային, տիկնիկային, մատնային, երաժշտական, սովորական) կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների մեկնաբանություններ:<br>***Ես և շրջակա աշխարհը*** - Շրջապատի մարդկանց հետ փոխհարաբերությունները:<br>***Օփար լեզուներ*** - Սեփական կարծիք, վերաբերմունք, զգացմունք հայտնելու հմտությունների ձևավորում: Ժողովրդական տոներ: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| S12, S16, S17, S18, S19, S24, S26, S27, S31, S32 |

## 5-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

**Առաջարկվում է (տարեկան 68 ժամ)**

| ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| **ՆՅՈՒԹԵՐ, ՄԻՋՈՑՆԵՐ (6 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտությունների ձևավորում:<br>Կրկնօրինակելու և չափումներ կատարելու հմտությունների ձևավորում: | **5-6.Կ.Ս.ՆՄ.1.** Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար (2D, 3D):<br>**5-6.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:<br>**5-6.Կ.Ս.ՆՄ.3.** Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին:<br>**5-6.Կ.Ս.ՆԵ.1.** Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:<br>**5-6.Կ.Ս.ՆԵ.2.** Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ:<br>**5-6.Կ.Ս.ՆԵ.3.** 2D և 3D երևակայական աշխատանքներ:<br>**5-6.Կ.Ա.ՔԱ.3.** Վերլուծել իր և ընկերների աշխատանքները բոլոր մանրամասներով: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ինչպե՞ս են արվեստագետները նախապատրաստվում, ի՞նչ գործիքներ և միջոցներ են օգտագործում:<br>Ի՞նչ քայլեր են հարկավոր թեմատիկ գաղափարը ստեղծագործության վերածելու համար:<br>Ինչպե՞ս են արվեստագետները վերաբերվում իրենց գործիքներին և նյութերին:<br>Կա՞ն արդյոք գործիքների, նյութերի և տարածքի պահպանման կանոններ:<br>Կարո՞ղ ենք արդյոք համագործակցել և ստեղծագործել միևնույն տարածքում: | |

| Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝ | | |
|---|---|---|
| • ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ,<br>• ստանալ ծավալային և հարթ պատկերներ,<br>• ստեղծել կրկնօրինակներ,<br>• փորձարկել նյութերը և գործիքները,<br>• ցուցադրել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ մեթոդների, գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների իմացություն,<br>• անվանել նյութերն ու գործիքները,<br>• ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,<br>• համեմատել պատկերները,<br>• նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար, աշխատանքն ավարտելուց հետո կարգի բերել տարածքը,<br>• ստեղծել արտահայտիչ բնանկարներ, դիմանկարներ, նատյուրմորտներ և հորինվածքներ,<br>• ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես ունեցած հուզական վերաբերմունք,<br>• ստեղծել 2D և 3D երևակայական աշխատանքներ,<br>• մեկնաբանել և վերլուծել՝<br>- ինչն է հավանում, ինչը՝ ոչ<br>- ներկայացնել կարծիք: | | |
| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |

| | | |
|---|---|---|
| Ստեղծագործական աշխատանքի համար կիրառվող գործիքների և նյութերի ընտրություն:<br>Հարթ  և ծավալային պատկերներ:<br>Հարթության վրա պատկերի կառուցում:<br>Գունանկարի, գծանկարի, տպագրության/դաջվածքի, ծավալային աշխատանքների կատարման մեթոդները:<br>Դաջվածքի համար օգտագործվող միջոցների ընտրությունը՝ ըստ առաջադրված թեմայի:<br>Մասնագիտական բառարան:<br>Նյութերի և միջոցների խնայողություն: | Ստեղծագործական աշխատանքների համար առաջադրված թեմաների կամ խնդիրների հետազոտություն, նյութերի ընտրություն:<br>Գունանկարի, գծանկարի, տպագրության/դաջվածքի, ծավալային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի ընտրություն, նոր նյութերի փորձարկումներ:<br>Ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ տարբեր մեթոդների, գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների փորձեր, վարժություններ:<br>Կավի վրա տարբեր ֆակտուրաների դաջում (տերև, ծաղիկ, ցանց, ճյուղ և այլն), հետագա մշակում:<br>ԴԿԱ-ում ազգագրական, ժողովրդական տարրերի և բարձր արվեստի համադրության փորձեր:<br>Զարդանախշ, երկրաչափական, բուսական կամ կենդանական պատկերների միջոցով կոլաժների, ծավալային աշխատանքների կատարում:<br>Ուրվապատկերների, նշանների, նախշերի և խորհրդանիշների պատկերում կամ պատրաստում (2D, 3D):<br>Տեքստուրայի և ֆակտուրայի ուսումնասիրություն:<br>Բացօթյա պայմաններում ստեղծագործական աշխատանքի, | **Պատճառ և հետևանք, մեխա-նիզմ և կանխատեսում**<br>Նյութի և արդյունքի կապը. նյութի ընտրությունը միևնույն թեմայի պատկերման տարբեր արդյունքներ է տալիս:<br><br>**Գիտատեխնիկական նորարա-րություն**<br>Գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, մարդ-կային գործունեության վրա, նոր հնարավորությունները, դրանց չարաշահումը կամ կիրառումը հանուն շրջակա միջավայրի պահպանման: Շրջակա միջա-վայրի հարմարեցումը մարդու կարիքներին:<br><br>**Օրինաչափություններ** |

| | | |
|---|---|---|
| | քննարկումների կազմակերպում:<br>Ստեղծել կերպարվեստի եզրույթների նկարազարդ բառարաններ: Ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար:<br>Համեմատել պատկերները:<br>Միևնույն առաջադրանքի մեջ քարտեզագրման, քանդակի, խեցեգործության, գեղանկարչության, լուսանկարչության համադրում:<br>Նյութերի և միջոցների խնայողություն: Աշխատանքային տարածքի ճիշտ կառուցում: | Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն: |
| **Առաջարկվող թեմատիկա** | | |
| ***Թատերական ձևավորումներ, նվագարաններ, բնապատկերներ կամ բնությունից արված ճեպանկարներ, գրական ստեղծագործությունների ձևավորումներ, զարդարվեստ, խեցեգործություն, ոսկերչություն, խճանկար, որմնանկար:*** | | |
| **Միջառարկայական կապ** | | |
| ***Մայրենի*** - Կազմել հարցեր կամ պլան լսածի և կարդացածի շուրջ և գրավոր վերաշարադրել դեպքերի հաջորդական ընթացքը:<br>***Մաթեմատիկա*** - Մոդելավորել և լուծել շարժման, համատեղ աշխատանքի, արտադրողականության, բյուջեի, մասերի վերաբերյալ, ինչպես նաև հետաքրքրաշարժ և խաղային խնդիրներ:<br>***Բնագիտություն*** - Բնության մեջ և կենցաղում հանդիպող օրինակներով ներկայացնել հալման և պնդացման, գոլորշիացման և խտացման, եռման երևույթները:<br>***Երաժշտություն*** - Երաժշտական նյութ, արտահայտչամիջոցների կիրառում, մտահղացում:<br>***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու | | |

| |
|---|
| հմտություններ: <br>***Առողջ ապրելակերպ*** - Մարմինն առողջ և մաքուր պահելու կարևորությունը: <br>***Տեխնոլոգիա*** - Ընտրել և օգտագործել համապատասխան նյութեր և ռեսուրսներ դիզայներական և նախագծային աշխատանքի համար: <br>***Օտար լեզուներ*** - Պարզ ձևակերպումներով արտահայտել սեփական կարիքները, նախընտրությունները: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ2, Հ4, Հ8, Հ9, Հ11, Հ13, Հ23, Հ25, Հ27, Հ29, Հ33, Հ43, Հ44 |

| **ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԱՐՐԵՐ ԵՎ ԴԻԶԱՅՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ (10 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ստեղծագործական աշխատանքներում կերպարվեստի և դիզայնի տարրերի գրագետ կիրառում: <br>Լույսի և ստվերի ուսումնասիրություն, պատկերներին ծավալ հաղորդելու հմտությունների ձևավորում: <br>Արտահայտիչ աշխատանքներ ստեղծելու հմտությունների ձևավորում: <br>**Ուղղորդող հարցադրում** <br>Ի՞նչ հիմնարար գիտելիքներ են հարկավոր գրագետ ստեղծագործական աշխատանք կատարելու համար: <br>Ինչպե՞ս է դիզայնի սկզբունքների իմացությունն ազդում դեկորատիվ աշխատանքների արտահայտչականության | **5-6.Կ.Ս.ՆՄ.1.** Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար (2D, 3D): <br>**5-6.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել արվեստի եզրույթների բառարան: <br>**5-6.Կ.Ս.ՆՄ.3.** Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին: <br>**5-6.Կ.Ա.ԴՏ.1.** Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը (հորիզոնի գիծ, լույս ու ստվեր, համաչափություն, հավասարակշռություն, հակադրություն, շարժում, ազդեցություն): <br>**5-6.Կ.Ա.ԴՏ.2.** Կիրառել դիզայնի սկզբունքներն առաջարկվող գործունեության ձևերում (արդյունաբերական գրաֆիկա): <br>**5-6.Կ.Ս.ՆԵ.2.** Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ: <br>**5-6.Կ.Ս.ՆԵ.3.** 2D և 3D երևակայական աշխատանքներ: |

| | |
|---|---|
| վրա: | |

| Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝ |
|---|
| • ստանալ ծավալային և հարթ պատկերներ,<br>• ցուցաբերել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ,<br>• Ստանալ ավարտուն ծավալային և հարթ պատկերներ,<br>• ստեղծել կրկնօրինակներ,<br>• փործարկել  նյութերը և գործիքները,<br>• ցուցաբերել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ մեթոդների, գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների իմացություն,<br>• անվանել նյութերն ու գործիքները,<br>• ներկայացնել  իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,<br>• համեմատել  պատկերները,<br>• նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար, աշխատանքն ավարտելուց հետո կարգի բերել տարածքը,<br>• ստանալ  ճանաչելի հարթ և ծավալային պատկերներ ու հորինվածքներ՝ ապահովելով ծավալ, տոն, տարածություն, ռիթմ և ամբողջականություն,<br>• կիրառել  գուներանգներն աշխատանքներին հուզականություն հաղորդելու համար,<br>• ստեղծել հորինվածքներ՝ գաղափարներն արտահայտելով կերպարվեստի տարրերի ու սկզբունքների կիրառմամբ,<br>• կատարել հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ՝ կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առավել արտահայտիչ ներկայացնելով, |

- բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա,
- ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես ունեցած հուզական վերաբերմունք:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Հորիզոնի գիծ,<br>Լույս ու ստվեր,<br>Համաչափություն,<br>Հավասարակշռություն,<br>Հակադրություն,<br>Շարժում,<br>Ազդեցություն:<br>Դիզայն - ձևավորում, հարդարում: | Ստեղծել հորինվածքներ՝ գաղափարներն արտահայտելով կերպարվեստի տարրերի ու սկզբունքների կիրառմամբ:<br>Ուսումնասիրել *հորիզոնի գիծ, լույս ու ստվեր, համաչափություն, հավասարակշռություն, հակադրություն, շարժում* հասկացությունները, ճեպանկարների և էսքիզների միջոցով կառուցել գրագետ հորինվածքներ:<br>Հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակների կիրառում:<br>Կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առավել արտահայտիչ ներկայացնող դասական, իրատեսական արվեստի ստեղծագործությունների ուսումնասիրություններ և կրկնօրինակումներ:<br>Բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա: | **Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում**<br>Նյութի և արդյունքի կապը. նյութի որակը և խտությունը թղթի վրա տարբեր արդյունքներ են տալիս:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները:<br><br>**Գիտատեխնիկական** |

| | | |
|---|---|---|
| | Ստանալ ճանաչելի հարթ և ծավալային պատկերներ ու հորինվածքներ՝ ապահովելով ծավալ, տոն, տարածություն, ռիթմ և ամբողջականություն:<br>Կիրառել գուներանգները աշխատանքներին հուզականություն հաղորդելու համար: Գունային և գծային հնարներով ապահովել հորինվածքի պատկերային կամ թեմատիկ ազդեցությունը:<br>ԴԿԱ-ում ազգագրական, ժողովրդական ստեղծագործության տարրերի և բարձր արվեստի համադրության փորձեր:<br>Կերպարվեստի տարրերի ուսումնասիրություն ժողովրդական արվեստների միջոցով: Հայկական գորգ, կարպետ, խաչքար, տարազ և այլն:<br>Միևնույն բնօրինակը արվեստի տարբեր տեսակներով և ոճերով արտահայտելու հմտությունների ձևավորում, փորձերի և էսքիզների միջոցով:<br>Դիզայն՝ ձևավորում, հարդարում: | **նորարարություն**<br>Գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, մարդ-կային գործունեության վրա, շրջակա միջավայրի ազդեցու-թյունը մարդկային գործունեու-թյան վրա: |

**Առաջարկվող թեմատիկա**

***ԳԾԱՆԿԱՐ- Նատյուրմորտ, դիմանկար, բնության տեսարաններ, շինություններ, կենդանիներ, մայր հողի բարիքները, աշնանային տերևներ, խոհանոցային հին սպասք, ուռենու ճյուղեր, ծառեր:***

***ԳՈՒՆԱՆԿԱՐ- Նատյուրմորտ , բնության տեսարաններ, շինություններ, կենդանիներ, «Փողոցն իմ պատուհանից«:***

***ԴԻԶԱՅՆ - Խորհրդանիշներ, ազգային հագուստ, սպասք:***

***ԴԿԱ - զարդարվեստ, խեցեգործություն, գորգ, տարազ-գոտի, գլխարկ, ոսկերչություն:***

| Միջառարկայական կապ |
|---|
| ***Մայրենի*** - Կազմել հարցեր կամ պլան լսածի և կարդացածի շուրջ, գրավոր վերաշարադրել դեպքերի հաջորդական ընթացքը: <br> ***Մաթեմատիկա*** - Մոդելավորել և լուծել մասերի վերաբերյալ հետաքրքրաշարժ և խաղային խնդիրներ: Հարաբերություն, համեմատություն, համաչափություն, մասշտաբ: <br> ***Երաժշտություն*** - Երաժշտական նյութ, արտահայտչամիջոցների կիրառում, մտահղացում: <br> ***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: <br> ***Առողջ ապրելակերպ*** - Արտահայտել զգացմունքները և կարողանալ ցույց տալ սեփական դիրքորոշումը՝ ուզում է ինչ-որ գործողություններ անել, թե ոչ: <br> ***Թատրոն*** - Թատրոնի տարբեր տեսակների կիրառմամբ ունկնդրած, ընթերցած ստեղծագործությունների և հորինած հեքիաթների հերոսների պատկերում: <br> ***Բնագիտություն*** - Տեղեկություններ զրույցներում հանդիպող բույսերի, կենդանիների մասին: <br> ***Օտար լեզուներ*** - Պարզ ձևակերպումներով արտահայտել սեփական կարիքները, նախընտրությունները: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ2, Հ4, Հ8, Հ9, Հ11, Հ13, Հ23, Հ25, Հ27, Հ29, Հ33, Հ43, Հ44 |

| **ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ (12 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ստեղծել իրատեսական, վերացական և երևակայական 2D և 3D աշխատանքներ: | **5-6.Կ.Ս.ՆՄ.1.** Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար (2D, 3D): |

| Ուղղորդող հարցադրում | 5-6.Կ.Ս.ՆՄ.2. Պատրաստել արվեստի եզրույթների բառարան: |
|---|---|
| Ինչպե՞ս են արվեստագետները ստեղծագործում:<br>Ինչպե՞ս են արվեստագետները կռահում. որ աշխատանքը հաջողված է:<br>Կարելի՞ է արդյոք սովորել սեփական սխալներից:<br>Հնարավո՞ր է պատկերել զգացողություն: | **5-6.Կ.Ս.ՆՄ.3.** Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին:<br>**5-6.Կ.Ս.ՆԵ.1.** Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:<br>**5-6.Կ.Ս.ՆԵ.2.** Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ:<br>**5-6.Կ.Ս.ՆԵ.3.** 2D և 3D երևակայական աշխատանքներ:<br>**5-6.Կ.Ա.ՔԱ.3.** Վերլուծել իր և ընկերների աշխատանքները բոլոր մանրամասներով: |

**Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝**

- ստանալ ծավալային և հարթ պատկերներ,
- ցուցաբերել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորման հմտություններ,
- ստանալ ծավալային և հարթ պատկերներ,
- ստեղծել կրկնօրինակներ,
- փորձարկել նյութերը և գործիքները,
- Ցուցադրել ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ տարբեր մեթոդներ,
- ցուցաբերել գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների իմացություն,
- անվանել նյութերն ու գործիքները,
- ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,
- համեմատել պատկերները,
- նյութերն օգտագործել մտածված և խնայողաբար, աշխատանքն ավարտելուց հետո կարգի բերել տարածքը,
- ստեղծել արտահայտիչ բնանկարներ, դիմանկարներ, նատյուրմորտներ և հորինվածքներ,
- ստանալ ճանաչելի հարթ և ծավալային պատկերներ ու հորինվածքներ՝ ապահովելով ծավալ, տոն, տարածություն, ռիթմ և

ամբողջականություն,

- կիրառել գուներանգներն աշխատանքներին հուզականություն հաղորդելու համար,
- ստեղծել հորինվածքներ՝ գաղափարներն արտահայտելով կերպարվեստի տարրերի ու սկզբունքների կիրառմամբ,
- սԿատարել հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ՝ կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առավել արտահայտիչ ներկայացնելով,
- բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա,
- ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես ունեցած հուզական վերաբերմունք:
- ինքնուրույն, զույգով կամ խմբով մանրամասն ներկայացնել աշխատանքները,
- ներկայացնել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Գրական ստեղծագործության ձևավորում կամ պատկերազարդում:<br>Պատկերում բնօրինակից:<br>Դիմանկար, ինքնանկար:<br>Բնանկար<br>Նատյուրմորտ<br>Թեմատիկ, ժանրային հորինվածք:<br>Իրական, վերացական զգացողություններ, | Գրական ստեղծագործության ձևավորում կամ պատկերազարդում:<br>Պատկերային տարածքի և իրական տարածության մեջ համաչափությունների, փոխհարաբերությունների պահպանմանը և կազմակերպմանն առնչվող վարժություններ: Առաջադրանքներում պատկերվող առարկաների կառուցվածքի, ձևի, ծավալի, հեռանկարչական կրճատումների, լուսաստվերների, | **Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում**<br>Աշխատանքի բնույթ և արդյունք կապը. նյութը, չափը, խնդիրը, թեմաներն ազդում են աշխատանքի բնույթի վրա, ինչը տարբեր արդյունքներ է տալիս: |

| | | |
|---|---|---|
| բնության անբացատրելի երևույթներ, դիցաբանական, համամարդկային, կենցաղային թեմաներ: | լուսաօդային միջավայրի ինքնուրույն վերլուծում և պատ-կերում:<br>Բնօրինակից և հիշողությամբ կենդանիների, թռչունների և մարդու ֆիգուրատիվ պատկերում (ներառյալ ճեպանկարում):<br>Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ կենցաղային տարբեր իրերի՝ մրգերի, բանջարեղենի, ծաղիկների պատկերում (ներառյալ ճեպանկարում):<br>Տարբեր գույների երկու ծալքավոր կտորների ֆոնին 2–3 առարկաներից կազմված նատյուրմորտների բնօրինակից պատկերում (գունավոր մատիտներ):<br>Նկարչություն բնության գրկում (պլեներ):<br>Նատյուրմորտների պատկերում բնօրինակից:<br>Մրգերից, բանջարեղենից, ծաղիկներից կազմված նատյուրմորտների էտյուդներ:<br>Թռչունների, կենդանիների պատկերում բնօրինակից (էտյուդներ և երկարատև պատկերում): Վառ արտահայտված արտացոլումներով տաք և սառը գունային գամմայով նատյուրմորտների, աշնանային և գարնանային ծաղիկների պատկերում:<br>Աշնանային և գարնանային բնության էտյուդային | **Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն:<br><br>**Մասշտաբ, համամասնություն, քա-նակ**<br>Մասշտաբները փոխվելիս փոխ-վում են պատկերների չափերը, սակայն համամասնությունը պահպանվում է, ինչպես օրինակ՝ բնօրինակից պատկերման աշխատանքներում: |

| | | |
|---|---|---|
| | պատկերում (պլեներ) կամ պատկերում հիշողությամբ.<br>ուսուցչի հետ միասին կատարված դիտումներ և ուսումնասիրություններ:<br>Տրամադրության և իրավիճակի արտահայտում գույնի, երանգի, ռիթմի և ձևի հատկությունների օգտագործմամբ:<br>Պատկերվող կերպարների (մարդկանց, կենդանիների, թռչունների) անհատական բնութագրի, յուրահատուկ գծերի ըմբռնում և արտահայտում:<br>ԴԿԱ-ում ազգագրական, ժողովրդական ստեղծագործության տարրերի և բարձր արվեստի համադրության փորձեր: | |

**Առաջարկվող թեմատիկա**

***Դիմանկար, ինքնանկար, բնանկար, նատյուրմորտ, թեմատիկ, ժանրային հորինվածք, իրական, վերացական զգացողություններ, բնության անբացատրելի երևույթներ, դիցաբանական, համամարդկային, կենցաղային թեմաներ, հայկական լեռնաշխարհի կյանքը, կենցաղն  ու լեգենդները,***

***ճարտարապետական կոթողներ, ամրոցներ, եկեղեցի, ԴԿԱ ՝տոհմածառ, դիցաբանություն, հայկական աղամաններ, պաննո, որմնանկար, խճանկար:***

**Միջառարկայական կապ**

***Մայրենի*** -  Նկարազարդումներով, ապլիկացիայով, ծեփելով  ուղեկցել ելույթը՝ հաղորդելիք նյութն առավել գրավիչ դարձնելու համար:

***Մաթեմատիկա*** - Մոդելավորել և լուծել հետաքրքրաշարժ և խաղային խնդիրներ: Կազմել խնդրի լուծման քայլաշար:

| |
|---|
| ***Բնագիտություն*** - Բնության մեջ և կենցաղում հանդիպող օրինակներով ներկայացնել հալման և պնդացման, գոլորշիացման և խտացման, եռման երևույթները:<br>***Երաժշտություն*** - Երաժշտական նյութ, արտահայտչամիջոցների կիրառում, մտահղացում, տրված թեմայով հորինել վարիացիաներ:<br>***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ:<br>***Առողջ ապրելակերպ*** - Մարմինը առողջ և մաքուր պահելու կարևորությունը:<br>***Տեխնոլոգիա*** - Գծել տարբեր մարմինների աքսիոնոմետրիկ գծագիր:<br>***Ինֆորմատիկա*** - Պատկերի հետ աշխատանք. օգտագործել տարբեր չափերի վրձիններ, ձևապատկերներ և այլ արդյունավետ գործիքներ և սիմետրիայի գործիքն օգտագործելով՝ ստեղծել նկարներ (ծալել ուղղահայաց կամ հորիզոնական առանցքի շուրջ, շրջել): Ընտրել նկարի համապատասխան հատվածները, պատճենել դրանք և փոխել չափերը:<br>***Անհատը և հասարակությունը*** - Կատարել հետազոտական աշխատանք՝ զարգացնելով քննադատական մոտեցում:<br>***Օտար լեզուներ*** - Պարզ ձևակերպումներով արտահայտել սեփական կարիքները, նախընտրությունները: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ4, Հ5, Հ9, Հ17, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ33, Հ34, Հ37, Հ45, Հ46, Հ47 |

| **ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ (4 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ցուցադրություններ կազմակերպելու հմտությունների ձևավո-րում: | **5-6.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:<br>**5-6.Կ.Ս.ՆՄ.3.** Խնայողաբար վերաբերվել օգտագործվող նյութերին: |

| | |
|---|---|
| Աշխատանքը գովազդելու, ճիշտ ներկայացնելու հմտություններ: | **5-6.Կ.Ա.ՎՑ. 1.** Ընտրել ստեղծագործություններ ցուցադրման համար և աշխատել խմբով ցուցահանդես կազմակերպելու նպատակով:<br>**5-6.Կ.Ա.ՎՑ. 2.** Առաջարկել խմբային և անհատական ցուցադրությունների հետաքրքիր տարբերակներ:<br>**5-6.Կ.Ա.ՎՑ.3.** Առաջարկել նախագծեր առավել արդյունավետ ցուցադրելու նպատակով:<br>**5-6.Կ.Ա.ՎՄ. 1.** Ընտրել և ներկայացնել աշխատանքները ցուցադրության համար:<br>**5-6.Կ.Ա.ՎՄ. 2.** Նշել այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել է ցուցադրություն կազմակերպելիս:<br>**5-6.Կ.Ա.ՔԱ.1.** Քննարկել արվեստի ստեղծագործությունը:<br>**5-6.Կ.Ա.ՔԱ.3.** Վերլուծել իր և ընկերների աշխատանքները բոլոր մանրամասներով:<br>**5-6.Կ.Կ.ԱԴ.3.** Ներկայացնել արվեստի դերն առօրյայում: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ինչպե՞ս են պահվում ստեղծագործությունները:<br>Ովքե՞ր են դրանք հավաքում, պահպանում և ի՞նչ նպատակով:<br>Ի՞նչ չափանիշներով են ընտրվում ստեղծագործությունները:<br>Հարկավո՞ր է արդյոք ցուցադրել աշխատանքները:<br>Ի՞նչ է նշանակում արվեստի ստեղծագործության ցուցադրություն: | |

| **Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝** | | |
|---|---|---|
| • անվանել նյութերն ու գործիքները,<br>• ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,<br>• համեմատել պատկերները,<br>• մենակ կամ խմբով կազմակերպել ցուցադրություններ,<br>• պատրաստել նախագծեր և առավել արդյունավետ ցուցադրել դրանք,<br>• առաջարկել և նախաձեռնել աշխատանքների ցուցադրության հետաքրիր տարբերակներ,<br>• ձևակերպել հարցերը և պատասխանները, թե որտեղ, երբ, ինչու և ինչպես պետք է ընտրվեն աշխատանքները ցուցադրության համար,<br>• ձևակերպել հարցերը և պատասխանները, թե ինչու և ինչպես պետք է պատրաստվեն աշխատանքները ցուցադրության համար,<br>• ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա: | | |
| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| Թեմատիկ աշխատանքների խմբային ցուցադրություններ:<br>Ավանդական և ոչ ավանդական մոտեցումներ:<br>Նախագիծ:<br>Համայնքային, տարածաշրջանային միջոցառումների ստեղծագործական նախագծեր և ներկայացում:<br>Ցուցադրություն: | Ստեղծել աշխատանքային տետր կամ պորտֆոլիո:<br>Մենակ կամ խմբով առանձնացնել աշխատանքները՝ ըստ առաջարկված չափանիշների:<br>Ձևակերպել հարցերը և պատասխանները, թե որտեղ, երբ, ինչու և ինչպես պետք պատրաստվեն աշխատանքները ցուցադրության համար:<br>Ուսումնասիրել համայնքի, տարածաշրջանի համար առաջարկված միջոցառումների ծրագրերը: Նախագծել աշխատանքների բնույթն ու ընթացքը, անհրաժեշտ | **Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանու-թյուններն ու տարբերություն-ները: Գտնել ներդաշնակու-թյուն:<br><br>**Համակարգեր և մոդելներ** |

<table>
<tr><td>Արդյունավետ ցուցադրություններ կազմակերպելու սկզբունքներ:</td><td>նյութերը: Կազմակերպել միջոցառումների մասնակցության աշխատանքներ:<br>Հաստատել անհրաժեշտ կապեր:<br>Ստեղծել պայմանավորվածություններ:<br>Մեկնաբանել ստեղծագործություններից ստացած տպավորությունները:<br>Բացատրել, թե ինչու են ընտրվել տվյալ աշխատանքները:<br>Նշել և մեկնաբանել ցուցադրության կազմակերպման նպատակները, հիմնական սկզբունքները:<br>Մեկնաբանել սեփական աշխատանքները:<br>Աշխատել խմբով:<br>Սովորողների կողմից կատարված աշխատանքների կամ թեմատիկ առանձին ուղղվածություն պարունակող ստեղծագործությունների և առարկների ցուցադրություն:<br>Դասընթացի այս ձևը կարող է կազմակերպվել որևէ առարկայի հետ ինտեգրված:</td><td>Համակարգը՝ որպես ընդհանուր գաղափարով, թեմայով, մոտեցումով կա-տարված ստեղծագործությու-նը (ները) ներկայացնելու ընդ-հանրական մոտեցում, որով յուրաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել:</td></tr>
<tr><td colspan="3">Առաջարկվող թեմատիկա</td></tr>
<tr><td colspan="3">Էպոս, ազգային տոներ, ծեսեր, գովազդ, թատերական ներկայացում, թեմատիկ ցուցադրություններ, վիպաշխարհ, տոհմածառ, գրերի գյուղ:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապ</td></tr>
<tr><td colspan="3">Մայրենի - Ելույթ ունենալ լսարանի առջև, տարբեր աղբյուրներից գտած նյութը ներկայացնել նոր ձևով, վերաձևակերպել,</td></tr>
</table>

| |
|---|
| վերաշարադրել սեփական բառերով՝ տալով համապատասխան բացատրություններ (պարաֆրազ և պարզ վերլուծություն): <br> ***Մաթեմատիկա*** - Հաշվարկել բազմակի ելք ունեցող պարզագույն իրադրություններում հնարավոր ելքերը և դրանցից առանձնացնել նշված պայմանին բավարարողները: <br> ***Երաժշտություն*** - Երգի, ռոմանսի, խմբերգի հիմնական գաղափարը: Հուզական արձագանք, տպավորությունները ներկայացնել փոքրիկ էսսեով, արժևորել ազգային և համաշխարհային կատարողների և նվագախմբերի արվեստը: <br> ***Ֆիզկուլտուրա*** - Փոխօգնության, կարգապահության, համարձակության, համագործակցության հմտություններ: <br> ***Անհատը և հասարակությունը*** - Օգտագործել մեթոդներ համապատասխան տեղեկությունները հավաքելու և արձանագրելու համար: <br> ***Ինֆորմատիկա***- Գնահատել, թե ինչպես է տեղեկատվությունը պահպանվել տարբեր դարաշրջաններում: <br> ***Օտար լեզուներ*** - Պարզ տեղեկատվության բովանդակություն, տարբերակել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ4, Հ5, Հ8, Հ10, Հ12, Հ14, Հ16, Հ17, Հ19, Հ24, Հ26, Հ30, Հ32, Հ35, Հ42 |

| **ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ** | |
|---|---|
| **ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ (6 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ձևավորել քննարկելու, վերլուծություններ կատարելու հմտություններ: <br> Ստեղծագործություններում արվեստագետի անհատականության վերհանում: | **5-6.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել արվեստի եզրույթների բառարան: <br> **5-6.Կ.Ա.ՔԱ.1.** Քննարկել արվեստի ստեղծագործությունը: <br> **5-6.Կ.Ա.ՔԱ.2.** Դասակարգել կերպարվեստի տեսակները, ժանրերը: <br> **5-6.Կ.Ա.ՔԱ.3.** Վերլուծել իր և ընկերների աշխատանքները բոլոր մանրամասներով: |
| **Ուղղորդող հարցադրում** | |

| | |
|---|---|
| Ի՞նչ է ստեղծագործական անհատականությունը:<br>Ստեղծագործությունից ի՞նչն է ավելի շատ տպավորվում, ազդում մարդկանց վրա:<br>Ի՞նչ չափանիշներով է գնահատվում ստեղծագործությունը: | **5-6.Կ.Ա.Գ.1.** Գնահատել ստեղծագործությունները՝ ըստ չափանիշների:<br>**5-6.Կ.Ա.Գ.2.** Ցույց տալ աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը:<br>**5-6.Կ.Կ.ԱԴ.1.** Ներկայացնել արվեստի ստեղծագործությունների նշանակու-թյունը պատմության տեսանկյունից: |
| **Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝** | |

- անվանել նյութերն ու գործիքները,
- ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,
- համեմատել պատկերները,
- վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ,
- ինքնուրույն, զույգով կամ խմբով մանրամասն ներկայացնել աշխատանքները,
- ներկայացնել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,
- բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն),
- ներկայացնել շրջապատող իրականությունն արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ,
- բացատրել, թե ինչպես են տարբեր մշակույթներ ներկայանում իրենց յուրահատուկ արվեստով,
- հասկանալ, որ արվեստը ներկայացնող բոլոր մասնագիտություններն անկրկնելի և կարևոր են:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Քննարկումներ ստեղծագործական աշխատանքներում թեմայի արդիականության վերաբերյալ:<br>Ստեղծագործության զգայական անդրադարձ հնարների կիրառման վերաբերյալ:<br>Գնահատում և ինքնագնահատում: | Ժանրերի ֆունկցիոնալ տարբերությունների մեկնաբանություն:<br>Ոճային բազմազանության և դրանց առանձնահատկությունների ներկայացում:<br>Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ կարծիքների արտահայտում հարց ու պատասխանի, ռուբրիկների միջոցով:<br>Համեմատել՝<br>*- միևնույն ստեղծագործողի տարբեր աշխատանքներ,*<br>*- նույն թեմայով տարբեր ստեղծագործողների կատարած աշխատանքներ,*<br>*- միևնույն ժանրի ստեղծագործություններ:*<br>Արվեստի ստեղծագործությունների քննարկում, վերլուծություն, դասակարգում և գնահատում:<br>Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները:<br>Առաջարկել և ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ:<br>**Նկարագրել** - Ի՞նչ է պատկերված:<br>**Ներկայացնել** - Արվեստի ո՞ր տեսակին է պատկանում աշխատանքը: | **Անհատական և մշակութային ար-տահայտում**<br>Ուսումնասիրել և բացա-հայտել գաղափարներ, համոզմունքներ, արժեք-ներ, զգացումներ, մշա-կույթի դրսևորումներ արտահայտող ուղիները, որոնցով արժևորվում և գնահատվում է ստեղ-ծարարությունը:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասա-կարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները:<br>Գտնել ներդաշնակություն: |

<table>
<tr><td></td><td>Վերլուծել - Ի՞նչ պատկերներ են կիրառված: Ի՞նչ նպատակով են օգտագործված հենց այդ պատկերները:<br>Մեկնաբանել -Ինչի՞ մասին է պատմում ստեղծագործությունը:<br>Քննարկել - Աշխատանքը հաջողված է, թե ոչ: Տվյալ աշխատանքներից ո՞րը կարելի է ձեռք բերել: Ինչո՞ւ այո և ինչու՝ ոչ:</td><td>Արդարություն և զարգացում<br>Հավասար հնարավորությունները՝ որպես ինքնադրսևորվելու, քննադատելու, խորհրդակցելու, գնահատելու և ինքնագնահատելու մեխանիզմ, համագործակցության և հաղորդակցման բանաձևերը:</td></tr>
<tr><td colspan="3">Առաջարկվող թեմատիկա</td></tr>
<tr><td colspan="3">Ռեմբրանդ վան Ռեյն - «Գիշերային պարեկություն», «Բժիշկ Տյուլպի անատոմիայի դասը»<br>Արփո Չաքմաքչյան - «Կոմիտաս», «Հիրոսիմա»<br>Էռնստ Նեիզվեստնի  - Հուշակոթող Մագադանում</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապ</td></tr>
<tr><td colspan="3">Մայրենի - Ելույթ  ունենալ լսարանի առջև,  տարբեր աղբյուրներից գտած նյութը ներկայացնել նոր ձևով, վերաձևակերպել, վերաշարադրել սեփական բառերով՝ տալով համապատասխան բացատրություններ (պարաֆրազ և պարզ վերլուծություն):</td></tr>
</table>

| |
|---|
| ***Մաթեմատիկա*** - Գտնել բազմակի ելք ունեցող պարզագույն իրադրություններում հնարավոր ելքերը և դրանցից առանձնացնել նշված պայմանին բավարարողները:<br>***Երաժշտություն*** - Երգի, ռոմանսի, խմբերգի հիմնական գաղափարը: Հուզական արձագանք, տպավորությունները ներկայացնել փոքրիկ էսսեով, արժևորել ազգային և համաշխարհային կատարողների և նվագախմբերի արվեստը:<br>***Անհատը և հասարակությունը*** - Օգտագործել մեթոդներ համապատասխան տեղեկությունները հավաքելու և արձանագրելու համար:<br>***Ֆիզկուլտուրա*** - Համագործակցություն, փոխօգնություն, հանդուրժողականություն, ինքնատիրապետման, նպատակասլացության հմտություններ:<br>***Ինֆորմատիկա***- Գնահատել, թե ինչպես է տեղեկատվությունը պահպանվել տարբեր դարաշրջաններում:<br>***Օտար լեզուներ*** - Պարզ տեղեկատվության բովանդակություն, տարբերակել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ4, Հ5, Հ8, Հ10, Հ12, Հ14, Հ16, Հ17, Հ19, Հ24, Հ26, Հ30, Հ32, Հ35, Հ42 |

| ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ | |
|---|---|
| **ԱՐՎԵՍՏ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԳՅՈՒՏԵՐ (8 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Արվեստի ստեղծագործությունների տարիքը, ստեղծման պայմանները, նյութերը:<br>Ստեղծագործությունների միջոցով տարբեր ժամանակներում ապրած մարդկանց կենցաղն ուսումնասիրելու, հետազոտություններ կատարելու հմտություններ: | **5-6.Կ.Ս.ՆՄ.1.** Օգտագործել տարբեր նյութեր, մոտեցումներ՝ ստեղծագործական աշխատանքներ ստանալու համար (2D, 3D):<br>**5-6.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:<br>**5-6.Կ.Ա.ՔԱ.1.** Քննարկել արվեստի ստեղծագործությունը:<br>**5-6.Կ.Ա.ՔԱ.2.** Դասակարգել կերպարվեստի տեսակները, ժանրերը:<br>**5-6.Կ.Ա.Գ.1.** Գնահատել ստեղծագործությունները՝ ըստ չափանիշների:<br>**5-6.Կ.Ա.Գ.2.** Ցույց տալ աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը:<br>**5-6.Կ.Ս.ԱՏ.1.** Պատրաստել իր աշխատանքների թվայնացված պորտֆոլիո:<br>**5-6.Կ.Ս.ԱՏ.2.** Ներկայացնել նկարչական նյութերի և տեխնոլոգիաների կիրառական նշանակությունը: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ինչպե՞ս է արվեստն օգնում հասկանալու մարդկանց և նրանց շրջապատը:<br>Ինչպե՞ս է արվեստը ներկայացնում իրականությունը:<br>Ինչպե՞ս է արվեստը ներկայացվում: | |
| **Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝** | |
| • ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով ստեղծագործական մտքի հաղորդման հմտություններ,<br>• ստանալ ծավալային և հարթ պատկերներ,<br>• ստեղծել կրկնօրինակներ,<br>• փորձարկել նյութերը և գործիքները,<br>• Ցուցադրե ստեղծագործական գաղափարը զարգացնելու, մշակելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ մեթոդներ, ցուցաբերել գեղարվեստական նյութերի, գործիքների, կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների իմացություն,<br>• վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ, | |

- ինքնուրույն, զույգով կամ խմբով մանրամասն ներկայացնել աշխատանքները,
- ներկայացնել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,
- ճանաչել և քննել ժամանակաշրջանով, մշակույթով և հնարավորություններով պայմանավորված արվեստի ստեղծագործությունը,
- պատրաստել և ներկայացնել ստեղծագործությունների թվայնացված պորտֆոլիո,
- ճանաչել և վերլուծել անցյալում և ներկայում արված ստեղծագործությունները՝ ըստ օգտագործված նյութերի և միջոցների:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Արվեստի նմուշների թվայնացում: Արվեստի ստեղծագործությունում օգտագործված նյութերի և միջոցների տեխնիկական հետազոտում: Ի՞նչ նյութեր են օգտագործված: Ինչո՞ւ է արվեստագետը ընտրել տվյալ նյութը կամ միջոցը: Որքանո՞վ է ընտրված մատուցման ձևն արդարացված: | Ուսումնասիրել արվեստի աշխատանքներում օգտագործված նյութերը: Հետազոտել տարբեր ժամանակներում արվեստագետների աշխատելու միջոցները և հնարավորությունները: Համեմատել տարբեր ստեղծագործություններ: Գտնել նմանություններ և տարբերություններ օգտագործված նյութերի կամ աշխատանքի միջոցների մեջ: Քննարկել տարբեր արվեստագետների աշխատանքները, ի՞նչ են պատմում դրանք իրենց ժամանակների մասին: Քննարկել, թե ինչպես, ինչով և ինչու են ստեղծագործում արվեստագետները: Գեղարվեստական ժառանգության ուսումնասիրություն | **Անհատական և մշակութային արտահայտում** Ուսումնասիրել և բացահայտել գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ արտահայտող ուղիները, որոնցով արժևորվում և գնահատվում է ստեղծարարությունը: **Օրինաչափություններ** Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերու- |

| | | |
|---|---|---|
| | ժողովրդական արվեստի կամ տեղական երկրագիտական թանգարաններում: Հանդես գալ հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնելով հստակ և նպատակային խոսք, հայտնել տեսակետ և դրսևորել հետաքրքրություններ: Ընտրել մեկնաբանության կամ ներկայացման հետաքրքիր լուծումներ: | թյունները: Գտնել ներդաշնակություն: **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Ուսումնասիրել տարբեր մարդկանց գործունեությունը, հայտնագործությունները, գյուտերը, մարդկության պատմության շրջադարձային կետերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: |

| Առաջարկվող թեմատիկա |
|---|
| ***Հայկական մանրանկարչության նմուշներ,***<br>***նախակոլումբոսյան Ամերիկա, ինկերի, ացտեկների մշակույթի նմուշներ:***<br>***Տոտեմիզմ, միջնադարյան Արևելքի արվեստը:*** |
| Միջառարկայական կապ |
| ***Մայրենի*** - Ելույթ ունենալ լսարանի առջև, տարբեր աղբյուրներից գտած նյութը ներկայացնել նոր ձևով, վերաձևակերպել, վերաշարադրել սեփական բառերով՝ տալով համապատասխան բացատրություններ (պարաֆրազ և պարզ վերլուծություն):<br>***Մաթեմատիկա*** - Գտնել բազմակի ելք ունեցող պարզագույն իրադրություններում հնարավոր ելքերը և դրանցից առանձնացնել նշված պայմանին բավարարողները:<br>***Երաժշտություն*** - Մեկնաբանել նոր տեխնոլոգիաների դերը երաժշտական արվեստի նոր ուղղությունների առաջացման և զարգացման գործընթացում, արժևորել դրանց միջոցով ստեղծված արվեստի կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:<br>***Անհատը և հասարակությունը*** - Կիրառել մեթոդներ համապատասխան տեղեկությունները հավաքելու և արձանագրելու համար:<br>***Ինֆորմատիկա***- Գնահատել, թե ինչպես է տեղեկատվությունը պահպանվել տարբեր դարաշրջաններում: Մշակել տվյալների պահպանման լուծումներ, աղյուսակներ, փաստաթղթեր և ֆայլեր:<br>***Առողջ ապրելակերպ*** - Բացատրել սոցիալական, մշակութային, ազգային արժեքների, արժեհամակարգի կարևորությունը:<br>***Օտար լեզուներ*** - Հասկանալ մեդիա հաղորդումների, լուրերի, իրադարձային նորությունների հիմնական բովանդակությունը: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ2, Հ4, Հ5, Հ8, Հ9, Հ10, Հ13, Հ14, Հ15, Հ16, Հ25, Հ26, Հ29, Հ30, Հ31, Հ44, Հ45, Հ46 |

<table>
<tr><th colspan="2">ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ</th></tr>
<tr><th colspan="2">ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (12 ժամ)</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td>Տարբեր ժանրերի և ոճերի ստեղծագործությունների ուսումնասիրություն:<br>Ուսումնասիրել արվեստի պատմության և տեսության առանձնահատկությունները:</td><td rowspan="3">5-6.Կ.Ս.ՆՄ.2. Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:<br>5-6.Կ.Ա.ՔԱ.1. Քննարկել արվեստի ստեղծագործությունը:<br>5-6.Կ.Ա.ՔԱ.2. Դասակարգել կերպարվեստի տեսակները, ժանրերը:<br>5-6.Կ.Ա.ՔԱ.3. Վերլուծել իր և ընկերների աշխատանքները բոլոր մանրամասներով:<br>5-6.Կ.Ա.Գ.1. Գնահատել ստեղծագործությունները՝ ըստ չափանիշների:<br>5-6.Կ.Ա.Գ.2. Ցույց տալ աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը:<br>5-6.Կ.Ա.ԱՊ.1. Ներկայացնել գիտելիքներ արվեստի պատմությունից և տեսությունից:<br>5-6.Կ.Ա.ԱՊ.2. Ներկայացնել հայկական կերպարվեստի հիմնական ուղղությունները:<br>5-6.Կ.Կ.ԱԴ.3. Ներկայացնել արվեստի դերն առօրյայում:</td></tr>
<tr><th>Ուղղորդող հարցադրում</th></tr>
<tr><td>Ինչո՞վ է ստեղծագործությունը տարբերվում նույն թեմայով կատարված մյուս աշխատանքներից:<br>Արդյոք ընտրված ոճն ազդո՞ւմ է ստեղծագործության արտահայտչականության վրա:</td></tr>
<tr><th colspan="2">Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</th></tr>
<tr><td colspan="2">• անվանել նյութերն ու գործիքները,<br>• ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,<br>• համեմատել պատկերները,<br>• վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ:,<br>• ինքնուրույն, զույգով կամ խմբով մանրամասն ներկայացնել աշխատանքները,</td></tr>
</table>

- ներկայացնել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,
- բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն),
- ճանաչել և վերլուծել անցյալում և ներկայում արված ստեղծագործություններն ըստ՝

  - *ժամանակաշրջանների,*
  - *արվեստագետների*
  - *մշակույթների*
  - *ավանդույթների և այլն,*
- խոսել արվեստի և ստեղծագործելու մասին, տարբերել անցյալում և ներկայում ստեղծված աշխատանքները,
- ճանաչել, տարբերել և գնահատել արվեստի աշխատանքները,
- ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:

| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| --- | --- | --- |
| Հայտնի արվեստագետների կյանքը և ստեղծագործությունները:<br>Արվեստի գործերի մշակութային արժեքը:<br>Կերպարվեստի ոճերը:<br>Հայ և համաշխարհային կերպարվեստի հիմնական | Ներկայացնել համաշխարհային արվեստի կարևորագույն դարաշրջանները:<br>Ներկայացնել հայ արվեստի դարաշրջանները և տվյալ դարաշրջանում ճանաչում ստացած արվեստագետներին:<br>Վերլուծել նրանց ստեղծագործությունները՝ ըստ տեսակների (ճարտարապետություն, դեկորատիվ կիրառական արվեստ, մանրանկարչություն, գեղանկարչություն):<br>Դասակարգել կերպարվեստի տարրերը և սկզբունքները | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ուսումնասիրել և բացահայտել գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ արտահայտող ուղիները, որոնցով արժևորվում և գնահատվում է |

| | | |
|---|---|---|
| ուղղությունները:<br>Հայ  արվեստագետները հայրենիքում և հայրենիքից դուրս: | տարբեր դարաշրջանների ստեղծագործություններում (գույն, գիծ, ձև, պատկեր, մակերես):<br>Կատարել ստեղծագործության փուլային վերլուծություն:<br>Համեմատել տարբեր երկրների արվեստագետների աշխատանքներում պատկերված ազգային ինքնություն արտահայտող առարկաները:<br>Ուսումնասիրել ստեղծագործությունները՝ ըստ ոճական առանձնահատկությունների: Որոշել՝ երբ են ստեղծվել դրանք:<br>Դիտել ստեղծագործությունները, ներկայացնել հիմնական գաղափարը:<br>Հայաստանը ներկայացնող բնանկարների, հայ նշանավոր արվեստագետների աշխատանքների վերատպությունների ուսումնասիրություն: | ստեղծարարությունը:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն:<br>**Արդարություն և զարգացում**<br>Հավասար հնարավորությունները՝ որպես ինքնադրսևորվելու, քննադատելու, խորհրդակցելու, գնահատելու և ինքնագնահատման մեխանիզմ, համագործակցության և հաղորդակցման բանաձևերը: |
| **Առաջարկվող թեմատիկա** | | |
| ***Հակոբ Հովնաթանյան, Մինաս Ավետիսյան, Գառզու, Ժանսեմ,***<br>***էպոս, դիցաբանություն,***<br>***Երվանդ Քոչար, Հակոբ Կոջոյան, Արփաշես Հովսեփյան - Սասունցի Դավիթ,***<br>***Անրի Մատիս, Էդգար Դեգա, Վերեշչագին,*** | | |

| |
|---|
| ***նախնադարյան և Հին աշխարհի արվեստը, Հին Եգիպտոս, Առաջավոր Ասիայի, Էգեյան, Հին Հունաստանի, հելլենիզմի շրջանի, վաղ քրիստոնեական շրջանի մշակույթը:*** |
| Միջառարկայական կապ |
| ***Մայրենի*** - Ելույթ ունենալ լսարանի առջև, տարբեր աղբյուրներից գտած նյութը ներկայացնել նոր ձևով, վերաձևակերպել, վերաշարադրել սեփական բառերով՝ տալով համապատասխան բացատրություններ (պարաֆրազ և պարզ վերլուծություն):<br>***Մաթեմատիկա*** - Գտնել բազմակի ելք ունեցող պարզագույն իրադրություններում հնարավոր ելքերը և դրանցից առանձնացնել նշված պայմանին բավարարողները:<br>***Երաժշտություն*** - Մեկնաբանել նոր տեխնոլոգիաների դերը երաժշտական արվեստի նոր ուղղությունների առաջացման և զարգացման գործընթացում, արժևորել դրանց միջոցով ստեղծված կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:<br>***Անհատը և հասարակությունը*** - օգտագործել մեթոդներ համապատասխան տեղեկությունները հավաքելու և արձանագրելու համար:<br>***Ինֆորմատիկա***- Գնահատել, թե ինչպես է տեղեկատվությունը պահպանվել տարբեր դարաշրջաններում: Մշակել տվյալների պահպանման լուծումներ, աղյուսակներ, փաստաթղթեր և ֆայլեր:<br>***Առողջ ապրելակերպ*** - Բացատրել սոցիալական, մշակութային, ազգային արժեքների, արժեհամակարգի կարևորությունը:<br>***Օտար լեզուներ*** - Հասկանալ մեդիա հաղորդումների, լուրերի, իրադարձային նորությունների հիմնական բովանդակությունը: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ2, Հ4, Հ5, Հ8, Հ9, Հ10, Հ13, Հ14, Հ15, Հ16, Հ25, Հ26, Հ29, Հ30, Հ31, Հ44, Հ45, Հ46 |

| |
|---|
| **ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ** |
| **ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (10 ժամ)** |

<table>
<tr><th>Նպատակը</th><th>Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td>Հասկանալ, որ արվեստն արտահայտում է իրականությունը:<br>Ուսումնասիրել պատմական, մշակութային, հիշարժան իրադարձությունների արտահայտումը արվեստի միջոցով:<br>Գիտակցել, որ արվեստը կարող է ազդեցություն ունենալ մեր իրականության վրա:</td><td rowspan="4">5-6.Կ.Ս.ՆՄ.2. Պատրաստել արվեստի եզրույթների բառարան:<br>5-6.Կ.Ա.ՔԱ.1. Քննարկել արվեստի ստեղծագործությունը:<br>5-6.Կ.Ա.Գ.1. Գնահատել ստեղծագործությունները՝ ըստ չափանիշների:<br>5-6.Կ.Ա.Գ.2. Ցույց տալ աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը:<br>5-6.Կ.Կ.ԱԴ.1. Ներկայացնել արվեստի ստեղծագործությունների նշանակությունը պատմության տեսանկյունից:<br>5-6.Կ.Կ.ԱԴ.2. Ներկայացնել մշակութային հաստատություններում ընդունված վարքականոնները տարբեր ժամանակներում:<br>5-6.Կ.Կ.ԱԴ.3. Ներկայացնել արվեստի դերն առօրյայում:</td></tr>
<tr><th>Ուղղորդող հարցադրում</th></tr>
<tr><td>- Ի՞նչ է արտահայտում արվեստը:<br>-Ինչպե՞ս են ստեղծագործում արվեստագետները: Ինչո՞ւ է դա կարևոր:<br>- Արվեստագիտական ո՞ր մասնագիտություններն են ազդում արվեստի տարածման վրա:</td></tr>
<tr></tr>
<tr><th colspan="2">Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</th></tr>
<tr><td colspan="2"><ul>
<li>անվանել նյութերն ու գործիքները,</li>
<li>ներկայացնել իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար,</li>
<li>համեմատել պատկերները,</li>
<li>վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ:</li>
<li>ներկայացնել շրջապատող իրականությունն արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ,</li>
<li>բացատրել, թե ինչպես են տարբեր մշակույթներ ներկայանում իրենց յուրահատուկ արվեստով,</li>
<li>հասկանալ, որ արվեստը ներկայացնող բոլոր մասնագիտություններն անկրկնելի և կարևոր են,</li>
<li>ներկյացնել մշակութային իրադարձություն, որին մասնակցել է,</li>
</ul></td></tr>
</table>

- ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:

| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|---|
| Արվեստի ստեղծագործությունների նշանակությունը պատմության տեսանկյունից:<br>Հայ և համաշխարհային կերպարվեստի ազդեցությունը:<br>Արվեստ և իրականություն:<br>Մշակութային հաստատություններում ընդունված վարքականոնները տարբեր ժամանակներում:<br>Արվեստագիտական մասնագիտություններ:<br>Արվեստի ազդեցությունը մեր օրերում: | Հետազոտել մեր իրականության մեջ արվեստի ներկայությունը, որևէ մշակութային իրադարձության, հեռուստատեսային նախագծի, ստեղծագործության քննարկում, վերլուծություն արդիականության տեսանկյունից:<br>Արվեստի ստեղծագործությունները՝ որպես տեղեկատվության փոխանցման և հաղորդակցման միջոց:<br>Հայ և համաշխարհային փոխազդեցությունները. ընդհանրություններ, տարբերություններ:<br>Քննարկել արվեստի դերը:<br>Ուսումնասիրել արվեստագետների դերը: Որոշել նրանց գործունեության առանձնահատկությունները և կարևորությունը:<br>Ուսումնասիրել որևէ իրադարձություն ընտանիքում, համայնքում, երկրում, աշխարհում, որին անդրադարձել է արվեստը: | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ուսումնասիրել և բացահայտել գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ արտահայտող ուղիները, որոնցով արժևորվում և գնահատվում է ստեղծարարությունը:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն:<br><br>**Արդարություն և զարգացում**<br>Հավասար հնարավորությունները՝ |

| | | |
|---|---|---|
| | Ներկայացնել որևէ մշակութային իրադարձության կամ արվեստի հետ առնչության սեփական օրինակ: Կատարել ստեղծագործության փուլային վերլուծություն: | որպես ինքնադրսևորվելու, քննադատելու, խորհրդակցելու, գնահատելու և ինքնագնահատելու մեխանիզմ, համագործակցության և հաղորդակցման բանաձևերը: |

**Առաջարկվող թեմատիկա**

***Արվեստաբան, արվեստի քննադատ, վերականգնող, գովազդ, լանդշաֆտային դիզայն, նորաձևություն, մշակութային ժառանգություն, հայ գրերի գյուտը, որդան կարմիր, ոսկե հատում:***

**Միջառարկայական կապ**

***Մայրենի*** - Ելույթ ունենալ լսարանի առջև, տարբեր աղբյուրներից գտած նյութը ներկայացնել նոր ձևով, վերաձևակերպել, վերաշարադրել սեփական բառերով՝ տալով համապատասխան բացատրություններ (պարաֆրազ և պարզ վերլուծություն):

***Մաթեմատիկա*** - Գտնել բազմակի ելք ունեցող պարզագույն իրադրություններում հնարավոր ելքերը և դրանցից առանձնացնել նշված պայմանին բավարարողները:

***Երաժշտություն*** - Մեկնաբանել տեխնոլոգիաների դերը երաժշտական արվեստի նոր ուղղությունների առաջացման և զարգացման գործընթացում և արժևորել դրանց միջոցով ստեղծված կերպարի ներգործության ուժը մարդու զգացմունքների և գիտակցության վրա:

***Անհատը և հասարակությունը*** - Կիրառել մեթոդներ համապատասխան տեղեկությունները հավաքելու և արձանագրելու համար:

***Ինֆորմատիկա*** - Գնահատել, թե ինչպես է տեղեկատվությունը պահպանվել տարբեր դարաշրջաններում: Մշակել տվյալների պահպանման լուծումներ, աղյուսակներ, փաստաթղթեր և ֆայլեր:

***Առողջ ապրելակերպ*** - Բացատրել սոցիալական, մշակութային, ազգային արժեքների, արժեհամակարգի կարևորությունը:

***Օտար լեզուներ*** - Հասկանալ մեդիա հաղորդումների, լուրերի, իրադարձային նորությունների հիմնական բովանդակությունը:

| ***Կապը ՀՊՉ  վերջնարդյունքների հետ*** |
|---|
| Հ2, Հ10, Հ12, Հ13, Հ14, Հ15, Հ16, Հ17, Հ19, Հ23, Հ24, Հ25, Հ26, Հ31, Հ43, Հ44, Հ45, Հ46 |

**7-8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ**

**Առաջարկվում է (տարեկան 68 ժամ)**

| **ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **ՆՅՈՒԹԵՐ ՄԻՋՈՑՆԵՐ  (6 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ցուցադրել ստեղծագործական աշխատանքներում նյութերով, մեթոդներով և միջոցներով փորձարկումների  կարողություն-ներ:<br>Թեմայով պայմանավորված՝ նյութերի ճիշտ ընտրության կարողությունների ձևավորում: | **7-8.Կ.Ս.ՆՄ.1.**Տարբեր նյութերը և մոտեցումները կիրառել ստեղծագործական աշխատանքներն ավելի արտահայտիչ դարձնելու համար (2D, 3D)՝ կախված թեմայից և առաջադրանքի բնույթից:<br>**7-8.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել պաստառներ կերպարվեստի և դիզայնի տարրերի և սկզբունքների վերաբերյալ:<br>**7-8.Կ.Ս.ՆՄ.3.** Հոգ տանել նյութերի և գործիքների մասին, պահպանել անվտանգության կանոնները:<br>**7-8.Կ.Ս.ՆԵ.1.** Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:<br>**7-8.Կ.Ս.ՆԵ.2.** Ստեղծել 2D և 3D վերացական աշխատանքներ:<br>**7-8.Կ.Ս.ՆԵ.3.** 2D և 3D երևակայական աշխատանքներ:<br>**7-8.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել արվեստի ստեղծագործությունները: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ինչպե՞ս են արվեստագետները նախապատրաստվում ստեղ-ծագործնական գործընթացին:<br>Ի՞նչ գործիքներ և միջոցներ են օգտագործում:<br>Պահպանո՞ւմ են արդյոք արվեստագետները որոշակի կանոններ:<br>Կարո՞ղ է դասարանը վերածվել արվեստանոցի: | |

| **Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝** |
| --- |
| • զարգացնել գաղափարը. աշխատել թեմայի մշակման, ճեպանկարների, էսքիզների կատարման ուղղությամբ,<br>• տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության,<br>• ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ գունանկարի, գծանկարի, քանդակի, մեդիայի համար,<br>• ստանալ ծավալային և հարթ պատկերներ,<br>• ցուցադրել ծավալային դիզայնի և քանդակի տարբերությունը՝ կախված նյութից,<br>• ստանալ հարթ և ծավալային պատկերներ՝ կիրառելով մեդիա, թուղթ, փայտ, կավ և այլն,<br>• կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,<br>• կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,<br>• պաստառներում պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը,<br>• պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,<br>• ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները,<br>• կատարել գծանկարչական և գեղանկարչական աշխատանքներ, նյութերն ու միջոցներն օգտագործել ըստ նշանակության,<br>• աշխատանքներում պահպանել ընտրված նյութերով գրագետ աշխատելու օրինաչափությունները,<br>• պատկերել շրջապատող առարկաները և բնությունը, ինքնուրույն որոշել թեման,<br>• կատարել ճեպանկարներ և նախանկարներ՝ պաննո ստեղծելու նպատակով,<br>• ցուցադրել ստեղծագործական մտածողություն և գեղարվեստական միտք,<br>• ստեղծել երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես ունեցած հուզական վերաբերմունք, |

- ստեղծել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրին, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերող արտահայտիչ երևակայական աշխատանքներ:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Գործիքների և նյութերի ճիշտ ընտրություն՝ ըստ թեմայի:<br>Հաստոցային և մոնումենտալ արվեստ:<br>Քանդակ, կատարման մեթոդները, հաջորդականությունը:<br>Դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ, նյութեր և գործիքներ:<br>Դաջվածք կամ տպագրություն:<br>Կերպարվեստ: Գունանկար, գծանկար, տեսակները, կատարման մեթոդները, հաջորդականությունը:<br>Հարթության վրա պատկերի ճիշտ կառուցում:<br>Մասնագիտական պաստառներ: | Հաստոցային քանդակ և գեղանկարչություն, մոնումենտալ քանդակ և որմնանկարչություն:<br>Կրկնօրինակել արվեստի որևէ գործ:<br>Հայկական ճարտարապետական հուշարձանների տիպերի ուսումնասիրություն՝ Ազատ խաչ, Եռակոնք, Քառակոնք, Բազմաբսիդ:<br>Ըստ նախընտրած նյութի՝ կառուցել ճարտարապետական կոթողի մանրակերտ:<br>Ներկայացնել արվեստի տարբեր ճյուղերում նյութերի կիրառման հնարավորություններն ու սկզբունքները:<br>Դեկորատիվ զարդաքանդակի համաչափության, հավասարակշռվածության ուսումնասիրություն, սեփական զարդաքանդակի էսքիզի կատարում և քանդակում՝ ըստ նյութերի և գործիքների ուսումնասիրության (մոմ, պլաստիլին, կավ և այլն):<br>Գեղարվեստական հնարքների ուսումնասիրություն. ֆակտուրա- | **Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում**<br>Աշխատանքի բնույթ և արդյունք կապը. նյութը, չափը, խնդիրը, թեմաներն ազդում են աշխատանքի բնույթի վրա, ինչը տարբեր արդյունքներ է տալիս:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն: |

| | | |
|---|---|---|
| Նյութերի և միջոցների խնայողություն: | յին վրձնահարվածներ, գունահամակարգի ընտրություն, հարթության կոմպոզիցիոն ամբողջականություն և այլն:<br>Դաջվածքի և տպագրության տեսակների ուսումնասիրություն:<br>Դաջվածքների կատարում կտորի, թղթի, այլ մակերեսների վրա:<br>Դեկորատիվ-կիրառական արվեստի տեսակների ուսումնասիրություն և փորձարկում:<br>Կիրառական արվեստի նմուշների կրկնօրինակում, ձևավորում:<br>Հայկական և համաշխարհային զարդարվեստի նմուշների ուսումնասիրություն, կրկնօրինակում:<br>Սննդամթերքի փաթեթավորման գովազդ:<br>Պլակատային գրաֆիկայի կոմպոզիցիայի, թեմատիկ և բովանդակային կառուցվածքի ուսումնասիրություն:<br>Մասնագիտական պաստառներ:<br>Նյութերի և միջոցների խնայողություն: | **Մասշտաբ, համամասնություն, քանակ**<br>Մասշտաբները փոխվելիս փոխվում են պատկերների չափերը, սակայն համամասնությունը պահպանվում է, ինչպես օրինակ՝ բնօրինակից պատկերման աշխատանքներում: |
| **Առաջարկվող թեմատիկա** | | |

| |
|---|
| ***Ճանապարհորդություն աշխարհի շուրջ, նորաձևություն,***<br>***դիմանկար, ինքնանկար, բնանկար, ճեպանկար, ծաղրանկար, կոմիքս, նապյուրմորփ (կոլաժ, կարճապև էսքիզներ, փուլային ավարտուն աշխատանքներ),***<br>***արվեստի ստեղծագործությունների կրկնօրինակումներ,***<br>***ճարտարապետական կառույցների և կոթողների պատկերումներ ջրաներկով,***<br>***մարդու իրավունքներ, բնապահպանություն:*** |
| Միջառարկայական կապ |
| ***Հայոց լեզու և գրականություն*** - Մեկնաբանել տարաբնույթ նշանները, համադրել, փոփոխել: Ստեղծել բանավոր և գրավոր պատկերավոր խոսք (առանձին և խմբային), արձակ և չափածո պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ (կոմիքս, էմոջի, ծաղրանկար և այլն):<br>***Երկրաչափություն*** - Սահմանել հավասար պատկերներ հասկացությունը և կիրառել հատվածների, անկյունների ու եռանկյունների համար:<br>***Ֆիզիկա*** - Կատարել պարզագույն դիտումներ, չափումներ և փորձեր: Հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել չափումների և փորձերի տարբերվող արդյունքների կամ մեկնաբանությունների դեպքում:<br>***Քիմիա*** - Ֆիզիկական և քիմիական երևույթներ, համապատասխան հատկանիշներ:<br>***Կենսաբանություն*** - Հետազոտություններ կատարելով՝ ձեռք բերել ապացույցներ:<br>***Աշխարհագրություն*** - Տեղանքի մոտավոր հատակագիծ, համապատասխան պայմանական նշաններ:<br>***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ:<br>***Պատմություն, հասարակագիտություն*** - Ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Աղբյուրագիտական հենքով վերլուծել առկա տեղեկույթը, համադրել փաստերն ու իրադարձությունները, կատարել եզրակացություններ: |

| |
|---|
| ***Առողջ ապրելակերպ*** - Հարմարավետ զգալ սեփական մարմնում և հարգել ուրիշների մարմնակառուցվածքը:<br>***Ինֆորմատիկա*** - Հաղորդակցման մի շարք ձևերի կիրառություններ (նորությունների թերթիկներ, վեբկայքեր, բազմամեդիա պրեզենտացիաներ, երաժշտության գնահատման հարթակներ, մուլտֆիլմեր, թռուցիկներ և պաստառներ): Առողջության ու ապահովության առնչվող խնդիրները՝ կապված համակարգչի օգտագործման հետ:<br>***Օտար լեզուներ*** - Հասկանալ և հետևել պարզ ցուցումներին ու հրահանգներին բազմաքայլ գործողություններ կատարելիս, եթե դրանք տրվում են գրական/ստանդարտ լեզվով և ծանոթ առոգանությամբ: |
| ***Կապը ՀՊՉ  վերջնարդյունքների հետ*** |
| Հ2, Հ4, Հ8, Հ9, Հ11, Հ13, Հ23, Հ25, Հ27, Հ29, Հ33, Հ43, Հ44 |

| **ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԱՐՐԵՐ ԵՎ ԴԻԶԱՅՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ  (8 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ուսումնասիրել և փորձարկել ստեղծագործական աշխատանքներ կատարելու տարրերն ու սկզբունքները:<br>Ստեղծագործական աշխատանքներում պահպանել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները: | **7-8.Կ.Ս.ՆՄ.1.** Տարբեր նյութեր և մոտեցումներ կիրառել ստեղծագործական աշխատանքներն ավելի արտահայտիչ դարձնելու համար (2D, 3D)՝ կախված թեմայից և առաջադրանքի բնույթից):<br>**7-8.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել պաստառներ կերպարվեստի և դիզայնի տարրերի և սկզբունքների վերաբերյալ: |
| **Ուղղորդող հարցադրում** | |

| | |
|---|---|
| Ինչպե՞ս են արվեստագետներն աշխատում:<br>Ի՞նչ է հարկավոր իմանալ գրագետ աշխատելու համար:<br>Պահպանո՞ւմ են արդյոք արվեստագետները որոշակի օրինաչափություններ:<br>Հնարավո՞ր է արդյոք ստեղծագործել՝ խախտելով կերպարվեստի տարրերն ու սկզբունքները: | **7-Ց.Կ.Ս.ՆՄ.3.** Հոգ տանել նյութերի և գործիքների մասին, պահպանել անվտանգության կանոնները:<br>**7-Ց.Կ.Ա.ԴՏ.1.** Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով դիզայնի տարրերը: Հավասարակշռություն, նյութ, կրկնություն:<br>**7-Ց.Կ.Ա.ԴՏ.2.** Կիրառել դիզայնի սկզբունքներն առաջարկվող գործունեության ձևերում (նորաձևություն, ինտերիեր, էքստերիեր):<br>**7-Ց.Կ.Ս.Նե.2.** Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով վերացական արվեստի տեսանկյունից:<br>**7-Ց.Կ.Ս.Նե.3.** 2D և 3D երևակայական աշխատանքներ: |

**Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝**

- զարգացնել գաղափարը, աշխատել թեմայի մշակման, ճեպանկարների, էսքիզների կատարման վրա,
- տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության,
- ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ գունանկարի, գծանկարի, քանդակի, մեդիայի համար,
- ստանալ ծավալային և հարթ պատկերներ,
- ցուցադրել ծավալային դիզայնի և քանդակի տարբերությունը՝ կախված նյութից,
- ստանալ հարթ և ծավալային պատկերներ՝ կիրառելով մեդիա, թուղթ, փայտ, կավ և այլն,
- կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,
- կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,
- պաստառներում պահպանել տառերի և բառերի կայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը,
- պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,
- ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի

կանոնները,

- ստանալ ճանաչելի հարթ և ծավալային պատկերներ ու հորինվածքներ՝ ապահովելով ծավալ, տոն, տարածություն, ռիթմ և միասնականություն,
- կիրառել գուներանգներն աշխանանքներին հուզականություն հաղորդելու համար,
- ստեղծել հորինվածքներ՝ գաղափարներն արտահայտելով կերպարվեստի տարրերի ու սկզբունքների կիրառմամբ,
- կատարել հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ՝ կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առավել արտահայտիչ ներկայացնելով,
- բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա:

| Բովանդակություն | Գործնականաշխատանք | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Դիզայնի տարրեր<br>Հավասարակշռություն<br>Նյութ<br>Կրկնություն<br>Դիզայն - ձևավորում,<br>հարդարում<br>Նորաձևություն<br>Ինտերիեր<br>Էքստերիեր | Դիզայնի ստեղծման անհրաժեշտությունը և դրա անմիջական կապը իրականության հետ:<br>Դիզայնի տարրերը ԴԿԱ-ում: Կատարվող աշխատանքի փուլային հաջորդականության նկարագրություն:<br>Գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ճանաչելի պատկերների և հորինվածքների ստեղծում:<br>Գծի յուրահատկության ուսումնասիրություն.<br>- *գիծը որպես հակադրության էֆեկտ ստեղծելու միջոց,*<br>- *գիծը որպես տարածության պատրանք ստեղծելու հնար,*<br>−*գծի օգտագործումը պատկերի ձևը ստանալու համար,* | **Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում**<br>Աշխատանքի բնույթ և արդյունք կապը. նյութը, չափը, խնդիրը, թեմաներն ազդում են աշխատանքի բնույթի վրա, ինչը տարբեր արդյունքներ է տալիս:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, |

| | | |
|---|---|---|
| | –*գծի օգտագործումն առարկայի ծավալն արտահայտելու համար,*<br>–*գիծը ծառայում է համաչափության և հավասարակշռության պահպանմանը,*<br>–*գիծը ստեղծում է ստվերի էֆեկտ:*<br>Գույնի առանձնահատկությունների, գունահամակարգի ուսումնասիրութուն (Ի. Իտտենի գունային շրջանը).<br>– *գույների ախրոմատիկ շարք,*<br>– *գույների խրոմատիկ շարք,*<br>– *կիսախրոմատիկ գույներ,*<br>– *տաք, սառը և չեզոք գույներ,*<br>– *գունային երանգների հակադրություն:*<br>Շտրիխային և երանգային գծանկարի կատարում գրաֆիտային մատիտով, ածուխով և այլն:<br>Ջրաներկի չոր, թաց և ալապրիմա տեխնիկաներով առաջադրանքների կատարում:<br>Սիմետրիա-ասիմետրիա, կերպարվեստի տարրերի և սկզբունքների ուսումնասիրությունը մեդիայում:<br>Միայն գծի միջոցով պարզ պատկերների, ձևերի և առարկաների պատկերում:<br>Ուրվագծերի, նշանների, նախշերի պատկերում:<br>Բնապատկերի կատարում գծի միջոցով: | բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն: |

| | | |
|---|---|---|
| | Շրջապատում, բնության մեջ, արվեստի ստեղծագործություններում և ճարտարապետական կոթողներում ձևերի և պատկերների տեսակների բացահայտում:<br>Գույների միջոցով դեկորատիվ, արտահայտիչ աշխատանքների կատարում:<br>Գրաֆիկական արվեստում և կերպարվեստի բոլոր ոլորտներում գծանկարի դերի և հնարավորությունների ներկայացում:<br>Միջավայրի (ինտերիեր, էքստերիեր) ձևավորման, ոճավորման և հարդարման տեխնիկական և գեղարվեստական մեթոդների բնութագրում:<br>Հեռանկարի օրենքների դասակարգում:<br>Տարբեր երկրների դեկորատիվ արվեստի նմուշների կրկնօրինակումների և համեմատությունների կատարում: | |

**Առաջարկվող թեմատիկա**

***Հայկական զարդարվեստ, խաչքար, գունային անիվ, մանդալա, ֆրակտալներ, դիմանկար, բնանկարներ պլեններում, իմպրեսիոնիզմ, էքսպրեսիոնիզմ, կենդանիների ճեպանկարներ:***

***Կերպարվեստի լեզուն՝ հաղորդակցություն պատկերի միջոցով, ժայռապատկերներ, գեղագրություն, հայկական թչնագրեր, գրաֆիտի, հիերոգլիֆ, էքսլիբրիս, հերալդիկա, անիմացիա, տոտեմ:***

**Միջառարկայական կապ**

***Հայոց լեզու և գրականություն*** - Ստեղծել տարաբնույթ ուսումնական/ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ և այլն: Կարդացած ստեղծագործություններից ընտրել պատմողներ (նարատորներ) և ստեղծել վերջիններիս բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ:

***Երկրաչափություն*** - Սահմանել *հավասար պատկերներ* հասկացությունը և կիրառել հատվածների, անկյունների ու եռանկյունիների համար:

Կառուցել դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով, տրված պատկերի համաչափ պատկեր:

***Ֆիզիկա*** - Կատարել պարզագույն դիտումներ, չափումներ և փորձեր: Դասակարգել նյութերը՝ ըստ ագրեգատային վիճակների, վերլուծել տարբեր վիճակներում նյութի հատկությունները և կառուցվածքային տարբերությունները:

***Քիմիա*** - Քիմիական տարրի էներգետիկ մակարդակների թվի կապը պարբերության համարի հետ:

***Կենսաբանություն*** - Հետազոտություններ կատարելով՝ ձեռք բերել ապացույցներ: Մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում կատարելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառնական առանձնահատկություններին:

***Աշխարհագրություն*** - Տեղանքի մոտավոր հատակագիծ, համապատասխան պայմանական նշաններ: Ձևավորել հավասարակշռված կարծիք աշխարհագրական գործոններով պայմանավորված էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:

***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրա բացասական ազդեցությունները:

***Պատմություն, հասարակագիտություն*** - Ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Դրսևորել խնդիրներ և հարցեր ձևակերպելու, անհատական և խմբային նախագծեր իրականացնելու հմտություններ: Օգտագործել քարտեզներ, ուսումնա-օժանդակ գրականություն, դրսևորել հետազոտելու կարողություն, մշակել և իրականացնել նախագծեր, հետազոտական աշխատանքներ:

***Առողջ ապրելակերպ*** - Տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից:

***Ինֆորմատիկա*** - Հաղորդակցման մի շարք ձևերի կիրառություններ (նորությունների թերթիկներ, վեբկայքեր, բազմամեդիա պրեզենտացիաներ, երաժշտության գնահատման հարթակներ, մուլտֆիլմեր, թռուցիկներ և պաստառներ): Անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել արտիֆակտ, որը պատասխանում է հետազոտական հարցին և ներկայացնում է արդյունքներն ու եզրահանգումները:

| |
|---|
| ***Օտար լեզուներ*** - Նկարագրել իրադարձություններ, իր կենսափորձը, հույսերն ու ձգտումները և այլն՝ գործածելով պարզ կապակցված արտահայտություններ: |
| ***Կապը ՀՊՉ ի հետ*** |
| Հ2, Հ4, Հ8, Հ9, Հ11, Հ13, Հ23, Հ25, Հ27, Հ29, Հ33, Հ43, Հ44 |

| **ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ (8 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ստեղծել իրատեսական, վերացական և երևակայական 2D և 3D աշխատանքներ: | **7-8.Կ.Ս.ՆՄ.1.** Տարբեր նյութեր և մոտեցումներ կիրառել ստեղծագործական աշխատանքներն ավելի արտահայտիչ դարձնելու համար (2D, 3D)՝ կախված թեմայից և առաջադրանքի բնույթից:<br>**7-8.Կ.Ս.ՆՄ.3.** Հոգ տանել նյութերի և գործիքների մասին, պահպանել անվտանգության կանոնները:<br>**7-8.Կ.Ս.ՆԵ.1.** Ստեղծել 2D և 3D իրատեսական արվեստի աշխատանքներ:<br>**7-8.Կ.Ս.ՆԵ.2.** Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով վերացական արվեստի տեսանկյունից:<br>**7-8.Կ.Ս.ՆԵ.3.** 2D և 3D երևակայական աշխատանքներ:<br>**7-8.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել արվեստի ստեղծագործությունները: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ինչպե՞ս են արվեստագետները ստեղծագործում:<br>Ինչպե՞ս են արվեստագետները կռահում, որ աշխատանքը հաջողված է:<br>Կարելի՞ է արդյոք սովորել սեփական սխալներից:<br>Հնարավո՞ր է պատկերել զգացողություն: | |
| **Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝** | |
| • զարգացնել գաղափարը, աշխատել թեմայի մշակման, ճեպանկարների, էսքիզների կատարման վրա,<br>• տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության, | |

| | | |
|---|---|---|
| • ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ գունանկարի, գծանկարի, քանդակի, մեդիայի համար,<br>• ստանալ ծավալային և հարթ պատկերներ,<br>• ցուցադրել ծավալային դիզայնի և քանդակի տարբերությունը՝ կախված նյութից,<br>• ստանալ հարթ և ծավալային պատկերներ՝ կիրառելով մեդիա, թուղթ, փայտ, կավ և այլն,<br>• պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,<br>• ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները,<br>• կատարել գծանկարչական և գեղանկարչական աշխատանքներ, նյութերն ու միջոցներն օգտագործել ըստ նշանակության,<br>• աշխատանքներում պահպանել ընտրված նյութերով գրագետ աշխատելու օրինաչափությունները,<br>• պատկերել շրջապատող առարկաները և բնությունը, ինքնուրույն որոշել թեման,<br>• կատարել ճեպանկարներ և նախանկարներ պաննո ստեղծելու նպատակով,<br>• դրսևորել ստեղծագործական մտածողություն և գեղարվեստական միտք,<br>• ստեղծել երևակայությամբ և զգացմունքներով թելադրված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես ունեցած հուզական վերաբերմունք,<br>• ստեղծել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրին, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերող արտահայտիչ երևակայական աշխատանքներ: | | |
| **Բովանդակություն** | **Գործնականաշխատանք** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |

| | | |
|---|---|---|
| Գրական ստեղծագործության ձևավո-րում կամ պատկերազարդում:<br>Պատկերում բնօրինակից:<br>Դիմանկար, ինքնանկար,<br>բնանկար, նատյուրմորտ:<br>Թեմատիկ, ժանրային հորինվածք:<br>Իրական, վերացական<br>զգացողություններ,<br>բնության անբացատրելի երևույթներ,<br>դիցաբանական, համամարդկային,<br>կենցաղային թեմաներ: | Համաչափության, գծերի ընդհանուր դասավորության, կոմպոզիցիոն համաչափության, ուսումնասիրության և համեմատության վրա հիմնված վարժություններ և ստեղծագործական աշխատանքներ:<br>Գեղանկարչության առանձնահատկությունները դիմանկարի ժանրում:<br>Դիմագծերի ընդհանրացման և նմանության կարողությունների ձևավորում:<br>Ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում:<br>Թեմատիկ նկարչությունը պետք է իրականացվի դիտման, պատկերացման, հիշողության և հեքիաթների ձևավորման միջոցով:<br>Առաջադրված թեմայով ավարտուն աշխատանքի ստեղծում ցուցադրության համար՝ պահպանելով թեմայի բովանդակության և ընտրված գունահամակարգի տրամաբանական կապը:<br>Գեղարվեստական հոսանքների ուսումնասիրության հենքով սեփական հորինվածքի ստեղծում, հարթության ճիշտ օգտագործում (ֆուտուրիզմ, ֆովիզմ, մոդեռն, փոփ-արտ, օպ-արտ, սիմվոլիզմ և այլն):<br>Առարկաների պատկերում (ավարտված) ճեպանկար, | **Պատճառ և հետևանք, մեխա-նիզմ և կանխատեսում**<br>Աշխատանքի բնույթ և արդյունք կապը. նյութը, չափը, խնդիրը, թեմաներն ազդում են աշխա-տանքի բնույթի վրա, ինչը տար-բեր արդյունքներ է տալիս:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն<br><br>**Կայունություն և փոփոխություն**<br>Կայունությունը միշտ մրցակցող գործոնների հաշվեկշիռն է: Դրա խախտումը համակարգը դուրս է բերում կայուն վիճակից, երբ բացակայում է հետադարձ կապը: Սակայն |

| | | |
|---|---|---|
| | բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան հնարավոր չէ զննել:<br>Ծառերի, թռչունների, կենդանիների ուրվապատկերի ստեղծում (նկարչական նյութը՝ ջրաներկ, գուաշ, գունամատիտ, մոմակավիճներ, սպիտակ կամ երանգավոր թղթի վրա) առանց նախօրոք մատիտով արված նկարի:<br>Կենդանիների, թռչունների և մարդու մարմնի պատկերում:<br>Նատյուրմորտի ժանրի օրինաչափությունների ուսումնասիրու-թյուններ, ճեպանկարների և էսքիզների կատարում:<br>Նատյուրմորտների, աշնանային և գարնանային ծաղիկների պատկերում: Հարթության մեջ նատյուրմորտի տեղադրման օրենքների ուսումնասիրություն հորիզոնական և ուղղահայաց առանցքներով:<br>Բնանկարի ժանրի տեսակները, դրանց առանձնահատկությունները:<br>Աշնանային և գարնանային բնության էտյուդային պատկերում (պլեներ) կամ պատկերում հիշողությամբ:<br>Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ կենցաղային տարբեր իրերի՝ մրգերի, բանջարեղենի, ծաղիկների պատկերում (ներառյալ ճեպանկարում): | արվեստագիտական տեսանկյունից կարելի է ընկալել որպես մեկից ավելի համակարգերի առկայություն միևնույն ստեղծագործության մեջ: Այստեղ մեկ գործոնի փոփո-խությունը չի խախտում համակարգը, քանի որ մյուս գործոնն իր վրա է վերցնում ընդհանուր հավասարա-կշռությունը՝ գույն, գիծ, դինամիկա և այլն: |
| **Առաջարկվող թեմատիկա** | | |

| |
|---|
| ***Հայկական փաճար, Տիրամայր, հեթանոսական աստվածներ Աստղիկն ու Վահագնը: Իմ ընկերոջ դիմանկարը: Սուրբ Ծնունդ, տերևաթափ, ձմեռային զբոսանք, արևային անձրև, հրաշք գարուն, հեքիաթների, պատմվածքների, առակների պատկերազարդումներ, ծովային, լեռնային, անտառային բնապատկերներ: Բացիկներ՝ թղթային, էլեկտրոնային, ծավալային: Իմ ոճը: Սպորտն իմ կյանքում: Ուղևորություն դեպի անցյալ: Ուղևորություն դեպի ապագա:***<br>***Դիմանկար, բնանկար, նատյուրմորտ:*** |
| **Միջառարկայական կապ** |
| ***Հայոց լեզու և գրականություն*** - Ստեղծել տարաբնույթ ուսումնական/ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ և այլն: Կարդացած ստեղծագործություններից ընտրել պատմողներ (նարատորներ) և ստեղծել վերջիններիս բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ:<br>***Երկրաչափություն*** - Սահմանել հավասար պատկերներ հասկացությունը և կիրառել հատվածների, անկյունների ու եռանկյունիների համար: Կառուցել (նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով) տրված պատկերի համաչափ պատկեր:<br>***Ֆիզիկա*** - Կատարել պարզագույն դիտումներ, չափումներ և փորձեր: Դասակարգել նյութերը՝ ըստ ագրեգատային վիճակների, վերլուծել տարբեր վիճակներում նյութի հատկությունները և կառուցվածքային տարբերությունները:<br>***Քիմիա*** - Քիմիական տարրի էներգետիկ մակարդակների թվի կապը պարբերության համարի հետ:<br>***Կենսաբանություն*** - Հետազոտություններ կատարելով՝ ձեռք բերել ապացույցներ: Մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում կատարելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին:<br>***Աշխարհագրություն*** - Տեղանքի մոտավոր հատակագիծ, համապատասխան պայմանական նշաններ: Ձևավորել հավասարակշռված կարծիք աշխարհագրական գործոններով պայմանավորված էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:<br>***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրա բացասական ազդեցությունները: |

| |
|---|
| ***Պատմություն, հասարակագիտություն*** - Ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Դրսևորել խնդիրներ և հարցեր ձևակերպելու, անհատական և խմբային նախագծեր իրականացնելու հմտություններ: Օգտագործել քարտեզներ, ուսումնա-օժանդակ գրականություն, դրսևորել հետազոտելու կարողություն, մշակել և իրականացնել նախագծեր, հետազոտական աշխատանքներ:<br>***Առողջ ապրելակերպ*** - Տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից:<br>***Ինֆորմատիկա*** - Հաղորդակցման մի շարք ձևերի կիրառություններ (նորությունների թերթիկներ, վեբկայքեր, բազմամեդիա պրեզենտացիաներ, երաժշտության գնահատման հարթակներ, մուլտֆիլմեր, թռուցիկներ և պաստառներ): Անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել արտիֆակտ, որը պատասխանում է հետազոտական հարցին և ներկայացնում է արդյունքներն ու եզրահանգումները:<br>***Օտար լեզուներ*** - Նկարագրել իրադարձություններ, իր կենսափորձը, հույսերն ու ձգտումները և այլն՝ գործածելով պարզ կապակցված արտահայտություններ: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ4, Հ5, Հ9, Հ17, Հ25, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ33, Հ34, Հ37, Հ45, Հ46, Հ47 |

| **ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ (8 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ցուցադրություններ կազմակերպելու հմտությունների ձևավորում: | **7-8.Կ.Ս.ՆՄ.1.** Տարբեր նյութեր և մոտեցումներ կիրառել ստեղծագործական աշխատանքներն ավելի արտահայտիչ դարձնելու համար (2D, |

| | |
|---|---|
| Քննական մտածողության զարգացում: Հետազոտություններ կատարելու հմտությունների ձևավորում: | 3D)՝ կախված թեմայից և առաջադրանքի բնույթից):<br>**7-8.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել պաստառներ կերպարվեստի և դիզայնի տարրերի և սկզբունքների վերաբերյալ: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ինչպե՞ս են պահվում ստեղծագործությունները: Ովքե՞ր են դրանք հավաքում, պահպանում և ի՞նչ նպատակով: Ի՞նչ չափանիշներով են ընտրվում ստեղծագործությունները:<br>Հարկավո՞ր է արդյոք ցուցադրել աշխատանքները:<br>Ի՞նչ է նշանակում արվեստի ստեղծագործության ցուցադրություն: | **7-8.Կ.Ա.ՎՑ.1.** Առաջարկել խմբային և անհատական ցուցադրության թեմաներ կամ սկզբունքներ:<br>**7-8.Կ.Ա.ՎՑ. 2.** Առաջարկել խմբային կամ անհատական նախագծերի ներկայացման տարբերակներ:<br>**7-8.Կ.Ա.ՎՑ.3.** Պատրաստել նախագծեր և առավել արդյունավետ ցուցադրել դրանք:<br>**7-8.Կ.Ա.ՎՄ.1.** Խմբի հետ ընտրել և քննարկել աշխատանքները ցուցադրության համար:<br>**7-8.Կ.Ա.ՎՄ. 2.** Ձևավորել սկզբունքներ ցուցադրություն կազմակերպելիս:<br>**7-8.Կ.Ա.ՔԱ.1.** Կատարել արվեստագիտական վերլուծություններ:<br>**7-8.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել իր ստեղծագործությունները:<br>**7-8.Կ.Կ.ԱԴ.3.** Ներկայացնել արվեստի դերն իր առօրյայում: |

**Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝**

- զարգացնել գաղափարը, աշխատել թեմայի մշակման, ճեպանկարների, էսքիզների կատարման վրա,
- տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության,
- ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ գունանկարի, գծանկարի, քանդակի, մեդիայի համար,
- ստանալ ծավալային և հարթ պատկերներ,
- ցուցադրել ծավալային դիզայնի և քանդակի տարբերությունը՝ կախված նյութից,

- ստանալ հարթ և ծավալային պատկերներ՝ կիրառելով մեդիա, թուղթ, փայտ, կավ և այլն,
- կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,
- կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,
- պաստառներում պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը,
- մեկնաբանել և տեսակավորել ստեղծագործական աշխատանքները,
- ներկայացնել հիմնական գաղափարների արդիականությունը,
- առանձնացնել և ցուցադրել ստեղծագործական հնարների կիրառման արդյունավետությունը և ազդեցությունը գաղափարի փոխանցման տեսանկյունից,
- առաջարկել և նախաձեռնել աշխատանքների ցուցադրության հետաքրիր տարբերակներ,
- ձևակերպել հարցերը և պատասխանները, թե որտեղ, երբ, ինչու և ինչպես պետք է ընտրվեն աշխատանքները ցուցադրության համար:

| **Բովանդակություն** | **Գործնականաշխատանք** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|---|
| Խմբային ցուցադրությունների թեմաների մշակում:<br>Ավանդական և ոչ ավանդական մոտեցումներ:<br>Մշակութային միջոցառումների ստեղծագործական նախագծեր:<br>Ցուցադրություններ կազմակերպելու այլընտրանքային | Ստեղծել աշխատանքային տետր կամ պորտֆոլիո:<br>Մենակ կամ խմբով առանձնացնել աշխատանքները՝ ըստ առաջարկված չափանիշների:<br>Ձևակերպել հարցերը և պատասխանները, թե որտեղ, երբ, ինչու և ինչպես պետք է պատրաստվեն աշխատանքները ցուցադրության համար:<br>Մեկնաբանել ստեղծագործություններից ստացած տպավորությունները: | **Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն: |

| | | |
|---|---|---|
| տարբերակներ:: | Բացատրել. թե ինչու են ընտրվել տվյալ աշխատանքները:<br>Նշել և մեկնաբանել ցուցադրության կազմակերպման նպատակները, հիմնական սկզբունքները:<br>Մեկնաբանել սեփական աշխատանքները:<br>Պատրաստել ռուբրիկներ և հարցաշարեր արդյունավետ հետազոտական աշխատանքներ կատարելու համար:<br>Ստեղծել դասակարգիչներ, որոնց համաձայն կընտրվեն և կառանձնացվեն աշխատանքները:<br>Աշխատել խմբով:<br>Սովորողների կողմից կատարված աշխատանքների կամ թեմատիկ առանձին ուղղվածություն պարունակող ստեղծագործությունների և առարկների ցուցադրություն:<br>Դասընթացների այս ձևը  կարող է կազմակերպվել որևէ առարկայի հետ ինտեգրված: | **Համակարգեր և մոդելներ**<br>Համակարգը՝ որպես ընդհանուր գաղափարով, թեմայով, մոտեցումով կատարված ստեղ-ծագործությունը (ները) ներկա-յացնելու ընդհանրական մոտեցում, որով յուրաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել:<br><br>**Արդարություն և զարգացում**<br>Հավասար հնարավորությունները՝ որպես ինքնադրսևորվելու, քննադատելու, խորհրդակցելու, գնահատելու և ինքնագնահատելու մեխանիզմ, համագործակցության և հաղորդակցման բանաձևերը: |
| **Առաջարկվող թեմատիկա** | | |
| ***Նորաձևություն, ազգային փարազ, փպագրական աշխափանքներ, բացիկներ, համադպրոցական, համայնքային միջոցառումներ, արվեսփ և քաղաքականություն,  արվեսփ և իրականություն,<br>արվեսփ և բնություն, արվեսփ և նորաձևություն, արվեսփ և գիփություն:*** | | |

| Միջառարկայական կապ |
|---|
| ***Հայոց լեզու և գրականություն*** - Ստեղծել տարաբնույթ ուսումնական/ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ և այլն: Կարծիք հայտնել, պաշտպանել սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորել այն: Մեկնաբանել գաղափարը՝ հիմնվելով գրական օրինակների վրա:<br>***Երկրաչափություն*** - Սահմանել *հավասար, համագիծ, տարագիծ, համուղղված, հակուղղված, հակադիր վեկտորներ* հասկացությունները և կառուցել դրանց օրինակներ նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով: Կառուցել (նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով) տրված պատկերի համաչափ պատկեր:<br>***Ֆիզիկա*** - Օրինակներով հիմնավորել, որ ձայնային ալիքները տարածվում են տարբեր միջավայրերով: Ռեզոնանս, արձագանք:<br>***Կենսաբանություն*** - Մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում կատարելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին:<br>***Աշխարհագրություն*** - Ձևավորել հավասարակշռված կարծիք աշխարհագրական գործոններով պայմանավորված էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ<br>***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրա բացասական ազդեցությունները:<br>***Պատմություն, հասարակագիտություն*** - Ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Դրսևորել խնդիրներ և հարցեր ձևակերպելու, անհատական և խմբային նախագծեր իրականացնելու հմտություններ:<br>***Առողջ ապրելակերպ*** - Տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից:<br>***Ինֆորմատիկա*** - Հաղորդակցման մի շարք ձևերի կիրառություններ (նորությունների թերթիկներ, վեբկայքեր, բազմամեդիա |

| |
|---|
| պրեզենտացիաներ, երաժշտության գնահատման հարթակներ, մուլտֆիլմեր, թռուցիկներ և պաստառներ): Անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել արտիֆակտ, որը պատասխանում է հետազոտական հարցին և ներկայացնում է արդյունքներն ու եզրահանգումները:<br>***Օտար լեզուներ*** - Կապակցված կերպով ներկայացնել պատմության/իրադարձության/ֆիլմի բովանդակությունը՝ արտահայտելով իր վերաբերմունքը դրա նկատմամբ: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ4, Հ5, Հ8, Հ10, Հ12, Հ14, Հ16, Հ17, Հ19, Հ24, Հ26, Հ30, Հ32, Հ35, Հ42 |

| **ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ** | |
|---|---|
| **ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ (8 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Ստեղծագործական աշխատանքները մեկնաբանելու, արտահայտիչ խոսք ձևավորելու կարողություններ:<br>Նկարագրել ստեղծագործության թողած ազդեցությունը և կապը իրականության հետ: | **7-8.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել պաստառներ կերպարվեստի և դիզայնի տարրերի և սկզբունքների վերաբերյալ:<br>**7-8.Կ.Ա.ՔԱ.1.** Կատարել արվեստագիտական վերլուծություններ:<br>**7-8.Կ.Ա.ՔԱ.2.** Դասակարգել կերպարվեստի տեսակները, ժանրերը, ոճերը:<br>**7-8.Կ.Ա.Գ.1.** Ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ:<br>**7-8.Կ.Ա.Գ.2.** Ցույց տալ աշխատանքներում օգտագործված տարբեր լուծումները: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ինչո՞ւ են ստեղծագործությունները բաժանվում ժանրերի: Ինչո՞ւ է կարևոր իմանալ ստեղծագործության ոճը: Ստեղծագործությունից ի՞նչն է ավելի շատ տպավորվում, | |

| | |
|---|---|
| ազդում մարդկանց վրա:<br>Ինչպե՞ս գնահատել ստեղծագործությունները: | **7-8.Կ.Ա.ՔԱ.3.** Մեկնաբանել և վերլուծել իր ստեղծագործությունները:<br>**7-8.Կ.Կ.ԱԴ.1.** Ներկայացնել ժամանակակից արվեստի դրական կամ բացասական ազդեցությունն առօրյա կյանքում: |

**Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝**

- կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,
- կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,
- պաստառներում պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը,
- վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ:
- ինքնուրույն, զույգով կամ խմբով մանրամասն ներկայացնել աշխատանքները,
- ներկայացնել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,
- բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն),
- դասակարգել աշխատանքները՝ հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները,
- աշխատանքները գնահատել՝ ըստ արտահայտչականության, գրագիտության, հիմնական գաղափարի փոխանցման,
- համեմատել ընկերների աշխատանքները,
- ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:

| **Բովանդակություն** | **Գործնականաշխատանք** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|---|
| Արվեստագիտական հետազոտություն: | Ժանրերի ֆունկցիոնալ տարբերությունների մեկնաբանություն: Ոճային բազմազանության և դրանց | **Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացա- |

| | | |
|---|---|---|
| Կատարման վարպետություն:<br>Թեմայի արդիականություն:<br>Ավանդական և ոչ ավանդական մոտեցումներ:<br>Ստեղծագործությունների համեմատական վերլություն: | առանձնահատկությունների ներկայացում:<br>Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ կարծիքների արտահայտում՝ հարց ու պատասխանի, ռուբրիկների միջոցով:<br>Միևնույն ստեղծագործողի տարբեր աշխատանքներ:<br>Պլանավորել և իրականացնել հետազոտություններ:<br>Քննարկել արվեստագետի կողմից գույնի և կատարման տեխ-նիկայի ընտրությունը որպես ազդեցության, հուզականության արտահայտություն:<br>Նույն թեմայով տարբեր ստեղծագործողների կատարած աշխա-տանքներ: Միևնույն ժանրի ստեղծագործությունների համեմա-տություն:<br>Արվեստի ստեղծագործությունների քննարկում, վերլուծություն, դասակարգում և գնահատում:<br>Մեկնաբանել և վերլուծել իր և ընկերների աշխատանքները:<br>Առաջարկել և ձևակերպել ստեղծագործությունները գնահա-տելու չափանիշներ:<br>**Նկարագրել** - Ի՞նչ է պատկերված:<br>**Ներկայացնել** - Արվեստի ո՞ր տեսակին է պատկանում աշխա-տանքը:<br>**Վերլուծել** - Ի՞նչ պատկերներ են կիրառված: Ի՞նչ նպատակով են օգտագործված հենց այդ պատկերները: | հայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերու-թյունները: Գտնել ներդաշնակություն:<br><br>**Համակարգեր և մոդելներ**<br>Համակարգը՝ որպես ընդհանուր գաղափարով, թեմայով, մոտեցումով կատարված ստեղծագործությունը (ները) ներկայացնելու ընդհանրական մոտեցում, որով յուրաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել:<br><br>**Կողմնորոշում ժամանակի և տարա-ծության մեջ**<br>Ուսումնասիրվում են տարբեր մարդ-կանց գործունեությունը, հայտնա-գործությունները, գյուտերը, մարդկության պատմության շրջադարձային կետերը, ինչպես նաև |

<table>
<tr><td></td><td>Մեկնաբանել - Ինչի՞ մասին է պատմում ստեղծագործությունը:<br>Քննարկել – Հաջողվե՞լ է արվեստագետին փոխանցել գաղափարը, թե ոչ:<br>Տվյալ աշխատանքներից ո՞րը կարելի է ձեռք բերել: Ինչո՞ւ այո և ինչո՞ւ ոչ:</td><td>անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:</td></tr>
<tr><td colspan="3">Առաջարկվող թեմատիկա</td></tr>
<tr><td colspan="3">Վարդգես Սուրենյանց՝ «Խրիմյան հայրիկ», «Սալոմե»<br>Սարգիս Մուրադյան՝ «Կոմիտաս»<br>Վասիլի Սուրիկով՝ «Բոյարուհի Մորոզովա»<br>Երվանդ Քոչար՝ «Սասունցի Դավիթ» գրաֆիկական շարք, Հակոբ Կոջոյան՝ «Սասունցի Դավիթ»<br>Գառնի հեթանոսական փաճարը, խճանկարները:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայականկապ</td></tr>
<tr><td colspan="3">Հայոց լեզու և գրականություն - Ստեղծել տարաբնույթ ուսումնական/ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ և այլն: Կարծիք հայտնել, պաշտպանել սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորել այն: Մեկնաբանել գաղափարը՝ հիմնվելով գրական օրինակների վրա:<br>Երկրաչափություն - սահմանել հավասար, համագիծ, տարագիծ, համուղղված, հակուղղված, հակադիր վեկտորներ հասկացությունները և կառուցել դրանց օրինակներ նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով: Կառուցել, նաև դինամիկ մաթեմատիկայի ծրագրերով, տրված պատկերի համաչափ պատկեր:<br>Ֆիզիկա - Օրինակներով հիմնավորել, որ ձայնային ալիքները տարածվում են տարբեր միջավայրերով: Ռեզոնանս, արձագանք:<br>Կենսաբանություն - Մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում կատարելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառական</td></tr>
</table>

առանձնահատկություններին:

***Աշխարհագրություն*** - Ձևավորել հավասարակշռված կարծիք աշխարհագրական գործոններով պայմանավորված էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:

***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրա բացասական ազդեցությունները:

***Պատմություն, հասարակագիտություն*** - Ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Դրսևորել խնդիրներ և հարցեր ձևակերպելու, անհատական և խմբային նախագծեր իրականացնելու հմտություններ:

***Առողջ ապրելակերպ*** - Տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից:

***Ինֆորմատիկա*** - Հաղորդակցման մի շարք ձևերի կիրառություններ (նորությունների թերթիկներ, վեբկայքեր, բազմամեդիա պրեզենտացիաներ, երաժշտության գնահատման հարթակներ, մուլտֆիլմեր, թռուցիկներ և պաստառներ): Անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել արտիֆակտ, որը պատասխանում է հետազոտական հարցին և ներկայացնում է արդյունքներն ու եզրահանգումները:

***Օտար լեզուներ*** - Կապակցված կերպով ներկայացնել պատմության/իրադարձության/ֆիլմի բովանդակությունը՝ արտահայտելով իր վերաբերմունքը դրա նկատմամբ:

| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| --- |
| Հ4, Հ5, Հ8, Հ10, Հ12, Հ14, Հ16, Հ17, Հ19, Հ24, Հ26, Հ30, Հ32, Հ35, Հ42 |

<table>
<tr><th colspan="2">ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ</th></tr>
<tr><th colspan="2">ԱՐՎԵՍՏ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԳՅՈՒՏԵՐ (6 ժամ)</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td>Հասկանալ, որ արվեստի ստեղծագործություններն ունեն տարիք, և կարելի է որոշել, թե ինչպես են դրանք ստեղծվել:<br>Ստեղծագործությունների միջոցով ուսումնասիրել տարբեր ժամանակներում ապրած մարդկանց կենցաղը:</td><td rowspan="3">7-8.Կ.Ս.ՆՄ.1. Տարբեր նյութերը և մոտեցումները կիրառել ստեղծագործական աշխատանքներն ավելի արտահայտիչ դարձնելու համար (2D, 3D)՝ կախված թեմայից և առաջադրանքի բնույթից:<br>7-8.Կ.Ս.ՆՄ.2. Պատրաստել պաստառներ կերպարվեստի և դիզայնի տարրերի և սկզբունքների վերաբերյալ:<br>7-8.Կ.Ա.ՔԱ.1. Կատարել արվեստագիտական վերլուծություններ:<br>7-8.Կ.Ա.ՔԱ.2. Դասակարգել կերպարվեստի տեսակները, ժանրերը, ոճերը:<br>7-8.Կ.Ա.Գ.1. Ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ:<br>7-8.Կ.Ա.Գ.2. Ցույց տալ աշխատանքներում օգտագործված լուծումները:<br>7-8.Կ.Ս.ԱՏ.1. Արվեստի վերաբերյալ տեսաշարերի պատրաստում:<br>7-8.Կ.Ս.ԱՏ.2. Ներկայացնել նկարչական նյութերը և տեխնոլոգիաները՝ ըստ կիրառման անհարժշտության:</td></tr>
<tr><th>Ուղղորդող հարցադրում</th></tr>
<tr><td>Ինչպե՞ս է արվեստն օգնում հասկանալու մարդկանց և նրանց կենցաղն ու սովորությունները:<br>Ինչպե՞ս է արվեստը ներկայացնում իրականությունը:<br>Կա՞ արդյոք արվեստ մեր շրջապատում:</td></tr>
<tr><th colspan="2">Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</th></tr>
<tr><td colspan="2"><ul><li>զարգացնել գաղափարը, աշխատել թեմայի մշակման, ճեպանկարների, էսքիզների կատարման ուղղությամբ,</li><li>տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության,</li><li>ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ գունանկարի, գծանկարի, քանդակի, մեդիայի համար,</li><li>ստանալ ծավալային և հարթ պատկերներ,</li></ul></td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| • ցուցադրել ծավալային դիզայնի և քանդակի տարբերությունը՝ կախված նյութից,<br>• ստանալ հարթ և ծավալային պատկերներ՝ կիրառելով մեդիա, թուղթ, փայտ, կավ և այլն,<br>• կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,<br>• կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,<br>• պաստառներում պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը,<br>• վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ:<br>• ինքնուրույն, զույգով կամ խմբով մանրամասն ներկայացնել աշխատանքները,<br>• ներկայացնել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,<br>• բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն),<br>• դասակարգել աշխատանքները՝ հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները,<br>• աշխատանքները գնահատել՝ ըստ արտահայտչականության, գրագիտության, հիմնական գաղափարի փոխանցման,<br>• համեմատել ընկերների աշխատանքները,<br>• ճանաչել և քննել ժամանակաշրջանով, մշակույթով և հնարավորություններով պայմանավորված արվեստի ստեղծագործությունը,<br>• պատրաստել և ներկայացնել է ստեղծագործությունների թվայնացված պորտֆոլիոներ,<br>• ճանաչել և վերլուծել անցյալում և ներկայում արված ստեղծագործությունները՝ ըստ օգտագործված նյութերի և միջոցների: | | |
| **Բովանդակություն** | **Գործնականաշխատանք** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| Արվեստի մասին պատմող տեսաֆիլմեր: | Ուսումնասիրել արվեստի աշխատանքներում օգտագործված նյութերը: | **Անհատական և մշակութային արտահայտում** |

| | | |
|---|---|---|
| Արվեստի ստեղծագործությունում օգտագործված նյութերի և միջոցների տեխնիկական հետազոտում:<br>Արվեստի նմուշների վերականգնում:<br>Ինչո՞ւ է արվեստագետը ընտրել տվյալ նյութը կամ միջոցը:<br>Որքանո՞վ է ընտրված մատուցման ձևն արդարացված:<br>Նոր առաջարկություններ: | Հետազոտել տարբեր ժամանակներում արվեստագետների աշխատելու միջոցները և հնարավորությունները:<br>Համեմատել տարբեր ստեղծագործություններ:<br>Գտնել նմանություններ և տարբերություններ օգտագործված նյութերի կամ աշխատանքի  միջոցների մեջ:<br>Քննարկել տարբեր երկրներում քաղաքական, հասարակական, մշակութային իրադարձության խորհրդանիշները՝ որպես մշակութային ժառանգություն:<br>Հայ և համաշխարհային արվեստի ներկայացուցիչների մասին պատմող տեսաֆիլմերի, գեղարվեստական գրականության, մեդիայի ուսումնասիրություններ:<br>Քննարկել տարբեր արվեստագետների աշխատանքները, ի՞նչ են պատմում իրենց ժամանակների մասին:<br>Քննարկել, թե ինչպես, ինչով և ինչու են ստեղծագործում արվեստագետները:<br>Գեղարվեստական ժառանգության ուսումնասիրություն ժողովրդական արվեստի կամ տեղական երկրագիտական թանգարաններում:<br>Հեղինակային իրավունքի դրսևորումներն արվեստում:<br>Մրցանակաբաշխություններն արվեստի բնագավառում:<br>Հանդես գալ հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնելով | Ուսումնասիրել և բացահայտել գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ արտահայտող ուղիները, որոնցով արժևորվում և գնահատվում է ստեղծարարությունը:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն:<br>***Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ***<br>Ուսումնասիրվում են տարբեր մարդկանց գործունեությունը, հայտնագործությունները, գյուտերը մարդկության պատմության |

| | | |
|---|---|---|
| | իստակ և նպատակային խոսք, հայտնել տեսակետ և դրսևորել հետաքրքրություններ: | շրջադարձային կետերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: |

**Առաջարկվող թեմատիկա**

***Մատենադարան,***

***Ազգային պատկերասրահի պահոցներ,***

***վիրտուալ թանգարաններ***

**Միջառարկայականկապ**

***Հայոց լեզու և գրականություն*** - Դրույթի վերաբերյալ հետազոտական հարց: Կարծիք հայտնել, պաշտպանել սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորել այն: Միջառարկայական կապերը փաստարկել օրինակներով, ներկայացնել սահիկահանդես, ֆիլմ, անիմացիա, ներկայացում:

***Ֆիզիկա*** - Օրինակներով հիմնավորել, որ ձայնային ալիքները տարածվում են տարբեր միջավայրերով: Ռեզոնանս, արձագանք:

***Կենսաբանություն*** - Մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում կատարելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին:

***Աշխարհագրություն*** - Ձևավորել հավասարակշռված կարծիք աշխարհագրական գործոններով պայմանավորված էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ

***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու

| |
|---|
| իմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրա բացասական ազդեցությունները: |
| ***Պատմություն, հասարակագիտություն*** - Ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Մեկնաբանել պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները և կիրառել դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության: |
| ***Առողջ ապրելակերպ*** - Տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից: |
| ***Ինֆորմատիկա*** - Ընտրել, օգտագործել, համակցել տարբեր տեսակի համակարգչային ծրագրեր (այդ թվում ինտերնետ ծառայություններ) և դրա հիման վրա նախագծել ու ստեղծել որևէ հստակ նպատակին ծառայող բովանդակություն, ներառյալ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն, գնահատում և ներկայացում: |
| ***Օտար լեզուներ*** - Համապատասխան լեզվական միջոցներով արտահայտել սեփական կարծիքը և զգացմունքները (ուրախություն, տխրություն, ցանկություն, կասկած և այլն): |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ2, Հ4, Հ5, Հ8, Հ9, Հ10, Հ13, Հ14, Հ15, Հ16, Հ25, Հ26, Հ29, Հ30, Հ31, Հ44, Հ45, Հ46 |

| **ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ** | |
|---|---|
| **ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (14 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Նկարն իբրև թեմատիկ-իմաստային միասնություն ընկալելու կարողությունների ձևավորում:<br>Ինքն իրեն լսելու և միտքը ճիշտ կառուցելու կարողությունների զարգացում: | **7-8.Կ.Ս.ՆՄ.2.** Պատրաստել պաստառներ՝ կերպարվեստի և դիզայնի տարրերի և սկզբունքների վերաբերյալ:<br>**7-8.Կ.Ա.ՔԱ.1.** Կատարել արվեստագիտական վերլուծություններ:<br>**7-8.Կ.Ա.ՔԱ.2.** Դասակարգել կերպարվեստի տեսակները, ժանրերը, |

<table>
<tr><th>Ուղղորդող հարցադրում</th><td rowspan="2">ոճերը:<br>7-8.Կ.Ա.ՔԱ.3. Մեկնաբանել և վերլուծել արվեստի ստեղծագործությունները:<br>7-8.Կ.Ա.Գ.1. Ձևակերպել ստեղծագործությունները գնահատելու չափանիշներ:<br>7-8.Կ.Ա.Գ.2. Ցույց տալ աշխատանքներում օգտագործված լուծումները:<br>7-8.Կ.Ա.ԱՊ.1. Ներկայացնել գիտելիքներ ժամանակակից արվեստի մասին:<br>7-8.Կ.Ա.ԱՊ.2. Համեմատել հայկական և համաշխարհային կերպարվեստի հիմնական առանձնահատկությունները:<br>7-8.Կ.Կ.ԱԴ.3. Ներկայացնել արվեստի դերն առօրյայում:</td></tr>
<tr><td>Ինչպե՞ս է արվեստն օգնում հասկանալու տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում ապրած մարդկանց հավատալիքները, պատկերացումները և վերաբերմունքը կյանքին:<br>Կարո՞ղ ենք արդյոք արվեստի միջոցով հասկանալ, թե ինչպես են ապրել և ապրում մարդիկ:<br>Հնարավո՞ր է հուզվել արվեստի ստեղծագործությունից:</td></tr>
<tr><th colspan="2">Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</th></tr>
</table>

- կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում, ըստ առաջադրված չափանիշների,
- կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,
- պաստառներում պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը,
- վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ:
- ինքնուրույն, զույգով կամ խմբով մանրամասն ներկայացնել աշխատանքները,
- բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն),
- ճանաչել և վերլուծել անցյալում և ներկայում արված ստեղծագործություններն ըստ՝

- *ժամանակաշրջանների,*
- *արվեստագետների,*
- *մշակույթների,*
- *ավանդույթների և այլն,*

- խոսել արվեստի և ստեղծագործելու մասին, տարբերել անցյալում և ներկայում ստեղծված աշխատանքները,
- ճանաչել, տարբերել և գնահատել արվեստի աշխատանքները,
- ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:

| Բովանդակություն | Գործնականաշխատանք | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Հայ և համաշխարհային արվեստի պատմություն և տեսություն:<br>Արվեստ և իրականություն:<br>Ժամանակակից արվեստ: | Ներկայացնել համաշխարհային արվեստի կարևոր շրջանները:<br>Ներկայացնել հայ արվեստի ժամանակաշրջանները և ճանաչում ունեցած արվեստագետներին:<br>Վերլուծել նրանց ստեղծագործությունները՝ ըստ տեսակների (ճարտարապետություն, դեկորատիվ-կիրառական արվեստ, մանրանկարչություն, գեղանկարչություն):<br>Դասակարգել կերպարվեստի տարրերը և սկզբունքները տարբեր դարաշրջանների ստեղծագործություններում (գույն, գիծ, ձև, պատկեր, մակերես):<br>Համեմատել տարբեր երկրների արվեստագետների աշխատանք-ներում ազգային ինքնություն արտահայտող պատկերները:<br>Ուսումնասիրել ստեղծագործությունները՝ ըստ ոճական | **Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բա-ցահայտել պատկերվող առարկանե-րի նմանություններն ու տարբերու-թյունները: Գտնել ներդաշնա-կություն:<br><br>**Համակարգեր և մոդելներ**<br>Համակարգը՝ որպես ընդհանուր գաղափարով, թեմայով, մոտեցու-մով կատարված ստեղծագործու-թյունը (ները) ներկայացնելու |

| | | |
|---|---|---|
| | առանձնահատկությունների: Որոշել՝ երբ են ստեղծվել դրանք:<br>Դիտել ստեղծագործությունները, ներկայացնել հիմնական գաղափարները:<br>Հայաստանը ներկայացնող բնանկարների, հայ նշանավոր արվեստագետների աշխատանքների վերատպությունների ուսումնասիրում: Ներկայացնել հայկական արվեստի պատմական ակունքները:<br>Ներկայացնել  հայկական մանրանկարչության առանձնահատկու-թյունները:<br>Հայկական խաչքարագործությունը՝ որպես արվեստի ինքնուրույն տեսակ:<br>Ուսումնասիրել ստեղծագործության գեղարվեստական շրջանի, դպրոցի (ազդեցությունների) նրբությունները:<br>Բնակության վայրի, տարածքի, համայնքի ճարտարապետական կոթողները, հիշարժան վայրերը, մշակութային հաստատությունները ներկայացնող նախագծերի և հետազոտությունների կատարում:<br>Տարբեր պատմական իրադարձություններ ներկայացնող ստեղծագործությունների դիտում, երկիրը, սովորույթները ներկայացնող աշխատանքներում առանձնացնել բնորոշ տարրերը:<br>**Նկարագրել** - Ի՞նչ է պատկերված:<br>**Վերլուծել** - Կերպարվեստի ո՞ր տարրերն են կիրառված: Ի՞նչ դեր են | ընդհանրական մոտեցում, որով յուրաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել:<br><br>**Անհատական և մշակութային ար-տահայտում**<br>Ուսումնասիրել և բացահայտել գա-ղափարներ, համոզմունքներ, ար-ժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ արտահայտող ուղի-ները, որոնցով արժևորվում և գնա-հատվում է ստեղծարարությունը: |

<table>
<tr>
<td></td>
<td>խաղում այդ տարրերը:<br><br>Մեկնաբանել - Ի՞նչ է պատմում նկարիչը: Եթե ձայները փոխանցելու հնարավորություն լիներ, ի՞նչ ձայներ կլսվեին:<br><br>Քննարկել - Ի՞նչ է պակասում նկարում: Եթե այո, ապաինչո՞ւ:<br><br>Ուսումնասիրել ժամանակակից արվեստի զարգացման միտումները:<br><br>Ուսումնասիրել տարբեր ժողովուրդների կենցաղի և մշակույթի արտացոլումը արվեստում:</td>
<td></td>
</tr>
<tr>
<td colspan="3">Առաջարկվող թեմատիկա</td>
</tr>
<tr>
<td colspan="3">Հին Հունաստանի, Հին Հռոմի և հելլենիստական շրջանի արվեստի զարգացման առանձնահատկությունները, հայ արվեստի զարգացման միտումները հելլենիստական շրջանում: Եվրոպական արվեստի զարգացման առանձնահատկությունները քրիստոնեության ընդունումից հետո ընկած ժամանակաշրջանում (Բյուզանդիա, Արևմտյան և Կենտրոնական Եվրոպա):<br>Հայ միջնադարյան արվեստի զարգացման հիմնական առանձնահատկությունները: Վերածննդի շրջանի արվեստի ընդհանուր նկարագիրը,<br>Վերածննդի ժամանակաշրջանի հիմնական ներկայացուցիչները: Իմպրեսիոնիզմի առաջացման նախադրյալները, այդ շրջանի հիմնական ներկայացուցիչները և հայտնի ստեղծագործությունները: Հայկական մանրանկարչության, ճարտարապետության, դեկորատիվ-կիրառական և խաչքարային արվեստների ձևավորման և զարգացման օրինաչափությունները: XIX դ. հայ արվեստի հիմնական ներկայացուցիչները և նրանց ստեղծագործությունները,<br>XX դ. հայ արվեստի հիմնական բնութագիրը: Ժամանակակից հայ արվեստի հիմնական միտումները: Ռուսական գեղարվեստական դպրոցները, ռուսական գեղարվեստական դպրոցների առանձնահատկությունները:</td>
</tr>
<tr>
<td colspan="3">Միջառարկայական կապ</td>
</tr>
<tr>
<td colspan="3">Հայոց լեզու և գրականություն - Դրույթի վերաբերյալ հետազոտական հարց: Կարծիք հայտնել, պաշտպանել սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորել այն: Միջառարկայական կապերը փաստարկել օրինակներով, ներկայացնել սահիկահանդես, ֆիլմ,</td>
</tr>
</table>

| |
|---|
| անիմացիա, ներկայացում:<br>***Ֆիզիկա*** - Օրինակներով հիմնավորել, որ ձայնային ալիքները տարածվում են տարբեր միջավայրերով: Ռեզոնանս, արձագանք:<br>***Կենսաբանություն*** - Մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում կատարելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին:<br>***Աշխարհագրություն*** - Ձևավորել հավասարակշռված կարծիք աշխարհագրական գործոններով պայմանավորված էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:<br>***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրա բացասական ազդեցությունները:<br>***Պատմություն, հասարակագիտություն*** - Ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Մեկնաբանել պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները և կիրառել դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության:<br>***Առողջ ապրելակերպ*** - Տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից:<br>***Ինֆորմատիկա*** - Ընտրել, օգտագործել, համակցել տարբեր տեսակի համակարգչային ծրագրեր (այդ թվում ինտերնետ ծառայություններ) և դրա հիման վրա նախագծել ու ստեղծել որևէ հստակ նպատակին ծառայող բովանդակություն, ներառյալ՝ տեղեկատվության հավաքում, վերլուծություն, գնահատում և ներկայացում:<br>***Օտար լեզուներ*** - Համապատասխան լեզվական միջոցներով արտահայտել սեփական կարծիքը և զգացմունքները (ուրախություն, տխրություն, ցանկություն, կասկած և այլն): |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ2, Հ4, Հ5, Հ8, Հ9, Հ10, Հ13, Հ14, Հ15, Հ16, Հ25, Հ26, Հ29, Հ30, Հ31, Հ44, Հ45, Հ46 |

<table>
<tr><th colspan="2">ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ</th></tr>
<tr><th colspan="2">ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (10 ժամ)</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td>Հասկանալ, որ արվեստն արտահայտում է իրականությունը:<br>Ուսումնասիրել պատմական, մշակութային, հիշարժան իրադարձությունների արտահայտումը արվեստի միջոցով:<br>Գիտակցել, որ արվեստը կարող է ազդեցություն ունենալ մեր իրականության վրա:<br><br>Ուղղորդող հարցադրում<br><br>- Ի՞նչ է արտահատում արվեստը:<br>-Ինչպե՞ս են ստեղծագործում արվեստագետները: Ինչո՞ւ է դա կարևոր:</td><td>7-8.Կ.Ս.ՆՄ.2. Պատրաստել պաստառներ կերպարվեստի և դիզայնի տարրերի և սկզբունքների վերաբերյալ:<br>7-8.Կ.Ա.ՔԱ.1. Կատարել արվեստագիտական վերլուծություններ:<br>7-8.Կ.Կ.ԱԴ.1. Ներկայացնել արվեստի ստեղծագործությունների ազդեցությունը՝ ըստ ներկայացման ձևերի:<br>7-8.Կ.Կ.ԱԴ.2. Պահպանել մշակութային հաստատություններում ընդունված վարքականոնները:<br>7-8.Կ.Կ.ԱԴ.3. Ներկայացնել ժամանակակից արվեստի դրական կամ բացասական ազդեցությունն առօրյա կյանքում:</td></tr>
<tr><th colspan="2">Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</th></tr>
<tr><td colspan="2">• կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,<br>• կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող եզրույթների մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,<br>• պաստառներում պահպանել տառերի և բառերի ներկայացման համաչափությունները, պահպանել դեկորատիվ արտահայտչականությունը,<br>• վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ:<br>• ինքնուրույն, զույգով կամ խմբով մանրամասն ներկայացնել աշխատանքները,<br>• բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն),</td></tr>
</table>

- ներկայացնել շրջապատող իրականությունն արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ,
- բացատրել, թե ինչպես են տարբեր մշակույթներ ներկայանում իրենց յուրահատուկ արվեստով,
- հասկանալ, որ արվեստը ներկայացնող բոլոր մասնագիտություններն անկրկնելի և կարևոր,
- ներկայացնել մշակութային իրադարձություն, որին մասնակցել է,
- ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:

| Բովանդակություն | Գործնականաշխատանք | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Արվեստի ստեղծագործությունների նշանակությունը պատմության տեսանկյունից:<br>Հայ և համաշխարհային կերպարվեստի ազդեցությունը:<br>Արվեստի մշակութային արժեքը:<br>Հայ արվեստի դերը:<br>Արվեստի ստեղծագործությունների ազդեցությունը՝ ըստ ներկայացման ձևերի:<br>Ժամանակակից արվեստի դրական կամ բացասական ազդեցությունն առօրյա կյանքում: | Հետազոտել մեր իրականության մեջ արվեստի ներկայությունը:<br>Արվեստի ստեղծագործությունները՝ որպես տեղեկատվության փոխանցման և հաղորդակցման միջոց:<br>Հայ և համաշխարհային արվեստի փոխազդեցությունները. ընդհանրություններ, տարբերություններ:<br>Քննարկել արվեստի դերը:<br>Արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ կարճ ակնարկների պատրաստում:<br>Արվեստի ազդեցությունը քաղաքակրթությունների վրա:<br>Հասարակության սոցիալական նորմերը խորհրդանշող արվեստագիտական արտահայտություններն անցյալում | **Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն:<br><br>**Համակարգեր և մոդելներ**<br>Համակարգը՝ որպես ընդհանուր գաղափարով, թեմայով, մոտեցումով կատարված ստեղծագործությունը (ները) ներկայացնելու ընդհանրական մոտեցում, որով յուրաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել: |

| | | |
|---|---|---|
| | և ներկայում:<br>Ուսումնասիրել արվեստագետների դերը: Որոշել նրանց գործունեության առանձնահատկությունները և կարևորությունը:<br>Ուսումնասիրել որևէ իրադարձություն ընտանիքում, համայնքում, երկրում, աշխարհում, որին անդրադարձել է արվեստը:<br>Ներկայացնել որևէ մշակութային իրադարձության կամ արվեստի հետ առնչության սեփական օրինակ:<br>Արվեստի մասին պատմող տեսաֆիլմերի քննարկումներ: | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ուսումնասիրել և բացահայտել գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ արտահայտող ուղիները, որոնցով արժևորվում և գնահատվում է ստեղծարարությունը: |

**Առաջարկվող թեմատիկա**

***Տեսաֆիլմեր՝ «Արվեստի ուժը՝ Մարկ Ռոտկո», «Մոդի», «Իմ ձախ ոտքը», «Անտուան Վատտոյի գաղտնիքը»:***

***Կրոնական ուղղություններ, կրոնը և արվեստը, քրիստոնեություն, իսլամ, բուդդիզմ:***

**Միջառարկայական կապ**

***Հայոց լեզու և գրականություն*** - Դրույթի վերաբերյալ հետազոտական հարց: Կարծիք հայտնել, պաշտպանել սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորել այն: Միջառարկայական կապերը փաստարկել օրինակներով, ներկայացնել սահիկահանդես, ֆիլմ, անիմացիա, ներկայացում:

| |
|---|
| ***Ֆիզիկա*** - Օրինակներով հիմնավորել, որ ձայնային ալիքները տարածվում են տարբեր միջավայրերով: Ռեզոնանս, արձագանք:<br>***Կենսաբանություն*** - Մոդելների, նկարների, սխեմաների, տեսանյութերի միջոցով մեկնաբանել վերլուծիչների աշխատանքի սկզբունքները՝ հղում կատարելով տեսողական, լսողական զգայարանների հիմնական կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին:<br>***Աշխարհագրություն*** - Ձևավորել հավասարակշռված կարծիք աշխարհագրական գործոններով պայմանավորված էթնոմշակութային և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:<br>***Ֆիզկուլտուրա*** - Դրսևորել ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ: Պասիվ շարժունակության հետևանքները և օրգանիզմի վրա բացասական ազդեցությունները:<br>***Պատմություն, հասարակագիտություն*** - Ըմբռնել իր և սերունդների կապը պատմության մեջ, բացահայտել պատմական փորձի յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: Մեկնաբանել պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները և կիրառել դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության:<br>***Առողջ ապրելակերպ*** - Տարբերել անձի, հասարակության շահերը պաշտպանող, չվնասող, ընդհանուրի բարօրությունից բխող ենթամշակույթը մասնավոր շահեր սպասարկող ենթամշակույթներից:<br>***Ինֆորմատիկա*** - Ընտրել, օգտագործել, համակցել տարբեր տեսակի համակարգչային ծրագրեր (այդ թվում ինտերնետ ծառայություններ) և դրա հիման վրա նախագծել ու ստեղծել որևէ հստակ նպատակին ծառայող բովանդակություն, ներառյալ՝ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն, գնահատում և ներկայացում:<br>***Օտար լեզուներ*** - Համապատասխան լեզվական միջոցներով արտահայտել սեփական կարծիքը և զգացմունքները (ուրախություն, տխրություն, ցանկություն, կասկած և այլն): |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ2, Հ10, Հ12, Հ13, Հ14, Հ15, Հ16, Հ17, Հ19, Հ23, Հ24, Հ25, Հ26, Հ31, Հ43, Հ44, Հ45, Հ46 |

## 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

**Առաջարկվում է (68 ժամ)**

<table>
<tr><th colspan="2">ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</th></tr>
<tr><th colspan="2">ՆՅՈՒԹԵՐ, ՄԻՋՈՑՆԵՐ (6 ժամ)</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td>Ստեղծագործական աշխատանքներում նյութերը և միջոցներն ազատ և գրագետ կիրառելու հմտությունների ձևավորում:<br>Ընդհանուր աշխատանքային տարածքում համագործակցելու կարողությունների ձևավորում:<br><br>Ուղղորդող հարցադրում<br><br>Ինչպե՞ս է պատկերը ազդում կամ ներգործում դիտողի վրա:<br>Ի՞նչն է օգնում արվեստագետին չվախենալու և փնտրելու այլընտրանքային ստեղծագործական լուծումներ:<br>Ի՞նչ է նշանակում ստեղծագործական ազատություն:</td><td>9.Կ.Ս.ՆՄ.1. Ստեղծել պատկերներ, կոլաժներ, ծավալային աշխատանքներ՝ փորձարկելով անծանոթ նյութեր: Հետազոտել նոր նյութեր և միջոցներ ստեղծագործություններին իմաստ հաղորդելու նպատակով:<br>9.Կ.Ս.ՆՄ.2. Հետազոտական աշխատանքներում կամ զրույցներում կիրառել համապատասխան բառապաշար:<br>9.Կ.Ս.ՆՄ.3. Մեկնաբանել ավանդական և ոչ ավանդական աշխատանքային գործիքների և միջոցների ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա:<br>9.Կ.Ս.ՆԵ.1. Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ ներկայացնելով կերպարվեստի տարբեր ոճեր (նատյուրմորտ, բնանկար, դիմանկար, քանդակ):<br>9.Կ.Ս.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D աշխատանքներ՝ բնօրինակը ներկայացնելով վերացական արվեստի տեսանկյունից (օպարտ,պոպարտ, պուանտելիզմ, էքսպրեսիոնիզմ և այլն):<br>9.Կ.Ս.ՆԵ.3. Ստեղծել 2D և 3D երևակայական թեմատիկ աշխատանքներ (հորինվածքներ):</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | **9.Կ.Ա.ՔԱ.3.** Վերլուծել հանդիսատեսի համոզմունքների, գաղափարների, տեսա-կետների վրա ցուցադրությունների թողած ազդեցությունը: |

| **Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝** |
|---|
| • ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով, նաև մեդիայի կիրառմամբ ստեղծագործական մտքի արտահայտիչ հաղորման հմտություններ,<br>• զարգացնել գաղափարը, աշխատել թեմայի մշակման, զարգացման, առավել արդունավետ մատուցման, ճեպանկարների, էսքիզների կատարման ուղղությամբ,<br>• տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության,<br>• ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ գունանկարի, գծանկարի, քանդակի, մեդիայի համար,<br>• ստանալ ծավալային և հարթ պատկերներ,<br>• ցուցադրել ծավալային դիզայնի և քանդակի տարբեր հնարավորությունները՝ կախված նյութից,<br>• ստանալ հարթ և ծավալային պատկերներ՝ կիրառելով մեդիա, թուղթ, փայտ, կավ, մետաղ, կտոր, պլաստիկ և այլն,<br>• կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,<br>• կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող նյութերի մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,<br>• պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,<br>• պահպանել համատեղ աշխատելու էթիկական պայմանները,<br>• ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները,<br>• կատարել գծանկարչական և գեղանկարչական աշխատանքներ, նյութերն ու միջոցներն օգտագործել ըստ նշանակության,<br>• աշխատանքներում պահպանել ընտրված նյութերով աշխատելու անհրաժեշտ պայմանները,<br>• փորձարկել աշխատանքներում ընտրված նյութերի հնարավորությունները՝ առանց անվտանգության կանոնների խախտման, |

- պատկերել շրջապատող առարկաները և բնությունը, ինքնուրույն որոշել թեման,
- կատարել ճեպանկարներ և նախանկարներ թեմատիկ հորինվածքներ ստեղծելու նպատակով,
- թեմատիկ առաջադրանքներում պահպանել համաչափության, կոմպոզիցիայի կառուցման, գունային լուծումների ճշտությունը,
- աշխատանքներում պահպանել գծային և գունային հեռանկարի կանոնները,
- ցուցադրել ստեղծագործական մտածողություն և գեղարվեստական միտք,
- ստեղծել երևակայությամբ և զգացմունքներով թելադրված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես ունեցած հուզական վերաբերմունք,
- ստեղծել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրին, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերող արտահայտիչ երևակայական աշխատանքներ,
- ստեղծել արտահայտիչ երևակայական աշխատանքներ, որոնք կարող են հասարակական, քաղաքական և մշակութային զարգացումների վրա ազդեցություն ունենալ,
- կատարել վերլուծություններ և հետազոտություններ մշակութային իրադարձության նշանակալիության, կարևորության վերաբերյալ,
- հավաքագրել և դասակարգել մշակութային իրադարձության կամ ստեղծագործության վերաբերյալ արտահայտված կարծիքները:

| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|---|
| Հասարակական ներգործության ապահովումը՝ կախված ստեղծագործական աշխատանքներում տարբեր նյութերի, միջոցների և նոր մոտեցումների ընտրությունից | Թափանցիկ կառուցման եղանակի օգտագործումն առարկաների ձևը և համաչափությունները բացահայտելու համար:<br>Գծային հեռանկարչությունը՝ որպես գեղարվեստական արտահայտչականության միջոց ճարտարապետական բնանկարում:<br>Մասշտաբային հարաբերակցության ճիշտ պահպանում:<br>Գրաֆիկական կոմպոզիցիա մատիտով, սպիտակ և գունավոր կավ- | **Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում**<br>Աշխատանքի բնույթ և արդյունք կապը. նյութը, չափը, խնդիրը, թեմաներն ազդում են աշխատանքի բնույթի վրա, ինչը |

| | | |
|---|---|---|
| (2D, 3D, 4D):<br>Մասնագիտական բառամթերք և եզրույթներ:<br>Ավանդական և ոչ ավանդական աշխատանքային գործիքների և միջոցների ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա:<br>Նյութերի, գործիքների և միջոցների անվտանգ կիրառումը: | ճամատիտներով, տուշով:<br>Ֆիգուրատիվ կոմպոզիցիաների ստեղծում:<br>Կոմպոզիցիաների ստեղծում, համամասնությունների չափազանցում, արտասովոր շարժում և այլն:<br>Ծավալային կոմպոզիցիայի ստեղծում:<br>Վերացական հորինվածքների ստեղծում բնական մոտիվների հիման վրա (2D, 3D):<br>Կազմման տարբերակներ՝ միմյանց և թղթի կենտրոնի նկատմամբ պատկերների սիմետրիկ և ոչ սիմետրիկ տեղաբաշխմամբ:<br>Կոլաժի, խառը տեխնիկայի կիրառություն, փորձարկում:<br>Միտքը ազդեցիկ, ուղղորդված ներկայացնելու նպատակով նյութի և մատուցման ձևերի ընտրություն:<br>Միևնույն թեմայի ծաղրանկարային, դրամատիկ, մարդասիրական, դեկորատիվ, տեքստային, մանկական, քաղաքական երանգավորում-ներ՝ գույնի, գծի, ծավալի և նյութի տարբեր կիրառություններով:<br>Միևնույն թեմայի հակառակ իմաստի արտահայտման իմպրովիզներ:<br>Միևնույն աշխատանքի իմաստային վերարտադրություններ:<br>Բնանկարի հորիզոնական պատկերն ուղղահայաց կառուցվածքում վերարտադրելու փորձեր:<br>Աշխատանքներում ջրաներկի տեխնիկայի կիրառում՝ թացով-թաց թղթի վրա, չոր թղթի վրա, նախանկարով, առանց նախանկարի: | տարբեր արդյունքներ է տալիս:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել ընտրված թեմա-ների ընդհանրություններն ու տարբերությունները: Գտնել ներ-դաշնակություն:<br><br>**Մասշտաբ, համամասնություն, քանակ**<br>Մասշտաբները փոխվելիս փոխ-վում են պատկերների չափերը, սակայն համամասնությունը պահպանվում է, ինչպես օրինակ՝ բնօրինակից պատկերման աշխատանքներում: |

| | | |
|---|---|---|
| | Ազգագրական, ժողովրդական մշակույթի թեմատիկայի վերարտադրում ժամանակակից ստեղծագործական կառուցվածքի մեջ:<br>Փործարկել տարբեր գրատեսակներին պատկանող տառերի և բառերի գրելաձներ:<br>Գծանկարել կտրված, քառակող, ակադեմիական, ճարտարապետական և գեղարվեստական գրատեսակին պատկանող տառեր, պահպանել հիմնական համաչափությունները: | |

**Առաջարկվող թեմատիկա**

***ԴԿԱ - Խեցեգործություն, ոսկերչություն, գորգարվեստ:***

***Իմպրովիզացիա, համադրում, խառը տեխնիկա, մեդիա:***

**Միջառարկայական կապ**

- կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,
- կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող նյութերի մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,
- դասակարգել աշխատանքները՝ հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները,
- աշխատանքներում ցուցադրել մյուս ուսումնական առարկաներից ստացած գիտելիքները,
- քննել, վերլուծել և ներկայացնել ստեղծագործություններում առկա կապը արվեստի մյուս տեսակների հետ,
- բացահայտել և մեկնաբանել գեղարվեստական գաղափարը փոխանցելու գեղարվեստական հնարները,
- վերլուծել արվեստի ստեղծագործությունները, կիրառել քննական վերաբերմունք տեսածի և զգացածի վերաբերյալ:
- մանրամասն ներկայացնել ինքնուրույն, զույգով կամ խմբով կատարված աշխատանքները, թվարկել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,
- բանավոր կամ գրավոր ներկայացնել աշխատանքների հիմնական առանձնահատկությունները, դրանց կապը իրականության հետ (փոխանցում են, ազդում, նկարագրում, ահազանգում են կամ կարող են ներազդել, ուղղորդել և այլն),
- ընտրել շրջապատող իրականությունն արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ,
- կատարել վերլուծություններ և հետազոտություններ մշակութային իրադարձության նշանակալիության, կարևորության վերաբերյալ,

- հավաքել և դասակարգել մշակութային իրադարձության կամ ստեղծագործության վերաբերյալ արտահայտված կարծիքները,
- քննել ստեղծագործությունները՝ հաշվի առնելով թեմաները, ժամանակաշրջանը, նկարչի անհատականությունը, ավանդույթները, մշակութային խնդիրները և այլն,
- ներկայացնել որոշակի ժամանակաշրջանում ստեղծագործած հայազգի արվեստագետների աշխատանքները,
- բացատրել, թե ինչ միջոցներով և որքանով է արտացոլված տվյալ ժամանակաշրջանը,
- հասկանալ, որ բոլոր մշակույթները ներկայանում են իրենց արվեստով,
- հասկանալ, որ արվեստը բոլոր ժամանակների և մշակույթների հաղորդակցման անփոխարինելի լեզու է,
- ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Հայտնի արվեստագետների կյանքը և ստեղծագործությունները:<br>Արվեստի գործերի մշակութային արժեքը:<br>Կերպարվեստի ոճերը:<br>Հայ և համաշխարհային կերպարվեստի հիմնական ուղղությունները:<br>Հայ  արվեստագետները հայրենիքում և հայրենիքից դուրս: | Ներկայացնել համաշխարհային արվեստի կարևոր շրջանները:<br>Ներկայացնել հայ արվեստի ժամանակաշրջանները և ճանաչում ունեցած արվեստագետներին:<br>Վերլուծել նրանց ստեղծագործությունները՝ ըստ տեսակների (ճարտարապետություն, դեկորատիվ կիրառական արվեստ, մանրանկարչություն, գեղանկարչություն):<br>Դասակարգել կերպարվեստի տարրերը և սկզբունքները տարբեր դարաշրջանների ստեղծագործություններում:<br>Համեմատել տարբեր երկրների արվեստագետների աշխատանքներում ազգային ինքնություն արտահայտող պատկերները: | **Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն:<br><br>**Համակարգեր և մոդելներ**<br>Համակարգը՝ որպես ընդհանուր գաղափարով, թեմայով, մոտեցումով կատարված ստեղծա- |

| | | |
|---|---|---|
| | Ուսումնասիրել ստեղծագործությունները՝ ըստ ոճական առանձ-նահատկությունների:<br>Ուսումնասիրել ստեղծագործությունների ստեղծման հանգա-մանքները:<br>Ուսումնասիրել արվեստագիտական հետազոտությունների ամեաճանաչված հիշարժան աղբյուրները (Ջորջիո Վազարի, Էլի Ֆոր, Անրի Պերյուշո):<br>Դիտել ստեղծագործությունները, ներկայացնել հիմնական գաղափարը:<br>Հայաստանը ներկայացնող բնանկարների, հայ նշանավոր արվեստագետների աշխատանքների վերատպությունների ուսումնասիրում: Ներկայացնել հայ արվեստի պատմական ակունքները:<br>Ներկայացնել  հայկական մանրանկարչության առանձնահատկությունները:<br>Հայկական խաչքարագործությունը՝ որպես արվեստի ինքնուրույն տեսակ:<br>Բնակության վայրի, տարածքի, համայնքի ճարտարապետական կոթողները, հիշարժան վայրերը, մշակութային հաստատությունները ներկայացնող նախագծերի և հետազոտությունների կատարում: | գործությունը (ները) ներկա-յացնելու ընդհանրական մոտեցում, որով յուրաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել:<br><br>**Անհատական և մշակութային ար-տահայտում**<br>Ուսումնասիրել և բացահայտել գա-ղափարներ, համոզմունքներ, ար-ժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ արտահայտող ուղի-ները, որոնցով արժևորվում և գնա-հատվում է ստեղծարարությունը: |

| | | |
|---|---|---|
| | Ձևակերպել իր պատկերացումները մարդկության պատմության ընթացքում գեղագիտական իդեալի փոխակերպումների վերաբերյալ և հիմնավորել սեփական տեսակետն արվեստի տարբեր ուղղություններից բերված օրինակներով:<br>Մեկնաբանել գեղագիտական իդեալ հասկացությունը, դրա հարաբերական բնույթը, համաշխարհային պատմության տարբեր շրջաններում գեղագիտական իդեալների առանձնահատկությունները, ճաշակի դերը իրականության գեղագիտական ընկալման մեջ: Ուսումնասիրել հասարակության զարգացման վրա արվեստի տարբեր ճյուղերի ազդեցությունը:<br>Հավաքել և հետազոտել մշակույթների հիմնական առանձնահատկությունները բացահայտող հիմնավոր տեղեկատվությունը:<br>Տարբեր պատմական իրադարձություններ ներկայացնող ստեղծագործությունների դիտում, երկիրը, սովորույթները ներկայացնող աշխատանքներում առանձնացնել բնորոշ տարրերը:<br>Կատարել արվեստի ստեղծարործության չորս փուլային հետազոտություն:<br>Ուսումնասիրել ժամանակակից արվեստի զարգացման միտումները: | |

| | | |
|---|---|---|
| | Ուսումնասիրել տարբեր ժողովուրդների կենցաղի և մշակույթի արտացոլումը արվեստում:<br>ՈՒսումնասիրել և ներկայացնել ստեղծագործության պատկա-նելությունն՝ ըստ գեղարվեստական դպրոցի և շրջանի, ժամանակաշրջանին բնորոշ տեխնիկայի, ժամանակի հայտնի վարպետների ստեղծագործական ձեռագրերի և նրանց նախընտրած թեմաների: | |

**Առաջարկվող թեմաներ**

***Միջնադարյան Հայաստանի արվեստը, Ժամանակակից արվեստի թանգարան:***

***Արվեստի ուղղություններ (կլասիցիզմ, իմպրեսիոնիզմ, էքսպրեսիոնիզմ, պոստմոդեռնիզմ, սյուրռեալիզմ, սոցռեալիզմ, պոպ-արտ, օպ-արտ):***

**Միջառարկայական կապ**

***Հայոց լեզու և գրականություն*** - Վերաշարադրել, փոխադրել, համառոտել և ընդարձակել տրված տեքստը, հաղորդակցվել նաև ժամանակի և տարածության մեջ (էլեկտրոնային տեքստեր): Մեկնաբանել տարաբնույթ նշաններ, համադրել, փոփոխել: Հասկանալ և մեկնաբանել տեքստում շարահյուսա կան միջոցների կիրառությունը միջավայր, տրամադրություն, կերպար արտահայտելու նպատակով:

***Հանրահաշիվ, երկրաչափություն*** - Ֆունկցիայի վարքը բնութագրող հիմնական հասկացությունները (որոշման տիրույթ և արժեքների բազմություն, զրոներ, նշանապահպանման, աճման և նվազման միջակայքեր, մեծագույն և փոքրագույն արժեքներ): Գրել և մեկնաբանել, հաշվել և կիրառել բանաձևեր, լուծելի խնդիրներ:

***Քիմիա*** - Ստացված գիտելիքները կիրառել վարժությունների և խնդիրների լուծման ժամանակ:

***Ֆիզիկա*** - Իրականացնել չափումներ և կատարել համապատասխան հաշվարկներ՝ օգտագործելով նաև մյուս առարկաներից ձեռք բերած

| |
|---|
| հմտությունները: <br>***Կենսաբանություն*** - Օրինակների միջոցով բացատրել, թե ինչպես է բնական ընտրությունը հանգեցնում էվոլյուցիայի, անդրադառնալով *ժառանգական փոփոխականություն և գոյության կռիվ* հասկացություններին: <br>***Աշխարհագրություն*** - Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները մեզո՝ միջին մակարդակում: <br>***Ֆիզկուլտուրա*** - Կատարել համատեղ առաջադրանքներ, համագործակցել, ցուցաբերել նախաձեռնություն, հանդուրժողականություն և ինքնատիրապետում: Որոշել և գնահատել սեփական ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստվածության մակարդակը: <br>***Պատմություն, հասարակագիտություն*** - Իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորել և հիմնավորել պատմական փորձի յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը: Մեկնաբանել պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները և կիրառել դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության: Հասարակական, քաղաքական և տնտեսական գործընթացներ, մեկնաբանել դրանց նորարարական դերակատարումն ու ազդեցությունն արդի համաշխարհային գործընթացների վրա: <br>***Առողջ ապրելակերպ*** - Հուսալի աղբյուրներ, որոնցում կարելի է գտնել տեղեկատվություն առողջ ապրելակերպի և առողջության վերաբերյալ: <br>***Ինֆորմատիկա*** – Բացատրել, թե ինչ տարբերություններ կան մտավոր սեփականությանն առնչվող կարգերի/օրենքների միջև և ինչպես են դրանք ազդում զարգացող տեխնոլոգիաների վրա: <br>***Օտար լեզուներ*** - Հետևել հասարակությանը և մշակույթին վերաբերող տարբեր թեմաներով պարզ և համառոտ զեկույցներին կամ ելույթներին, եթե հնչող խոսքը պարզ է և ստանդարտ առոգանությամբ: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ2, Հ4, Հ5, Հ8, Հ9, Հ10, Հ13, Հ14, Հ15, Հ16, Հ25, Հ26, Հ29, Հ30, Հ31, Հ44, Հ45, Հ46 |

<table>
<tr><th colspan="2">ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ</th></tr>
<tr><th colspan="2">ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (8 ժամ)</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td>Հասկանալ, որ արվեստն արտահայտում է իրականությունը:<br>Ուսումնասիրել պատմական, մշակութային, հիշարժան իրադարձությունների արտահայտումն արվեստի միջոցով:<br>Գիտակցել, որ արվեստը կարող է ազդեցություն ունենալ մեր իրականության վրա:</td><td rowspan="3">9.Կ.Ս.ՆՄ.2. Հետազոտական աշխատանքներում կամ զրույցներում կիրառել համապատասխան բառապաշար:<br>9.Կ.Ա.ՔԱ.1. Կատարել արվեստագիտական վերլուծություններ:<br>9.Կ.Կ.ԱԴ.1. Ներկայացնել, թե որքանով է մշակույթի, պատմության, ավանդությունների և սովորույթների իմացությունն ազդում ստեղծագործական գործընթացի վրա:<br>9.Կ.Կ.ԱԴ.2. Համեմատել և վերլուծել միևնույն մշակութային իրադարձության լուսաբանումը տարբեր մեդիաների միջոցով (հեռուստատեսություն, տպագիր մամուլ, համացանց և այլն):<br>9.Կ.Կ.ԱԴ.3. Կիրառել ստեղծագործական կարողություններն ու մոտեցումներն ուսումնական մյուս բնագավառներում:</td></tr>
<tr><td>Ուղղորդող հարցադրում</td></tr>
<tr><td>Ինչպե՞ս է արվեստն օժանդակում ստեղծագործական մտածողության զագացմանը:<br>Արվեստն ունի՞ տարիք:</td></tr>
<tr><th colspan="2">Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</th></tr>
<tr><td colspan="2">• կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,<br>• կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող նյութերի մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,<br>• դասակարգել աշխատանքները՝ հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները,<br>• աշխատանքներում ցուցադրել մյուս ուսումնական առարկաներից ստացած գիտելիքները,<br>• քննել, վերլուծել և ներկայացնել ստեղծագործություններում առկա կապը արվեստի մյուս տեսակների հետ,<br>• կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,</td></tr>
</table>

- ներկայացնել, թե ինչով է արվեստի ստեղագործությունը նման կամ տարբեր իրականությունից և որքանով է ազդում մարդկաց վրա,
- բերել արվեստի բնագավառը ներկայացնող մասնագիտությունների օրինակներ,
- ներկայացնել մշակութային հաստատություններում ընդունված վարքականոնները տարբեր ժամանակներում,
- քննարկել և ներկայացնել արվեստի  դերն իր համայնքում,
- քննարկել արվեստագետ դառնալու հնարավորությունները,
- ներկայացնել մշակութային իրադարձություն, որը ներգործություն է ունեցել (դրական կամ բացասական) իր շրջապատի վրա:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Արվեստի ստեղծագործությունների նշանակությունը պատմության տեսանկյունից:<br>Հայ և համաշխարհային կերպարվեստի ազդեցությունը:<br>Արվեստ և իրականություն:<br>Մշակութային հաստատու-թյուններում ընդունված վարքականոնները տարբեր ժամանակներում:<br>Արվեստագիտական մասնագիտություններ: | Հետազոտել մեր իրականության մեջ արվեստի ներկայությունը:<br>Արվեստի ստեղծագործությունները՝ որպես տեղեկատվության փոխանցման և հաղորդակցման միջոց:<br>Հայ և համաշխարհային արվեստների փոխազդեցությունները. ընդհանրություններ, տարբերություններ: Քննարկել արվեստի դերը:<br>Արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ կարճ ակնարկ-ների պատրաստում:<br>Տարբեր մեդիաների լուսաբանումների ձևաչափերի, խոսքի կառուցվածքի, արդիականության, կառուցվածքային առանձ-նահատկությունների ուսումնասիրություններ:<br>Համեմատել և վերլուծել միևնույն մշակութային իրադարձության լուսաբանումը տարբեր մեդիաների միջոցով (հեռուստատե- | **Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բա-ցահայտել պատկերվող առարկա-ների նմանություններն ու տարբե-րությունները: Գտնել ներդաշնակություն:<br><br>**Համակարգեր և մոդելներ**<br>Համակարգը՝ որպես ընդհանուր գաղափարով, թեմայով, մոտեցումով կատարված ստեղծա-գործությունը (ները) ներկայացնելու ընդհանրական մոտեցում, որով յու- |

<table>
<tr><td>Արվեստի ազդեցությունը իրականության վրա մեր օրերում:</td><td>սություն, տպագիր մամուլ, համացանց և այլն):<br>Ուսումնասիրել և ներկայացնել կարճ ակնարկներ հայ մշակույթի վրա օտար ազդեցության հիմնական միտումների, ազգային մշակույթի ձևավորման վրա խորհրդանիշների դերի վերաբերյալ:<br>Արվեստի ազդեցությունը քաղաքակրթությունների վրա:<br>Հասարակության սոցիալական նորմերը խորհրդանշող արվեստագիտական արտահայտություններն անցյալում և ներկայում:<br>Ուսումնասիրել արվեստագետների դերը: Որոշել նրանց գործունեության առանձնահատկությունները և դրանց կարևորությունը:<br>Ուսումնասիրել որևէ իրադարձություն ընտանիքում, համայնքում, երկրում, աշխարհում, որին անդրադարձել է արվեստը:<br>Ներկայացնել որևէ մշակութային իրադարձության կամ արվեստի հետ առնչության սեփական օրինակ: Արվեստի մասին պատմող տեսաֆիլմերի քննարկումներ:</td><td>րաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել:<br><br>Անհատական և մշակութային արտահայտում<br>Ուսումնասիրել և բացահայտել գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ արտահայտող ուղիները, որոնցով արժևորվում և գնահատվում է ստեղծարարությունը:</td></tr>
<tr><td colspan="3">Առաջարկվող թեմատիկա</td></tr>
<tr><td colspan="3">Արվեստի բնագավառի հայտնի մրցանակաբաշխություններ:<br>Մշակութային նշանակալի իրադարձություններ:<br>«Արվեստի ներկայությունն առօրյա կյանքում» (դիզայներներ, հրապարակայնություն և այլն):<br>«Արվեստը և միջավայրը. ուսումնասիրությունից մինչև մերժում»:</td></tr>
<tr><td colspan="3">Միջառարկայական կապ</td></tr>
<tr><td colspan="3">Հայոց լեզու և գրականություն - Վերաշարադրել, փոխադրել, համառոտել և ընդարձակել տրված տեքստը, հաղորդակցվել նաև ժամանակի</td></tr>
</table>

և տարածության մեջ (էլեկտրոնային տեքստեր): Մեկնաբանել տարաբնույթ նշաններ, համադրել, փոփոխել: Հասկանալ և մեկնաբանել տեքստում շարահյուսական միջոցների կիրառությունը միջավայր, տրամադրություն, կերպար արտահայտելու նպատակով:

***Հանրահաշիվ, երկրաչափություն*** - Ֆունկցիայի վարքը բնութագրող հիմնական հասկացությունները (որոշման տիրույթ և արժեքների բազմություն, զրոներ, նշանապահպանման, աճման և նվազման միջակայքեր, մեծագույն և փոքրագույն արժեքներ): Գրել և մեկնաբանել, հաշվել և կիրառել բանաձևեր, լուծելի խնդիրներ:

***Քիմիա*** - Ստացված գիտելիքները կիրառել վարժությունների և խնդիրների լուծման ժամանակ:

***Ֆիզիկա*** - Իրականացնել չափումներ և կատարել համապատասխան հաշվարկներ՝ կիրառելով նաև մյուս առարկաներից ձերք բերած հմտությունները:

***Կենսաբանություն*** - Օրինակների միջոցով բացատրել, թե ինչպես է բնական ընտրությունը հանգեցնում էվոլյուցիայի, անդրադառնալով *ժառանգական փոփոխականություն և գոյության կռիվ* հասկացություններին:

***Աշխարհագրություն*** - Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները մեզո՝ միջին մակարդակում:

***Ֆիզկուլտուրա*** - Կատարել համատեղ առաջադրանքներ, համագործակցել, ցուցաբերել նախաձեռնություն, հանդուրժողականություն և ինքնատիրապետում: Որոշել և գնահատել սեփական ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստվածության մակարդակը:

***Պատմություն, հասարակագիտություն*** - Իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորել և հիմնավորել պատմական փորձի յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը: Մեկնաբանել պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները և կիրառել դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության: Հասարակական, քաղաքական և տնտեսական գործընթացներ, մեկնաբանել դրանց նորարարական դերակատարումն ու ազդեցությունն արդի համաշխարհային գործընթացների վրա:

***Առողջ ապրելակերպ*** - Հուսալի աղբյուրներ, որոնցում կարելի է գտնել տեղեկատվություն առողջ ապրելակերպի և առողջության վերաբերյալ:

***Ինֆորմատիկա*** - Բացատրել, թե ինչ տարբերություններ կան մտավոր սեփականությանն առնչվող կարգերի/օրենքների միջև և ինչպես են

| |
|---|
| դրանք ազդում զարգացող տեխնոլոգիաների վրա: |
| ***Օտար լեզուներ*** - Հետևել հասարակությանը և մշակույթին վերաբերող տարբեր թեմաներով պարզ և համառոտ զեկույցներին կամ ելույթներին, եթե հնչող խոսքը պարզ է և ստանդարտ առոգանությամբ: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Հ2, Հ10, Հ12, Հ13, Հ14, Հ15, Հ16, Հ17, Հ19, Հ23, Հ24, Հ25, Հ26, Հ31, Հ43, Հ44, Հ45, Հ46 |

**10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ**

**Առաջարկվում է (տարեկան 68 ժամ)**

<table>
<tr><th colspan="2">ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</th></tr>
<tr><th colspan="2">ՆՅՈՒԹԵՐ, ՄԻՋՈՑՆԵՐ (6 ժամ)</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td>Ստեղծագործական աշխատանքներում նյութերը և միջոցները ազատ և գրագետ կիրառելու հմտությունների ձևավորում:<br>Ընդհանուր աշխատանքային տարածքում համագործակցելու կարողությունների ձևավորում:</td><td rowspan="3">10-12.Կ.Ս.ՆՄ.1. Հետազոտել տարբեր նյութեր, միջոցներ, գտնել ստեղծագործական աշխատանքներ ստանալու նոր մոտեցումներ (2D, 3D 4D), որոնք կարող են ունենալ հասարակական ներգործություն:<br>10-12.Կ.Ս.ՆՄ.2. Ձևակերպումներում կիրառել մասնագիտական բառամթերք և եզրույթներ:<br>10-12.Կ.Ս.ՆՄ.3. Բացատրել ավանդական և ոչ ավանդական աշխատանքային գործիքների և միջոցների ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա, ցուցաբերել նյութերի, գործիքների և միջոցների անվտանգ կիրառման հմտություններ:<br>10-12.Կ.Ս.ՆԵ.1. Ստեղծել 2D, 3D, 4D աշխատանքներ՝ ներկայացնելով կերպարվեստի տարբեր ոճեր (նատյուրմորտ, բնանկար, դիմանկար, քանդակ, մանրակերտ):<br>10-12.Կ.Ս.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D վերացական արվեստի աշխատանքներ (կուբիզմ, ֆուտուրիզմ, սյուրռեալիզմ և այլն):<br>10-12.Կ.Ս.ՆԵ.3. Ստեղծել 2D, 3D և 4D երևակայական թեմատիկ</td></tr>
<tr><td>Ուղղորդող հարցադրում</td></tr>
<tr><td>Ինչպե՞ս է պատկերը ազդում կամ ներգործում դիտողի վրա:<br>Ի՞նչն է օգնում արվեստագետին չվախենալու և փնտրելու այլընտրանքային ստեղծագրծական լուծումներ:<br>Ի՞նչ է նշանակում ստեղծագործական ազատություն:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | աշխատանքներ (հորինվածքներ):<br>**10-12.Կ.Ա.ՔԱ.3.** Քննարկել և վերլուծել տարբեր ժամանակներում ստեղծված նախագծերը, դրանց թողած հասարակական ազդեցությունը: |

**Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝**

- ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով, նաև մեդիայի կիրառմամբ ստեղծագործական մտքի արտահայտիչ հաղորդման հմտություններ,
- զարգացնել գաղափարը, աշխատել թեմայի մշակման, զարգացման, առավել արդունավետ մատուցման, ճեպանկարների, էսքիզների կատարման ուղղությամբ,
- տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության,
- ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ գունանկարի, գծանկարի, քանդակի, մեդիայի համար,
- ստանալ ծավալային և հարթ պատկերներ,
- ցուցադրել ծավալային դիզայնի և քանդակի տարբեր հնարավորությունները՝ կախված նյութից,
- ստանալ հարթ և ծավալային պատկերներ՝ կիրառելով մեդիա, թուղթ, փայտ, կավ, մետաղ, կտոր, պլաստիկ և այլն,
- կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,
- կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող նյութերի մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,
- պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,
- պահպանել համատեղ աշխատելու էթիկական պայմանները,
- ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները,
- կատարել գծանկարչական և գեղանկարչական աշխատանքներ, նյութերն ու միջոցներն օգտագործել ըստ նշանակության,
- աշխատանքներում պահպանել ընտրված նյութերով աշխատելու անհրաժեշտ պայմանները,

- փորձարկել աշխատանքներում ընտրված նյութերի հնարավորությունները՝ առանց անվտանգության կանոնների խախտման,
- պատկերել շրջապատող առարկաները և բնությունը, ինքնուրույն որոշել թեման,
- կատարել ճեպանկարներ և նախանկարներ թեմատիկ հորինվածքներ ստեղծելու նպատակով,
- թեմատիկ առաջադրանքներում պահպանել համաչափության, կոմպոզիցիայի կառուցման, գունային լուծումների ճիշտ կանոնները,
- աշխատանքներում պահպանել գծային և գունային հեռանկարի կանոնները,
- դրսևորել ստեղծագործական մտածողություն և գեղարվեստական միտք,
- ստեղծել երևակայությամբ և զգացմունքներով թելադրված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես ունեցած հուզական վերաբերմունք,
- ստեղծել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրին, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերող արտահայտիչ երևակայական աշխատանքներ,
- ստեղծել արտահայտիչ երևակայական աշխատանքներ, որոնք կարող են հասարակական, քաղաքական և մշակութային զարգացումների վրա ազդեցություն ունենալ,
- կատարել վերլուծություններ և հետազոտություններ մշակութային իրադարձության նշանակալիության, կարևորության վերաբերյալ,
- հավաքել և դասակարգել մշակութային իրադարձության կամ ստեղծագործության վերաբերյալ արտահայտված կարծիքները:

| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|---|
| Հասարակական կարծիքի վրա ներգործությունը՝ կախված ստեղծագործական աշխատանքներում տարբեր նյութերի, միջոցների և նոր մոտեցումներ ընտրությունից (2D, 3D, 4D): | Թափանցիկ կառուցման եղանակի օգտագործումը առարկաների ձևի և համաչափությունները բացահայտելու համար:<br>Գծային հեռանկարչությունը որպես գեղարվեստական արտահայտչականության միջոց ճարտարապետական բնանկարում: | **Պատճառ և հետևանք**<br>Մեխանիզմ և կանխատեսում (աշխատանքի բնույթ և արդյունք կապը. նյութը, չափը, խնդիրը, թեմաներն ազդում են աշխատանքի |

| | | |
|---|---|---|
| Մասնագիտական բառամթերք և եզրույթներ:<br>Ավանդական և ոչ ավանդական աշխատանքային գործիքների և միջոցների ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա:<br>Նյութերի, գործիքների և միջոցների անվտանգ կիրառումը: | Մասշտաբային հարաբերակցության ճիշտ պահպանում:<br>Գրաֆիկական կոմպոզիցիա մատիտով, սպիտակ և գունավոր կավճամատիտներով, տուշով:<br>Ֆիգուրատիվ կոմպոզիցիաների ստեղծում:<br>Կոմպոզիցիաների ստեղծում, համամասնությունների չափազանցում, արտասովոր շարժում և այլն:<br>Ծավալային կոմպոզիցիայի ստեղծում:<br>Վերացական հորինվածքների ստեղծում բնական մոտիվների հիման վրա (2D, 3D, 4D):<br>Կազմման տարբերակներ՝ միմյանց և թղթի կենտրոնի նկատմամբ պատկերների սիմետրիկ և ոչ սիմետրիկ տեղաբաշխմամբ. կոլաժի, խառը տեխնիկայի կիրառություն, փորձարկում:<br>Միտքը ազդեցիկ, ուղղորդված ներկայացնելու նպատակով նյութի և մատուցման ձևերի ընտրություն:<br>Միևնույն թեմայի ծաղրանկարային, դրամատիկ, մարդասիրական, դեկորատիվ, տեքստային, մանկական, քաղաքական երանգավորումներ՝ գույնի, գծի, ծավալի և նյութի տարբեր կիրառություններով:<br>Միևնույն թեմայի հակառակ իմաստի արտահայտման իմպրովիզներ: | բնույթի վրա, ինչը տարբեր արդյունքներ է տալիս):<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնակություն:<br><br>**Մասշտաբ, համամասնություն, քանակ:**<br>Մասշտաբները փոխվելիս փոխվում են պատկերների չափերը, սակայն համամասնությունը պահպանվում է, ինչպես օրինակ՝ բնօրինակից պատկերման աշխատանքներում: |

| | | |
|---|---|---|
| | Միևնույն աշխատանքի իմաստային վերարտադրություններ:<br>Բնանկարի հորիզոնական պատկերն ուղղահայաց կառուցվածքում վերարտադրելու փորձեր:<br>Աշխատանքներում ջրաներկի տեխնիկայի կիրառում՝ թացովթաց թղթի վրա, չոր թղթի վրա, նախանկարով, առանց նախանկարի:<br>Ազգագրական, ժողովրդական մշակույթի թեմաների վերարտադրում ժամանակակից ստեղծագործական կառուցվածքում:<br>Փորձարկել տարբեր գրատեսակներին պատկանող տառերի և բառերի գրելաձևեր:<br>Գծանկարել կտրված, քառակող, ակադեմիական, ճարտարապետական և գեղարվեստական գրատեսակին պատկանող տառեր: պահպանել հիմնական համաչափությունները: | |

| Առաջարկվող թեմատիկա |
|---|
| ***Գլոբալ նշանակություն ունեցող նախագծեր՝ բնապահպանական, տուրիզմի, մարդու իրավունքների:***<br>***Ձեռնարկատիրական նախագիծ - ձեռնարկության լոգո, գովազդ, հանդերձանք, պայուսակ, գրիչ, թղթապանակ և այլն:***<br>***Գրական ստեղծագործության մեկնաբանություն՝ գրքի ձևավորում, թատերական ներկայացում կամ ֆիլմ, լուսանկարչական նախագիծ, անիմացիա, մուլտֆիլմ և այլն:***<br>***Ճարտարապետական կոթողների և հիշարժան վայրերի քարտեզագրում, պատկերազարդում:*** |

| Միջառարկայական կապ |
|---|

| |
|---|
| ***Բանասիրական գիտություններ*** - Հայերենով տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսքի հմտություններ՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին: Օտար լեզվով բավականին սահուն և հանպատրաստից բանավոր շփում, կարդալ և հասկանալ տարաբնույթ, այդ թվում արվեստագիտական բառապաշար պարունակող տեքստերի հիմնական միտքը, տարբեր թեմաների շուրջ գրավոր շարադրանքի հմտություն:<br>***Բնական գիտություններ*** - Վերլուծել բնական համակարգերի փոխկապակցվածությունները՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն:<br>***Հանրահաշիվ, երկրաչափություն*** - Համադրել և վերլուծել տարբեր մաթեմատիկական մոդելներ ծանոթ և անծանոթ իրավիճակներում, կիրառել տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս:<br>***Առողջ ապրելակերպ*** - Բացատրել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնել տեխնոլոգիական ձեռքբերումները՝ որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցել դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար:<br>***Ինֆորմատիկա*** - Կիրառել համալիր գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Մ4, Մ5, Մ7, Մ9, Մ10, Մ11, Մ12, Մ14, Մ15, Մ16, Մ25, Մ26, Մ33, Մ40, Մ41, Մ42 |

| **ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԱՐՐԵՐ ԵՎ ԴԻԶԱՅՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ (8 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |
| Դիզայնի սկզբունքներն ու կերպարվեստի տարրերն արտահայտող էսքիզների և ճեպանկարների կատարման | **10-12.Կ.Ս.ՆՄ.1.** Հետազոտել տարբեր նյութեր, միջոցներ, գտնել ստեղծագործական աշխատանքներ ստանալու նոր մոտեցումներ (2D, 3D |

<table>
<tr>
<td>հմտությունների ձևավորում:<br>Դասական արվեստի ստեղծագործությունները ժամանակակից մեկնաբանություններով մատուցելու վարժությունների կատարում:</td>
<td rowspan="3">4D), որոնք կարող են ունենալ հասարակական ներգործություն:<br>10-12.Կ.Ս.ՆՄ.2. Ձևակերպումներում կիրառել մասնագիտական բառամթերք և եզրույթներ:<br>10-12.Կ.Ս.ՆՄ.3. Բացատրել ավանդական և ոչ ավանդական աշխատանքային գործիքների և միջոցների ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա, ցուցադրել նյութերի, գործիքների և միջոցների անվտանգ կիրառման հմտություններ:<br>10-12.Կ.Ա.ԴՏ.1. Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով կերպարվեստի տարրերը (գծանկար, գեղանկարչություն, քանդակ, կոլաժ, մեդիա, լուսանկար և այլն):<br>10-12.Կ.Ա.ԴՏ.2. Կատարել աշխատանքներ՝ օգտագործելով դիզայնի սկզբունքերը (2D, 3D, գովազդ, տարածքի ձևավորում, պաստառ, կենցաղային իրերի ձևավորում, նորաձևություն, մեդիա և այլն):<br>10-12.Կ.Ս.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D վերացական արվեստի աշխատանքներ (կուբիզմ, ֆուտուրիզմ, սյուրռեալիզմ և այլն):<br>10-12.Կ.Ս.ՆԵ.3. Ստեղծել  2D, 3D և 4D երևակայական թեմատիկ աշխատանքներ (հորինվածքներ):</td>
</tr>
<tr>
<td>Ուղղորդող հարցադրում</td>
</tr>
<tr>
<td>Ինչպե՞ս են արվեստագետներն աշխատում:<br>Հնարավո՞ր է արդյոք միևնույն աշխատանքում ինտեգրել տեղանքը,  օբյեկտը, գաղափարը և դեկորատիվ ձևավորումը:<br>Ինչո՞վ կարող է օգնել արվեստագետին քննադատական արձագանքը:</td>
</tr>
<tr>
<td colspan="2">Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</td>
</tr>
<tr>
<td colspan="2">• ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով, նաև մեդիայի կիրառմամբ  ստեղծագործական մտքի արտահայտիչ հաղորդման հմտություններ,<br>• զարգացնել գաղափարը, աշխատել թեմայի մշակման, զարգացման, առավել արդյունավետ մատուցման, ճեպանկարների, էսքիզների</td>
</tr>
</table>

կատարման ուղղությամբ,

- տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության,
- ընտրել թեմային  համապատասխան առավել արդյունավետ գործիքներ գունանկարի, գծանկարի, քանդակի, մեդիայի համար,
- ստանալ ծավալային և հարթ պատկերներ,
- ցուցադրել ծավալային  դիզայնի և քանդակի տարբեր հնարավորությունները՝ կախված նյութից,
- ստանալ հարթ և ծավալային պատկերներ՝ կիրառելով մեդիա, թուղթ, փայտ, կավ, մետաղ, կտոր, պլաստիկ և այլն,
- կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,
- կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող նյութերի մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,
- պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,
- պահպանել համատեղ աշխատելու էթիկական պայմանները,
- ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները,
- ստանալ  ճանաչելի հարթ և ծավալային պատկերներ ու հորինվածքներ՝ ապահովելով ծավալ, տոն, տարածություն, ռիթմ և միասնականություն,
- կիրառել  գուներանգներն աշխատանքներին հուզականություն հաղորդելու համար,
- ստեղծել հորինվածքներ՝ գաղափարներն արտահայտելով կերպարվեստի տարրերի ու սկզբունքների կիրառմամբ,
- կատարել հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակներ՝ կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առավել արտահայտիչ ներկայացնելով,
- բանավոր կամ գրավոր մեկնաբանել և թվարկել կերպարվեստի տարրերն ու սկզբունքներն առաջարկված ստեղծագործություններում, դրանց ազդեցությունն ու նշանակությունը հիմնական գաղափարի վրա,
- ցուցադրել ստեղծագործական մտածողություն և գեղարվեստական միտք,

- ստեղծել երևակայությամբ և զգացմունքներով թելադրված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես ունեցած հուզական վերաբերմունք,
- ստեղծել տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրին, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերող արտահայտիչ երևակայական աշխատանքներ,
- ստեղծել արտահայտիչ երևակայական աշխատանքներ, որոնք կարող են հասարակական, քաղաքական և մշակութային զարգացումների վրա ազդեցություն ունենալ:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
| Կերպարվեստի տարրերի գրագետ կիրառումը գծանկարի, գեղանկարչության, քանդակի, կոլաժի, մեդիայի, լուսանկարչական աշխատանքներում (2D,3D, 4D):<br>Դիզայնի սկզբունքերը 2D, 3D, 4D աշխատանքներում. գովազդ, տարածքի ձևավորում, պաստառ, կենցաղային իրերի ձևավորում, մեդիա և այլն: | Առարկաների ձևի և ծավալի պատկերում գծի և գույնի փոփոխվող հաստությամբ և ինտենսիվությամբ՝ կախված լուսավորության աստիճանից և դիտողին հեռու կամ մոտ գտնվելու հանգամանքից:<br>Ազգագրական, ժողովրդական մշակույթի թեմաների վերարտադրումը ժամանակակից ստեղծագործական կառուցվածքում կերպարվեստի ու դիզայնի տարրերի և սկզբունքների կիրառմամբ:<br>Կավով կամ պլաստիլինով ծեփակերտել երկրաչափական մարմիններ, տարածության մեջ գտնել և կառուցել երկրաչափական մարմինների հիմնական կետերը և առանցքները, մշակել երկրաչափական մարմինների հարթ և սֆերիկ (գնդային, կոր, գոգավոր) մակերեսները, գտնել երկրա- | **Պատճառ և հետևանք,** մեխանիզմ և կանխատեսում<br>Աշխատանքի բնույթ և արդյունք կապը. նյութը, չափը, խնդիրը, թեմաներն ազդում են աշխատանքի բնույթի վրա, ինչը տարբեր արդյունքներ է տալիս:<br><br>**Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացահայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերությունները: Գտնել ներդաշնա- |

| | | |
|---|---|---|
| | չափական մարմինների փոխադարձ կապը տարածության մեջ, արտահայտել երկրաչափական մարմինների փոխհատման գծերը:<br>Կավով կամ պլաստիլինով ծեփակերտել գիպսե գլխի հատվածներ (բերան, քիթ, ականջ, աչք), որոշել գիպսե գլխի հատվածների հիմնական համաչափությունները, հատվածների առանցքները, դիրքը և համաչափությունները, ներկայացնել գիպսե գլխի հատվածների պլաստիկ բնութագրումները: Դիզայնի տարրերը ԴԿԱ-ում: Կատարվող աշխատանքի փուլային հաջորդականութան նկարագրություն:<br>Գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ճանաչելի պատկերների և հորինվածքների ստեղծում:<br>Գծի յուրահատկության ուսումնասիրություն. գիծը որպես հակադրության էֆեկտ ստեղծելու միջոց, գիծը որպես տարածության պատրանք ստեղծելու հնար:<br>Գույնի առանձնահատկությունների, գունահամակարգի ուսումնասիրութուն (Ի. Իտտենի գունային շրջանը):<br>Շտրիխային և երանգային գծանկարի կատարում գրաֆիտային մատիտով, ածուխով և այլն:<br>Ջրաներկի չոր, թաց և ալապրիմա տեխնիկաներով առաջադրանքների կատարում: | կություն:<br><br>**Կայունություն և փոփոխություն**<br>Կայունությունը միշտ մրցակցող գործոնների հաշվեկշիռն է: Դրա խախտումը համակարգը դուրս է բերում կայուն վիճակից, երբ բացակայում է հետադարձ կապը: Սակայն արվեստագիտական տեսանկյունից կարելի է ընկալել որպես մեկից ավել համակարգերի առկայություն միևնույն ստեղծագործության մեջ: Այստեղ մեկ գործոնի փոփոխությունը չի խախտում համակարգը, քանի որ մյուս գործոնն իր վրա է վերցնում ընդհանուր հավասարակշռությունը (գույն, գիծ, դինամիկա և այլն): |

| | | |
|---|---|---|
| | Հայ միջնադարյան մանրանկարչության հիմնական մոտիվների, տեսակների և ուղղությունների, ինչպես նաև գեղարվեստական տեքստի  և մանրանկարի գեղարվեստական պատկերում:<br>Փորձարկումներ պատկերի, նյութի, ձայնի, լույսի, գույնի միջոցով:<br>Զարդանկարների, լուսանցազարդերի և գլխատառերի կատարում, ներկայացնել  բուսական, կենդանական մոտիվների պատկերման առանձնահատկությունները՝ պահպանելով գունային երանգավորումը:<br>Մանրանկարչական դպրոցների, հեղինակներին (ծաղկողներին) բնորոշ ձեռագրերի ուսումնասիրություն:<br>Արվեստի ստեղծագործությունների վերականգնում: | |

**Առաջարկվող թեմատիկա**

***Հայկական մանրանկարչություն - Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, Գրիգոր Ծաղկող, Մոմիկ, Գրիգոր Տարոնացի:***

***Վինսենթ վան Գոգ. «Գիշերային երկինք», խճանկար, որմնանկար, բափիկ:***

***Պոլ Գոգեն - Անրի Մատիս -Մարտիրոս Սարյան - Մինաս Ավետիսյան  համադրություններ:***

***Պոլ Սեզան. նատյուրմորտներ,  նոր մեկնաբանություններ:***

***Պաբլո Պիկասո -Վազարելլի՝ ոճավորումներով անցումներ կուբիզմ, պուանտելիզմ, սյուրռեալիզմ, իմպրեսիոնիզմ:***

***Օգյուստ Ռոդեն-Պաբլո Պիկասո-Երվանդ Քոչար - Հակոբ Գյուրջյան:***

***Միքելանջելո Կարավաջիո - Վարդգես Սուրենյանց:***

| |
|---|
| *Հանրագիտարանների, գիտական, տեխնիկական գրականության պատկերազարդումներ:* |
| **Միջառարկայական կապ** |
| ***Բանասիրական գիտություններ*** - Հայերենով տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսքի հմտություններ՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին: Օտար լեզվով բավականին սահուն և հանպատրաստից բանավոր շփում, կարդալ և հասկանալ տարաբնույթ, այդ թվում արվեստագիտական բառապաշար պարունակող տեքստերի հիմնական միտքը, տարբեր թեմաների շուրջ գրավոր շարադրանքի հմտություն:<br>***Բնական գիտութուններ*** - Վերլուծել բնական համակարգերի փոխկապակցվածությունները՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն:<br>***Հանրահաշիվ, երկրաչափություն*** - Համադրել և վերլուծել տարբեր մաթեմատիկական մոդելներ ծանոթ և անծանոթ իրավիճակներում, կիրառել տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս:<br>***Հումանիտար գիտություններ***- Վերլուծել իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորել Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր: Համեմատել և վերլուծել հասարակական և քաղաքական երևույթների և գործընթացների տարբեր մեկնաբանություններ, արտահայտել հիմնավորված դիրքորոշում դրանց վերաբերյալ:<br>***Առողջ ապրելակերպ*** - Բացատրել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնել տեխնոլոգիական ձեռքբերումները՝ որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցել դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար:<br>***Ինֆորմատիկա*** - Կիրառել համալիր գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Մ4, Մ5, Մ7, Մ9, Մ10, Մ11, Մ12, Մ14, Մ15, Մ16, Մ25, Մ26, Մ33, Մ40, Մ41, Մ42 |

<table>
<tr><th colspan="2">ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</th></tr>
<tr><th colspan="2">ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ (8 ժամ)</th></tr>
<tr><th>Նպատակը</th><th>Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td>Ստեղծել իրատեսական, վերացական և երևակայական 2D, 3D, 4D աշխատանքներ:</td><td rowspan="4">10-12.Կ.Ս.ՆՄ.1. Հետազոտել տարբեր նյութեր, միջոցներ, գտնել ստեղծագործական աշխատանքներ ստանալու  նոր մոտեցումներ (2D, 3D 4D), որոնք կարող են ունենալ հասարակական ներգործություն:<br>10-12.Կ.Ս.ՆՄ.3. Բացատրել ավանդական և ոչ ավանդական աշխատանքային գործիքների և միջոցների ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա: Ցուցադրել նյութերի, գործիքների և միջոցների անվտանգ կիրառման հմտություններ:<br>10-12.Կ.Ս.ՆԵ.1. Ստեղծել 2D, 3D, 4D աշխատանքներ՝ ներկայացնելով կերպարվեստի տարբեր ոճեր (նատյուրմորտ, բնանկար, դիմանկար, քանդակ, մանրակերտ):<br>10-12.Կ.Ս.ՆԵ.2. Ստեղծել 2D և 3D վերացական արվեստի աշխատանքներ (կուբիզմ, ֆուտուրիզմ, սյուրռեալիզմ և այլն):<br>10-12.Կ.Ս.ՆԵ.3. Ստեղծել 2D, 3D և 4D երևակայական թեմատիկ աշխատանքներ (հորինվածքներ):<br>10-12.Կ.Ա.ՔԱ.3. Քննարկել և վերլուծել տարբեր ժամանակներում ստեղծված նախագծերը, դրանց թողած հասարակական ազդեցությունը:</td></tr>
<tr><th>Ուղղորդող հարցադրում</th></tr>
<tr><td>Արդյոք քննադատությունն օգնո՞ւմ է արվեստագետին:<br>Ինչպե՞ս են արվեստագետները կռահում, որ աշխատանքը հաջողված է:<br>Ի՞նչ ենք սովորում արվեստից:<br>Ինչպե՞ս են արվեստագետները տեսնում շրջապատը:<br>Կարելի՞ է արդյոք սովորել սեփական սխալներից:<br>Հնարավո՞ր է պատկերել զգացողություն:</td></tr>
</table>

| Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝ |
| --- |
| • ցուցադրել տարբեր նյութերով և միջոցներով, նաև մեդիայի կիրառմամբ ստեղծագործական մտքի արտահայտիչ հաղորդման հմտություններ,<br>• զարգացնել գաղափարը, աշխատել թեմայի մշակման, զարգացման, առավել արդունավետ մատուցման, ճեպանկարների, էսքիզների կատարման ուղղությամբ,<br>• տարբեր գործիքներով և միջոցներով հասնել առավել արտահայտչականության,<br>• ընտրել թեմային համապատասխան առավել արդյունավետ գործիքներ գունանկարի, գծանկարի, քանդակի, մեդիայի համար,<br>• ստանալ ծավալային և հարթ պատկերներ,<br>• ցուցադրել ծավալային դիզայնի և քանդակի տարբեր հնարավորությունները՝ կախված նյութից,<br>• ստանալ հարթ և ծավալային պատկերներ՝ կիրառելով մեդիա, թուղթ, փայտ, կավ, մետաղ, կտոր, պլաստիկ և այլն,<br>• պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,<br>• պահպանել համատեղ աշխատելու էթիկական պայմանները,<br>• ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները,<br>• կատարել գծանկարչական և գեղանկարչական աշխատանքներ, նյութերն ու միջոցներն օգտագործել ըստ նշանակության,<br>• աշխատանքներում պահպանել ընտրված նյութերով աշխատելու անհրաժեշտ պայմանները,<br>• փորձարկել աշխատանքներում ընտրված նյութերի հնարավորությունները՝ առանց անվտանգության կանոնների խախտման,<br>• պատկերել շրջապատող առարկաները և բնությունը, ինքնուրույն որոշել թեման,<br>• կատարել ճեպանկարներ և նախանկարներ թեմատիկ հորինվածքներ ստեղծելու նպատակով,<br>• թեմատիկ առաջադրանքներում պահպանել համաչափության, կոմպոզիցիայի կառուցման, գունային լուծումների ճիշտ կանոնները,<br>• աշխատանքներում պահպանել գծային և գունային հեռանկարի կանոնները, |

- դրսևորել ստեղծագործական մտածողություն և գեղարվեստական միտք,
- ստեղծել երևակայությամբ և զգացմունքներով թելադրված աշխատանքներ, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես ունեցած հուզական վերաբերմունք,
- ստեղծել  տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրին, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումներին վերաբերող արտահայտիչ երևակայական աշխատանքներ,
- ստեղծել արտահայտիչ երևակայական աշխատանքներ, որոնք կարող են հասարակական, քաղաքական և մշակութային զարգացումների վրա ազդեցություն ունենալ,
- կատարել վերլուծություններ և հետազոտություններ մշակութային իրադարձության նշանակալիության, կարևորության վերաբերյալ,
- հավաքել և դասակարգել մշակութային իրադարձության կամ ստեղծագործության վերաբերյալ արտահայտված կարծիքները:

| **Բովանդակություն** | **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|---|
| 2D, 3D, 4D ստեղծագործական աշխատանքներ ըստ կերպարվեստի ոճերի (նատյուրմորտ, բնանկար, դիմանկար, քանդակ, մանրակերտ):<br>Ստեղծել 2D, 3D և 4D աշխատանքներ  վերացական արվեստի տեսանկյունից՝ (կուբիզմ, ֆուտուրիզմ, | Համաչափության,  գծերի ընդհանուր դասավորության, կոմ-պոզիցիոն համաչափության, ուսումնասիրության և համեմա-տության վրա հիմնված վարժություններ և ստեղծագործա-կան աշխատանքներ:<br>Դիմագծերի ընդհանրացման  և նմանության կարողություն-ների ձևավորում:<br>Ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում:<br>Թեմատիկ նկարչություն դիտման, պատկերացման, հիշողու-թյան և գրական ստեղծագործությունների պատկերազարդ-ման ու ձևավորման միջոցով: Հաստոցային քանդակ և գե- | **Օրինաչափություններ**<br>Կատարել դասակարգումներ, բացա-հայտել պատկերվող առարկաների նմանություններն ու տարբերու-թյունները: Գտնել ներդաշնակություն:<br><br>**Համակարգեր և մոդելներ**<br>Համակարգը որպես ընդհանուր գաղա-փարով, թեմայով, մոտեցումով կատար-ված ստեղծագործությունը (ները) ներ- |

| | | |
|---|---|---|
| սյուրռեալիզմ և այլն):<br>2D, 3D և 4D երևակայական թեմատիկ հորինվածքներ: | դանկարչություն, մոնումենտալ քանդակ և որմնանկարչություն:<br>Կրկնօրինակել արվեստի որևէ գործ:<br>Հայկական ճարտարապետական հուշարձանների տիպերի ուսումնասիրություն՝ Ազատ խաչ, Եռակոնք, Քառակոնք, Բազմաբսիդ:<br>Ըստ նախընտրած նյութի՝ կառուցել ճարտարապետական կոթողի մանրակերտ:<br>Ներկայացնել արվեստի տարբեր ճյուղերում նյութերի կիրառման հնարավորություններն ու սկզբունքները:<br>Դեկորատիվ զարդաքանդակի համաչափության, հավասարակշռվածության ուսումնասիրություն, սեփական զարդաքանդակի էսքիզի կատարում և քանդակում՝ ըստ նյութերի և գործիքների  ուսումնասիրության (մոմ, պլաստիլին, կավ և այլն):<br>Ժողովրդական և դեկորատիվ-կիրառական արվեստների բնորոշ և հաճախ հանդիպող կերպարները և դրանց մեկնաբանությունը:<br>Ռեալիստական, ծաղրանկարային և դեկորատիվ կերպարների ստեղծումն ուրվագծի և բծի միջոցով:<br>Բնանկարի, դիմանկարի և թեմատիկ դեկորատիվ կոմպոզի- | կայացնելու ընդհանրական մոտեցում, որով յուրաքանչյուր աշխատանք կամ աշխատանքի մաս հանդես է գալիս որպես մոդել:<br><br>**Անհատական և մշակութային արտահայտում**<br>Ուսումնասիրել և բացահայտել գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, մշակույթի դրսևորումներ արտահայտող ուղիները, որոնցով արժևորվում և գնահատվում է  ստեղծարարությունը: |

| | | |
|---|---|---|
| | ցիաների ուրվագծային պատկերում:<br>Ուսումնասիրել արվեստի ստեղծագործությունները դրանք նոր մեկանաբանություններով ներկայացնելու նպատակով:<br>Դիմանկարի, բնանկարի և նատյուրմորտի էսքիզների, ճեպանկարների և նախանկարների կատարում երկրաչափական պատկերների կիրառմամբ (2D, 3D, 4D):<br>Դիմանկարի, բնանկարի և նատյուրմորտի էսքիզների, ճեպանկարների և նախանկարների կատարում գունային բծերի կիրառմամբ (2D, 3D, 4D):<br>Պատմամշակութային կառույցների, նորաձևության ոճերի նոր դեկորատիվ նախագծերի մշակումների կատարում (2D, 3D, 4D): | |
| **Առաջարկվող թեմատիկա** | | |
| ***Գծանկար, գունանկար, ԴԿԱ:***<br>***Թեմատիկ հորինվածքներ. մայրություն, քաղաքակրթություն, երաժշտություն, սպորտ, տիեզերք:***<br>***Հանրահայտ ստեղծագործությունների նոր մեկնաբանություններ:***<br>***Ժամանակակից արվեստ:***<br>***Օպտիկական արվեստ, փափու, հոլոգրաֆիա:***<br>***Անսովոր հեռանկարներ, հավաքածու, «Մի օր..... կյանքից», պատկերներ Հայաստանից, գաղափարներ, որոնք փոխում են աշխարհը, ասկե հատում:***<br>***Երբ հատվում են գեղեցիկն ու պատկերը:*** | | |

| |
|---|
| ***Ճանապարհորդություն, հերոսներ, հիշողություն, երազ:*** |
| **Միջառարկայական կապ** |
| ***Բնական գիտություններ*** - Վերլուծել բնական համակարգերի փոխկապակցվածությունները՝ դիտարկելով բնագիտական գիտելիքը որպես մեկ ամբողջություն:<br>***Հանրահաշիվ, երկրաչափություն*** - Համադրել և վերլուծել տարբեր մաթեմատիկական մոդելներ ծանոթ և անծանոթ իրավիճակներում, կիրառել տարածական մարմինների մասին գիտելիքները կյանքում և տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս:<br>***Հումանիտար գիտություններ***- Վերլուծել իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորել Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր: Համեմատել և վերլուծել հասարակական և քաղաքական երևույթների և գործընթացների տարբեր մեկնաբանություններ, արտահայտել հիմնավորված դիրքորոշում դրանց վերաբերյալ:<br>***Առողջ ապրելակերպ*** - Բացատրել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնել տեխնոլոգիական ձեռքբերումները՝ որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցել դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար:<br>***Ինֆորմատիկա*** - Կիրառել համալիր գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ՝ տեխնոլոգիական զարգացման և տեղեկատվության բազմազանության պայմաններում կողմնորոշվելու համար: |
| ***Կապը ՀՊՉ վերջնարդյունքների հետ*** |
| Մ4, Մ5, Մ7, Մ9, Մ10, Մ11, Մ12, Մ14, Մ15, Մ16, Մ25, Մ26, Մ33, Մ40, Մ41, Մ42 |

| **ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | |
|---|---|
| **ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ (8 ժամ)** | |
| **Նպատակը** | **Վերջնարդյունքներ** |

| | |
|---|---|
| Արվեստի ստեղծագործությունների փուլային վերլուծությունների կատարում:<br>Թեմատիկ ցուցադրությունների արդյունավետ կազմակերպում: | **10-12.Կ.Ս.ՆՄ.2.** Ձևակերպումներում կիրառել մասնագիտական բառամթերք և եզրույթներ:<br>**10-12.Կ.Ս.ՆՄ.3.** Բացատրել ավանդական և ոչ ավանդական աշխատանքային գործիքների և միջոցների ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա: Ցուցադրել նյութերի, գործիքների և միջոցների անվտանգ կիրառման հմտություններ:<br>**10-12.Կ.Ա.ՎՑ. 1.** Մենակ կամ խմբով ներկայացնել ամբողջական, ավարտուն թեմատիկ նախագծեր լայն լսարանի համար:<br>**10-12.Կ.Ա.ՎՑ. 2.** Ներկայացնել հասարակական նշանակություն կամ ազդեցություն ունեցող արվեստագիտական նախագծեր՝ խմբով կամ մենակ:<br>**10-12.Կ.Ա.ՎՑ.3.** Մենակ կամ խմբով վերլուծել և ներկայացնել հասարակական, սոցիալական, մշակութային կամ քաղաքական համոզմունքներ ներկայացնող թեմատիկ նախագծեր:<br>**10-12.Կ.Ա.ՎՄ. 1.** Վերլուծել և ձևավորել ստեղծագործական նախագծերի թեմատիկ, տեխնիկական, գեղարվեստական և նորարարական սկզբունքներ:<br>**10-12.Կ.Ա.ՔԱ.1.** Տարբեր ստեղծագործությունների վերաբերյալ ձևավորել մասնագիտական քննադատական կարծիքներ:<br>**10-12.Կ.Ա.ՔԱ.3.** Քննարկել և վերլուծել տարբեր ժամանակներում ստեղծված նախագծերը, դրանց թողած հասարակական ազդեցությունը: |
| **Ուղղորդող հարցադրում** | |
| Ի՞նչ չափանիշներով են ընտրվում ստեղծագործությունները:<br>Հարկավո՞ր է արդյոք ցուցադրել աշխատանքները:<br>Ի՞նչ է նշանակում արվեստի ստեղծագործության ցուցադրություն: | |

| | |
|---|---|
| | **10-12.Կ.Կ.ԱԴ.3.** Ստեղծագործաբար մոտենալ առօրեական խնդիրների լուծմանը: |

| **Դասընթացի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝** |
|---|
| • կատարել արվեստագիտական եզրույթների խմբավորում՝ ըստ առաջադրված չափանիշների,<br>• կատարել կերպարվեստային գործունեությանն առնչվող նյութերի մասնագիտական վերլուծություններ, թարգմանություններ,<br>• պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,<br>• պահպանել համատեղ աշխատելու էթիկական պայմանները,<br>• ճիշտ կազմակերպել աշխատանքային տարածքը, աշխատանքի բոլոր փուլերում պահպանել հիգիենայի, անձնական տարածքի կանոնները,<br>• առաջարկել խմբային և անհատական ցուցադրությունների հետաքրքիր տարբերակներ,<br>• ուսումնասիրել և ներկայացնել ցուցադրությունների և ներկայացումների տարբերակներ՝ հիմնավորելով ընտրությունը,<br>• մեկնաբանել և տեսակավորել ստեղծագործական աշխատանքները,<br>• ներկայացնել հիմնական գաղափարների արդիականությունը,<br>• առանձնացնել և ցուցադրել ստեղծագործական հնարների կիրառման արդյունավետությունը և ազդեցությունը գաղափարի փոխանցման տեսանկյունից,<br>• ընտրել և առանձնացնել աշխատանքները՝ հիմնական գաղափարի, խորհրդանիշների, թեմաների, տարրերի և սկզբունքների հիման վրա,<br>• բացատրել դիտողի վրա ստեղծագործության ազդեցության հնարները,<br>• կիրառել ստեղծագործական և քննադատական մտածողության հմտություններ,<br>• նշել այն հիմքերը և սկզբունքները, որոնցով առաջնորդվել է ստեղծագործություններն առանձնացնելիս,<br>• ստեղծել աշխատանքներ, որոնք առնչվում են կյանքի տարբեր ոլորտների և արվեստի մյուս տեսակներին, |

- մեկնաբանել կատարված ընտրությունը,
- ներկայացնել ինքնուրույն, զույգով կամ խմբով կատարաված աշխատանքները, թվարկել կիրառված տարրերն ու սկզբունքները և դրանցով արտահայտչականություն ապահովելու հնարները,
- դասակարգել աշխատանքները՝ հաշվի առնելով ընդհանուր կարծիքը և գնահատականները,
- աշխատանքներում ցուցադրել մյուս ուսումնական առարկաներից ստացած գիտելիքները,
- կատարել վերլուծություններ և հետազոտություններ մշակութային իրադարձության նշանակալիության, կարևորության վերաբերյալ,
- հավաքել և դասակարգել մշակութային իրադարձության կամ ստեղծագործության վերաբերյալ արտահայտված կարծիքները:

| Բովանդակություն | Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|---|
